



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

34 891.99 34  
U-27

625-

29/238

89-1.542-3

Մ-28

ԱՐՈՎԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 1  
ՄԻՔԱՑԷԼ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

# ԷՍՔԻԶՆԵՐ

Ս.-ՊԵՏԵՐԱՌՈՒՐԳ  
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏԳԱՐԱՆ  
1905

6 NOV 2011

ՄԻՔԱՅԷԼ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ


891.891.33

U-27

ms

# Է Ս Ք Ի Զ Ն Ե Ր

1001  
2498



Ս. ՊԵՏԵՐԱՌԻՐԳ  
 ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ  
 1905

Дозволено цензурою. С.-Петербургъ, 9 Февраля 1905 г.

„Пушкинская Скоропечатня“ Лештуковъ пер. 4.

## ԵՐԵՔ ԿՈՊԷԿ

Մի մութ, նեղ ղետնաչարկ սենեակ էր խոնաւութիւնից բորբոսնած պատերից զերեզմանային սառնութիւն էր փչում. հակատի կողմում հողէ յատակի վրայ փռւած էր մի հնամաշ, ցեխոտ խսիր, վրան մի քանի պատառոտած հագուսաներ և համարեա ուրիշ ոչինչ:

Խօրի վրայ պառկած էր մօտ 13 տարեկան մի աղայ՝ փաթաթւած ծվին-ծվին եղած վերարկի մէջ: Նրա ոտների մօտ՝ ձեռները ծնկներին յենած, զլուխը կախ՝ նստած էր մի ուրիշը:

Սենեակի գանազան անկիւններում երբեմն երևում էին փոքրիկ չարանների աչքերով մկներ, որոնք արագ զուրս էին վազում բներից և նոյն արագութեամբ ծածկւում, երբ մէկն ու մէկը հառաչում կամ հագում էր:

— ԶճԼՐ... մրմնչաց տղան:

Միւսը լուռ բարձրացաւ, աչ ոտի վրայ կաղալով մօտեցաւ, վերջրեց անկիւնում դրած կաւէ կուլան և տւաւ տղային: Տղան նստեց ու սկսեց ազահութեամբ խմել: Նա գունատ էր, նիհար, կոյր աչքերի սպիտակուցն այդ կիսախաւարի մէջ ճնշող տպաւորութիւն էր գործուծ:

— Ներսս այրուծ է... ասաց տղան՝ յետ տալով կուլան և նորից ընկաւ չոր խորի վրայ: Միւսը նստեց իր տեղը՝ յառելով հայեացքը տղայի վրայ:

Սնեակում դարձեալ տիրեց լուռութիւն: Երբեմն միայն լսուծ էր հիւանդի տնքօցը:

Կարճահասակ, կլոր մի մարդ էր ապերը. նրա փոքրիկ զլուխը բոլորովին չէր չարմարուծ մարմնին: Նա, կարծես, ուժով էր բաց պահում ձպոտտ, կարմրած աչքերը:

— Սէյրան, ախր էսօր ուտելու բան չ'ունենք, լսւեց նրա փոքրիկ, համարեա կանացի ձայնը: Տղան մնաց անշարժ:

— Վէ՛ր կաց, բալիս, դո՛ւրս դանք, Աստուած ողորմած է, կարելի է մի քանի կօպէկ հաւաքենք, հօ քաղցած մեռնելու չենք: Վէ՛ր կաց, բալիս, վէ՛ր կաց, էս քանդաւածում

որ մարդ մեռնի էլ, տիրութիւն անող չի լինիլ:

Վերջին խօսքերի վրայ տղան դանդաղ բարձրացաւ և նստեց:

— Ախր չեմ կարող, ապեր:

Ճինգ օրւայ հիւանդութիւնը նրան բոլորովին ուժասպառ էր արել:

— Մի քիչ դռչալ կաց, դուրս դանք, սիրտդ կը բացւի, էս անտէր մնացած սենեակի օդը կասես հոտած լինի. մկների հոտն էլ հօ խեղդուծ է, էստեղ սող մարդը կը հիւանդանայ, ուր մնաց հիւանդը. պառկելուց աւելի վատ կը լինի. համ էլ հօ չի լինի քաղցած մնալ, կմկմալով աւելացրեց նա:

— Հա՛, լաւ ես ասուծ:

Տղան դողդողալով սկսեց հագնել տրեխները:

— Գնանք, ապեր, սաղը վերցրո՛ւ:

Նա ոչժ գործ դնելով՝ աշխատեց ոտքի կանգնել: Գլուխը պատուեց, նա ընկաւ, նորից բարձրացաւ:

Ե՛մ, Յիսուս-Քրիստոս, դո՛ւ օգնիր,—

Սպիտակ, դուրս ընկած աչքերը դէպի առաստաղն ուղղելով՝ մրմնչաց նա:

— Փայտս տո՛ւր:

Նա ապօր փեշից բռնած՝ օրօրւելով հե-

տւեց նրան: Մի քանի քայլ հազիւ էին ա-  
րել, որ տղան կանգնեց:

— Տ՛ր, ի՞նչ կայ:

— Մի քիչ կա՛ց, գլուխս պտտում է,  
ոտներս կանես իմը չեն, ծնկներս ծալում են:

Մի խօր շունչ քաշելուց յետոյ նա նո-  
րից բռնեց ապօր փեշից, և շարունակեցին  
գնալ:

— Հիմա մի քիչ լաւ եմ:

— Ես չ'ասացի՞, որ դուրս գանք, լաւ  
կը լինես:

— Մի քիչ կամաց գնա, ապեր:

Նրանք լուռ առաջ էին գնում:

— Ինչո՞ւ ոչ մի տեղ չես մտնում:

— Ասում եմ էնպէս տեղ գնանք, որ մի  
բան տան: Այ, քիչ է մնում էն տունը, որ  
էն օրը մի աբասի տւին, էնտեղ գնանք:

— Էն շները էլի վրայ են պրծնելու,  
դժգոհութեամբ սասց տղան:

— Ծները մեզ ինչ են անելու... մի՛ վա-  
խենալ:

Նրանք ներս մտան բակը. մի քանի շներ  
ահազին աղմուկով յարձակեցին նրանց վրայ:  
Նրանք ձեռքի փայտերով աշխատում էին պաշտ-  
պանւել, բայց այդ ինքնապաշտպանութիւնն  
աւելի էր զրգուում շների բարկութիւնը: Եր

երկար կը տւէր, եթէ երկրորդ յարկից սպա-  
սաւորը չը նկատէր և օգնութեան չը դար,  
չը հալածէր շներին, որոնք այնքան ատում  
են պատառոտած շորեր հագնողներին:

Նրանք կանգնեցին բակի մէջտեղում:

Տղան վերցրեց սաղը, մի քանի անգամ  
թօլ խփեց լարերին և կարծես մեքենաբար՝  
սկսեց երգել:

Պատշգամբի վրայ երբեմն երևում էին  
գլուխներ, որոնք իսկոյն անհետանում էին:

Երգն անկանոն բարձրանում, ցածրանում  
էր. չափազանց ուժից կոկորդի երակներն ու-  
ռել էին, այտերը շառագունել, աչքերը լայն,  
անբնական կերպով չուել. երգը խեղդում էր  
նրա կոկորդում: Մի փոքր շունչ առնելով՝  
նա աշխատում էր շարունակել, մատները թօլ  
խփում էին լարերին, ծայներ հանում, որոնք  
խառնելով նրա երգի հետ՝ լալխ էին թօլլ,  
հազիւ լսելի:

Երգն ընդհատւեց. նա զուենատւեց, դո-  
ղաց:

Սազն ընկաւ ձեռքիցը, լարերը աղմուկ  
հանեցին, խլացնելով աղաչի թօլ ճիւղ:

Նա ուշաթափ ընկաւ գետին:

Վերնայարկի պատշգամբից մի ձեռք մի  
բան բաց թողեց, որը օղի մէջ պտոյտներ դոր-  
ծելով ընկաւ քարերի վրայ, տղայի մօտ:  
Երեք կոպէկանոց էր...



## ԽՐՏԻԻԼԱԿԸ

Նա փոքրիկ էր, կուրծքը նեղ, հիւանդօտ,  
մէջքը մի փոքր կռացած, արեակէզ դէմքը  
նիհար էր, երկայն քիթը ծուած դէպի բե-  
րանը, կզակը դուրս ցցւած, շրթունքները  
բարակ, կապտած. աչքերն այնքան փոքր էին,  
որ քիչ հեռւից սե դժեր էին երևում. գլխին  
սե մորթէ գլխարկ, որը այդ ծամածուած  
դէմքին բոլորովին չէր սաղում: Հագած էր  
պատառօտած բաճկոն, ոտներին լայն-լայն,  
երկար հաքերով կօշիկներ:

— Խրտւիլակ:

Հէնց առաջին օրւանից այդ մականունը  
տւին նրան. նա ընդհանուր հետաքրքրութեան  
առարկայ դարձաւ:

— Ինչպէ՞ս է անունդ, որաեղի՞ց ես—  
հարցնում էին ամեն կողմից:

— Աստ՝ «Ի պսալմ», սովորեցնում էին շրջապատողները:

Նա ապուշ, բերանը կիսաբաց, բոլորին թուլթակի նման կրկնում էր. «Ի-պսալմ»:

Ոչ ծեծ, ոչ պատիժ նրան զինւոր չը դարձրին. բոլորը համողեցին, որ նա ոչինչ չի՛ դառնալ. նրան նայելիս մարդ ակամայ ծիծաղում էր:

Նրա փոքրիկ աչքերում յաճախ արցունքներ էին երևում, որոնք ոչ պակաս ծիծաղ էին յարուցանում:

Ոչ ոքի հետ չէր խօսում. լուռ կատարում էր՝ ինչ հրամայում էին: Համարեա ամեն օր աւելում էր զօրանոցի սենեակները, օղնում խոհանոցում:

Որքան էր նա տանջել ջրի ծանր դոյլի տակ:

Պարապմունքների ժամանակ աշխատում էր խոհանոցում, իսկ հանդստութեան ժամերին նա զւարճացնում էր ընկերներին: Եւ յանկարծ...

Նա չը կար:

Ամեն տեղ փնտրել էին, բայց ոչ մի տեղ նրան չէին գտել:

Բոլորը համողւած էին, որ նա փախել է:

Ժամը 9-ից անց էր, երբ մի զինւոր, նրա թւից բռնած՝ ներս մտաւ զօրանոցը:

— Ուռւս, ուռւս, չուչելօն, չուչելօն...  
գոռալով բոլորը դուրս թափւեցին անկողիններից նրան նայելու: Նա ամբողջ մարմնով դողում էր:

— Որտե՞ղ էր, ի՞նչու է թրջւած—հարցնում էին ամեն կողմից:

Բռորն ուշադրութեամբ նայում էին նրան:

— Ի՞նչ էր կարծում, որտեղ էր.— շնեքին փակում էի. տեսնում եմ՝ շները զնում են և վախեցած, մռմռալով յետ-յետ դալիս: Զարմացայ, ի՞նչ պէտք է լինի. ներս մտայ, լուցկի վառեցի, տեսնեմ մէկը փռւած է գետնին. մօտ գնացի—չուչելօն:

— Հա, հա, հա, հա:

— Հարցնում եմ. «ինչ՞ու ես այդտեղ պառկել», ոչինչ չի պատասխանում:

— Այ սարսաղ, ինչ՞ու էիր այն ցրտումը պառկել:

— Հայրենիքի պաշտպան... հեղնելով ասաց մէկը:

— Երեւի ուզում է հիւանդանալ, որ տուն թողնեն. չէ, էստեղ էլ կը ստակես:

— Հանգիստ թողէք զրան, թողէք՝ շո-

ընդ փոխի. տեսնում էք՝ լաց է լինում,—  
ասաց ենթասպան, մի գէր, կարծիր գէճքով  
տղայ:

— Ի՞նչ լաց, ծիծաղում է, տեսէ՛ք՝ ինչ-  
պէս կը հռհռայ, ասաց մէկը՝ մատով խփելով  
նրա երկայն ըթին:

— Պառկեցէ՛ք, հրամայեց ենթասպան,—  
խակ դձև, Գալո՛ւստով, հայրենակցիդ շորերը  
փոխի՛ր:

Բոլորը պառկեցին, բայց ծիծաղը չը դա-  
դարեց, մինչև ենթասպան չը կրկնեց հրա-  
մանը՝ լռել:

Կամաց-կամաց ամեն ինչ հանդարտեց,—  
քիչ յետոյ բոլորը քնած էին:

— Կարձ, Կարձ, քնած ես:

— Հը, ի՞նչ է, այ տղայ, ինչո՞ւ չես քը-  
նում, քնաթաթախ մրմնչաց նրա կողքին պառ-  
կած զինուորը, որ նրա համագիւղացին էր:

— Քունս չի տանում, մայրս, եղբայրս,  
քոյրերս աչքիս առաջին դալիս գնում են, տես-  
նես հիմա ի՞նչ են անում, եարաք մէկէլ կ'ար-  
ժանանանք:

— Քնի՛ր, քնի՛ր, Աստուծով կպրծենք-  
կերթանք, հօ չեն մորթելու. սկիզբն է, ախուր  
է թուում, մի քիչ անցնի, կը սովորենք, լեզու-

ները կը հասկանանք. քնիր, իմ քունս էլ տա-  
նում է:

— Ձէ՛, խելքս բան չի կտրում. ախր ին-  
չո՞ւ են բերել մեզ այստեղ: Մէկ-մէկ սիրտս  
ասում է. «վերցրու դանակը, խրիր շիդեարդ  
և վերջ տուր», բայց էլի մտածում եմ—Աս-  
տուած ողորմած է, բալքի մէկէլ տեսնեմ մեր  
զիւղը... Կարօ, էս զիշերն էլ որ չ'լինի, ի՞նչ  
կանենք... Կարօ, Կարօ... քնեցի՛ր... օօօխ:

Արդէն մի քանի օր էր, որ նա պառկած  
էր հիւանդանոցում, ժամը զիշերուայ էրեքն-  
էր, լամպարը աղօտ լուսաւորում էր, բոլորը  
քնած էին:

Մահճակալներից մէկի մօտ մի զինուոր  
նստած ննջում էր:

Մահճակալի վրայ, շապիկով, կուրծքը  
բաց պառկած էր նա. աչքերը փակ էին, բայց  
նա քնած չէր:

— Մայրի՛կ... ջ՛ճը... տաք է... մնա՛ք  
բարով... մի լար... կգամ, հօ չմ'ն մորթելու...

— Կուրծքն արագ ցածրանում—բարձ-  
րանում էր. սառը քրտինքը ծածկել էր ճա-  
կատը:

— Տէ՛ք շորերս... գնում եմ:

Նա նստեց մահճակալի վրայ, սկսեց հա-  
ղալ, հաղը շարունակեց մի քանի վայրկեան,

նա թուլացած չեա ընկաւ խոտէ չոր բարձի վրայ:

Ինչո՞ւ չէ գալիս... ո՞ւր է, բժիշկն ասաց տուն ես գնալու... Կարօ, գրի՛ր... մայրիկ... գրի՛ր... ես... լաւ...

— Նա լռեց: Երբեմն կցկաուր խօսքեր գուրս էին թռչում նրա բերանից:

— Դուռը բաց, տա՛ք է... մայրի՛կ... շունչս... ծի... օ... ես էլ չեմ տեսնելու. վերջացաւ...:

Նա սկսեց հեկեկալ. դէմքը չբիօխեց, ոչ մի կաթիլ արցունք գուրս չէկաւ նրա փոքրիկ աչքերից:

— Հա՛ հա, հա՛ հա... չանկարժ ջղածգորէն հռհռաց նա... Я чучело, чучело... մայրի՛կ... մայր... իկ...:

— Մի քանի ցնցումներ, և նա մնաց անշարժ...:

Բոլորը քնած էին, ոչ ոք չբտեսաւ նրա մահը:



## ԳԱՐԵՋՐԱՏԱՆԸ

Գարնանային մի երեկոյ էր, զով, յատակ մի երեկոյ: Նրանք գուրս եկան անից: Փոքրիկ սենեակը լիքն էր ծխով. այնքան վիճել, հաչհոչել, էին միմեանց, որ երկուսն էլ զգում էին թարմանալու կարիք: Նրանք լուռ գնում էին առանց իմանալու թէ ուր: Գարեզին Սլիուներին, որ տարիքով աւելի մեծ էր երևում, միջահասակ, նիհար, նեարդային մի ազայ էր: Երկար մազերը, որոնք աւելի շատ զղզղած էին, քան գանգուր, իջնում էին մինչև ուսերը: Միւսն աւելի երիտասարդ էր, շարժուն, մի փոքր խորն ընկած աչքերում երևում էր եռանդ: Նա գեռ նոր էր վերկացել դպրոցական նստարանի վրայից:

— Մտնե՛նք գարեջրատուն:

— Մտնենք, պատասխանեց միւսը և լռեց:

Նրանք ներս մտան առաջին հանդիպած գարեջրատուներ: Դա սովորական գարեջրատուներէց էր, որոնք համարեա ամեն մի քայլափոխում պատահում են Թիֆլիզի փողոցներում:

Նրանք նստեցին մի բաւականին անմաքուր սեղանի առաջ:

— Է՛յ, մեզ երկու շիշ գարեջուր:

— Իսկոյն, — լաւեց միւս կողմից:

Նոքա լուռ, անհամբեր սպասում էին գարեջուրին:

Այդ լուռութիւնը ընդհատեց, երբ գարեջուրը բերին:

— Վերցրո՛ւ:

Նոքա լուռ վերցրին բաժակները և մի շնչով գատարկեցին. երկրորդն էլ նոյնպէս:

— Ես նախանձում եմ քեզ, Արամ — բաժակը սեղանին խփելով բացականչեց նա, — բայց ցնորքներ, ցնորքներ:

— Ո՛չ, իզուր ես քո արշինով չափում բոլորին: Նա, ով հաւատում է իւր իդէալին, ձգտում է հասնել նրան և առանց վհատելու առաջ կերթայ...:

— Կեանքի վրայ մտտների արանքով ես նայում. դու կարծում ես, որ այն, ինչ դպրո-

ցական նստարանների վրայ երեւակայում էիր, կեանքումն էլ նոյնն է:

— Մենք միմեանց չէնք հասկանում, աւելի լաւ է թողնենք. եթէ ընդունելու լինենք քո տեսակէտը, այն ժամանակ պէտք է ծալենք ձեռներս և սպասենք, թէ երբ սատանան մեզ կր տանի... կամ ինքնասպանութիւն... Իսկ իմ կարծիքով, այդպէս վարելու ընդունակ են միմիայն թուլամորթները:


— Այ՛ո, դու ճիշտ ասացիր, մենք՝ միմիանց չենք հասկանում: Է՛յ, դարձեալ երկու շիշ:

Նոցանից փոքր հեռու, պատի մօտ, մի սեղանի առաջ նստած էին մի աղջիկ և մի տղայ. տղան հաղիւ տասներեք տարեկան կը լինէր. նա ննչում էր:

Աղջիկը 18—19 տարեկան, գունատ, աչքերի տակը մի փոքր ուռած, ձեռներով յենւել էր սեղանին և աննպատակ նայում էր մի կէտի: Նա ախուր էր... նրա մօտ դրած էր տաւիղը. սեղանի վրա ընկած էր մի հնամաշ փոքրիկ ջուլթակ:

— Նայիր դրանց, դօրա հացի խնդրի զօհեր են: Գիտե՛ս ինչ է դրանց արհեստը. նրաւո՞ր, երգե՞լ — ո՛չ, այդ խաւարտակ կեանքում դրանց ձայները իրոք չեն արժանանում քնքը-

1001  
1002  
1003



Թիւնն ու զրաւչութիւնը. հազիւ թէ ամենա-  
անպէտք լսողութեան համար անգամ ախոր-  
ժելի լինին, բայց... զեղեցիկ է այդ աղջիկը:

Նա տխուր էր: Այստեղ ամեն բան լկտի,  
վատ էր. թէ՛ պատից կախած նկարները, թէ՛  
ինքը զարնչուր ծախող կինը: Այդ բոլորի մէջ  
այդ աղջիկը մի հակապատկեր էր:

Ի՞նչ ունի այդ աղջիկը, ի՞նչու է այդպէս  
տխուր — անցնում էր Արամի մտքով, — գուցէ  
նա կորցրել է նշանաձր, որը խաբել, փախել  
է նրանից, չամ գուցէ սիրելիներից մէկին:

— Վալէնտին, Վալէնտին, լսեց նրա մի  
փոքր խզած ձայնը. դու քնած ես: Տղան  
բարձրացրեց գլուխը և զժգո՛հ նայեց քրոջը:

— Ոչ որ չեկաւ, գնանք:

— Մի փոքր էլ սպասիր, գուցէ դան:

Նա դարձեալ գլուխը դրեց սեղանի վրայ  
և քնեց: Աղջիկը մնաց դարձեալ նոյն զրու-  
թեան մէջ:

— Ո՞ւմ են սպասում դրանք:

— Քէֆ անողների:

— Հարբածների՞:

— Կուզես կանչեմ, հինգ կոպէկ, և նա  
մեզ համար կերզէ:

Նա առանց սպասելու համաձայնութեան,  
ձօտ կանչեց աղջկանը:

Նա ուղեց զարթեցնել եղբորը:

— Ո՛չ, հարկաւոր չէ:

Նա հանդարտ քայլերով մօտեցաւ նրանց,  
զլխի թեթեւ շարժումով բարեկեց և լուռ սպա-  
սում էր:

— Նւազի՛ր մեզ համար:

— Ի՞նչ:

— Ինչ կ'ուզէք:

— Աղջիկը մի փոքր մտածելուց չետոյ  
կոտրաւած ուսերէնով սկսեց խռպոտ, չող-  
նած ձայնով՝

— Мої костерь...

Мы простимся на мосту...

Նա վերցրեց փողը և լուռ սպասում էր:

— Ի՞նչ ազգից էք:

— Իտալացի:

— Վաղ՞ուց է՛ ինչ Կովկասումն էք:

— Վաղուց:

— Տղան ձեր եղբայրն է:

— Այո:

— Յաճախ էք լինում այստեղ:

— Ամեն օր:

— Շատ մարդիկ են գալիս:

— Նայած օրւան. կիւրակի, տօն օրերը  
շատ են լինում:

— Դուք բոլորի համար էլ նւագո՞ւմ էք—  
մէջ մտաւ Արամը, որը լուռ նայում էր նրան:

— Այո, բոլորի:

— Բայց ի՞նչպէս էք մնում. այստեղ՝  
իհարկէ խմում, հարբում են:

— Սովորել ենք: Բայց չէ՞ որ մի բանով  
պէտք է ապրել. մենք առաջ բակերումն էինք  
նւագում և կարողանում էինք մի կերպ ա-  
պրել. այն ժամանակ հայրներս դեռ կեն-  
դանի էր:

Նրա դէմքը աւելի տխրեց:

— Մի տարի առաջ նա մեռաւ: Թաղե-  
լու համար պարտք վերցրինք. ուրեմն՝ աւե-  
լի հարկաւոր աշխատել. բացի ապրելուց՝  
պարտքի համար էլ... այժմ ստիպւած ենք ամ-  
բողջ օրը փողոցներում թափառել, այս ու այն  
բակը մտնել: Նւագում ենք, երկար նւագում,  
մեզ ոչինչ չեն տալիս, ոչ ոք չի լսում մեզ.  
Երևի կարծում են, որ մենք զւարճութեան հա-  
մար ենք նւագում... Երեկոներն ստիպւած ենք  
գալ այստեղ: Հայրս էլ էր նւագում. նա է  
մեզ սովորեցրել նւագել:

— Իսկ մեզ դ՞ուր է գալիս այս կեանքը:

— Դ՞ուր է գալիս... կարծես զարմացած  
կրկնեց նա—ինչո՞ւ պէտք է դուր գայ:

— Ուրեմն ինչո՞ւ էք մնում այստեղ:

— Մենք ուրիշ բան չգիտենք. մեր հայրն  
այս է թողել մեզ: Այստեղ լաւ է, միայն եր-  
բեմն քէֆ անողներ չեն լինում, և մենք ստիպ-  
ւած ենք լինում անգործ նստել և առանց  
փողի տուն դառնալ: Մարդ տխրում է, ըս-  
կսում է չիմար բաներ մտածել. տանտիկնոջ  
պէտք է վճարել, կերակրել...

Այդ բոպէին մի քանի կառք կանգնե-  
ցին գարեջրատան առաջ. քիչ չետոյ ներս  
թափւեցին կանայք, կիսահարբած տղամար-  
դիկ, ահադին աղմուկով եկան, մի քանի սեղան  
միացրին և նստեցին:

Աղջիկը գլուխ տուեց և մօտեցաւ եղ-  
բորը:

— Վալէնտին:

— Տէ՛ր...

— Վե՛ր կաց:

— Նա բարձրացրեց գլուխը և շուրջը  
նայեց:

— Եկան. ես չասացի, որ կը դան—  
ասաց նա ուրախացած՝ որ խօսքը կատար-  
ւել է:

— Այո՛, պատասխանեց բոլոր՝ նոյնպէս  
ուրախացած:

— Գնանք, բացագանչեց Արամը:

— Սպասի՛ր, նայի՛ր:

Զգւելի՛ է:

— Ի՛նչ յիմարն ես. նստի՛ր, նստի՛ր, մի շիշ էլ կ'իսմենք:

Մէկը մօտեցաւ դարեչուր ծախող գէր կնոջը, համբուրւեց նրա հետ և, քաշելով՝ տարաւ խմբի մօտ:

Աղմուկը քանի զնուժ սաստկանում էր:

Մի քանիսը խռպոտ ծայնով երգում էին, ոմանք զոռզոռում, հայհոյում:

Տղան և աղջիկը, կարծես՝ նոցա ուշադրութիւնը դրաւելու համար սկսեցին լարել գործիքները:

— Օհօ, դուք է՞լ այստեղ էք, ասաց մէկը տեղից բարձրանալով և շտապ մօտեցաւ նրանց՝ ու լկտի կերպով համբուրեց աղջկանը:

— Գնանք, զնանք:

Աղջիկը վերցրեց տաւիղը և տղայի հետ համարեա զրկւած անցան:

Վալէնտինը վերցրեց ջուլթակը և հետեւեց քրոջը...:

Նոքա խմում էին և միմեանց զիրկն ընկնում: Աղջիկը և տղան նւագում էին: Համ-

բուրների թիւը քանի զնում շատանում էր. կանանց ճիշը, բաժակների զնոցը, ջուլթակի և աղջկայ ձայնը խառնել էին միմեանց, և այդ ընդհանուր աղմուկի միջից երբեմն լսում էր աղջկայ երգը.

„Мой костеръ въ туманѣ свѣтитъ...“

— Անտանելի է. այդ աղջիկը սկզբում մի համեստի տպաւորութիւն թողեց, մի հակապատկեր այս բոլորին, բայց նայի՛ր, համբուրում են նրան:

— Համբուրում են, որովհետև վճարում են. ամեն բան փողով է առնւում:

Արդէն բոլորը հարբած էին:

Ջուլթակը, տաւիղը մի կողմ էր ընկած: Համբուրները ընդհանրացել էին. մինչև անդամ այն երեսային համբուրել էին տալիս կանանց, այն տգեղ, ներկւած, լկտի կանանց. նա համբուրում էր, և անազին ծիծաղ, հոմերական բրբիջ էր բարձրանում:

— Վալէնտին, այս բաժակն էլ:

Նա դատարկում էր, և ամեն կողմից կեցցէներ, խրախուսանքներ էին լսում: Գի-

նին, գարեջուրը շատ էր ազդել. հազիւ էին  
ոտի վրայ կանգնում:

Մէկը այս ու այն կողմն էր ընկնում,  
միւսը փսխում էր, մէկը երեսի վրայ փուլած  
է գետնին, չորրորդը քացով խփում էր գետին  
ընկածին:

— Ի՞նչ ես էլի նման մէջտեղը փուլել,  
վեր կաց, շան որդի:

— Ձե՛մ ուզում, չե՛մ ուզում.... գոռում  
էր նա. երևի կարծում էր, թէ զինի են առա-  
ջարկում:

Չօռ ու ցաւ ուզեց...

Մէկը գրկել էր տաւղահարին, խօսում էր՝  
համեմելով իւրաքանչիւր խօսքը համբոյրներով.  
Դա նոյն տղան էր, որը տարել էր նրան խմբի  
մօտ:

---

— Սանտանելի է, — վեր ցատկելով տե-  
ղիցը և համարեա գոռալով ասաց Արամը. —  
գնանք:


— Նստի՛ր, նստի՛ր. սրանք կեանքի հա-  
րազատ զաւակներն են, զլարճանում են: Սա  
նման չէ՞ քո երեակայածին....

— Ես գնում եմ:

— Իլլիւզիան վախենում ես կորչի՞. նա-  
չի՛ր, նայի՛ր, տարան իղէալդ...

Փոքրիկ Վալէնտինն ընկած էր աթոռի  
վրայ գունասա, մեռելի նման. նա քնած էր:

Աթոռները, մարդիկ, բոլորը խառնիխու-  
ռը թափթփուլած էին...



## ՍԵՒ ՔԱՂԱՔՈՒՄ

(Վիճակագրութեան օրերից):

Միմեանց նման ցած, խոնաւ, կեղտոտ և մուլթ սննեակների մի ամբողջ շարք էր:

Բակոււմ թափթլաւ էին խողովակներ, մեծ կաթսաներ, որոնք երկար ժամանակ բացօդեայ մնալով՝ ժանդոտել, անպէտքութեան էին հասել:

Կիսամերկ երեսաներ՝ թաթախլաւ նաւթի մէջ, մրոտ, խաղում էին ձիւթախառն ջրի հետ, որը լճացած էր բակի զանազան կողմերում:

Այստեղ ապրում էին երեք հարիւրից աւելի մարդիկ. մարդիկ, որոնք մոռացած ամեն բան, տենդային թափով չարչարում, տանջւում էին, որ պահպանեն իրանց ողորմելի դոյութիւնը:

Բակոււմ երբեմն երևում էին կանայք մինչև սրունքները նաւթի մէջ, շորերը կեղտոտ. դոյներն ուսերին շտապում էին դատարկել և նորից նոյն մեքենայական արագութեամբ դիմում որսի, հաւաքելու այն փշրանքները, որ պատահամբ թափել էին փողոցով անցկացրած խողովակներից:

— Որքան էք կարողանում հաւաքել:

— Եթէ ամբողջ օրը աշխատել, կարելի է ութից մինչև տասը դոյլ, — պատասխանեց մի երիտասարդ կին, որի գէմքի զեղեցիկ զրծերը կեղտի տակ թազցրել էին իրանց զրաւութիւնը:

— Ծախում էք:

— Այո:

— Քանիսով:

— Զոյգը վեց կոպէկ:

— Վեց կոպէկ:

— Այո, պատասխանեց նա և շարունակեց մրգել բրդի կտորի վրայ հաւաքւած նաւթը, որ անզուշութեամբ թափել էր տակաւի մօտ:

Դռնապանն ինձ պէտք է առաջնորդէր սենեակից սենեակ, որոնց մուտքը խափանուած

էր միմեանցից տախտակի պատերով: Առաջին դուռը բացելուց՝ ապականւած օդի մի դարշելի հոսանք դուրս խուժեց սննեակից. մի վալրկեան տատանւեցի և ապա ներս մտայ:

Մէկը պառկած էր մի խարխուլ, մերկ տախտի վրայ. մօտ քառասուն ու հինգ տարեկան, կարմիր դէմքով, ուռած շրթունքներով մի մարդ էր: Բերանը կիսաբաց նա քրնած էր:

Միւս անկիւնում, մերկ յատակի վրայ պառկած էր մի կին, զլուխը սպիտակ, բաց կեղտոտ, սևացած թաշկինակով փաթաթւած, ուռած աչքերով, ծախ աչքի տակը կապտած:

Իմ մտնելուց նա բարձրացրեց զլուխը, մի ինչ որ բան փնթփնթաց քթի տակ, նորից նայեց և փակեց աչքերը:

Պատառոտած զգեստներ, ոսկորներ, կեղտոտ ամաններ, փայտէ զղալներ—բոլորը խառնիխուռը թափթփած էին:

Տախտի մօտ լճացած էր մի դարշելի հեղուկ, որին նայելիս մարդու ներսը տակն ու վրայ էր լինում, բերանը շրջակալում:

Ես աշխատում էի չ'նայել:

Խեղդելու չափ ծանր էր օդը:

— Ի՞նչպէս է ձեր ազգանունը:

Ինձ ոչ ոք չ'պատասխանեց:

— Ուրե՞ր են սրանք,—հարցրի դրձապանից, որ լուռ կանգնած էր մօտս:

— Ձ.... ով

— Քանի՞ տղամարդ կայ:

— Մէկ մարդ է, մէկ կին:

Ես նշանակեցի և շտապեցի դուրս գալ:

— Լաւ սլէսար է, ամա ինչ անես, որ խմում է—մի օրումը մի շաբաթւայ աշխատածը փչացնում. էն էլ կինն է. նա էլ մարդուց պակաս չի խմում:

Բոլորն էլ միմեանց նման, ամեն տեղ նոյն կեղտոտութիւնը, նոյն խոնաւ, բորբոսնած պատերը:

44-րդ սենեակը քիչ էր տարբերոււմ միւսներից:

Պատի տակ, ցնցոտիների մէջ փաթաթւած, պատկած էր մի ձերունի, նիհար, քունքի ոսկորները դուրս ցցւած: Կուրծքը անկանոն բարձր ու ցած էր անում, քրտինքը ծածկել էր նրա դալկացած դէմքը:

— Ձեր ազգանունը.—հարցրի մի երիտասարդ կնոջից, որը թողել էր կերակուրը, փայտէ զղալը ձեռքին հարցական հայեացք էր ձգել վրաս:

— Ձեր ազգանունը.—կրկնեցի ես:

— Ինչի՞ համար է:

Ես հանգստացրի:

— Կ... ով:

— Բանի՞ սղամարդ:

— Երկու:

— Կի՞ն:

— Մէկ:

— Երեխան:

— Զորս:

— Փոքր են:

— Այո:

— Ո՞վ է այս ծերունին:

— Ամուսնուս հայրը:

— Վաղո՞ւց է հիւանդ:

— Վաղուց:

— Բժիշկ գալի՞ս է:

— Բժշկի կարիք չը կայ... նա կ'մեռնի...

— Կամայ. — զգուշացրի ես:

— Նա չի լսում:

Ես շարունակում էի մի սենեակից միւսը մտնել. ամեն տեղ նոյն ապականւած օդը, մարդիկ թափթփւած միմեանց վրայ...

Իռնապանը չէր մոռնում ամենքին էլ ասել, որ վաղը վարձի օրն է, թող պատրաստեն:

— Որքա՞ն են վճարում ամսական:

— Էնպէսը կայ հինգ, մի քանիսը վեց

մանէթ. ինչ զօռով, ի՞նչ չարչարանքով ենք փող առնում. աղքատ մարդիկ են, սաղ օդը չարչարւում են ու էլի էն են ու էլի էն:

Ես կանգ առայ մի փակ դռան մօտ:

— Ո՞վ է ապրում այստեղ:

— Տաս—տասներկու հոգի:

Նայեցի պատուհանից. մի փոքրիկ սենեակ էր, յատակի վրայ թափթփւած կեղտոտ անկողիններ:

— Տասներկու մարդ է ապրում այստեղ:

— Տասնուհինգ էին, երեքը հայրենիք են

դնացել:

— Ոչ մէկի ազգը չ'գիտե՞ս:

— Կարապետով—երկար մտածելուց յետոյ ասաց դռնապանը:

Անցանք:

— Ձեր ազգանունը—հարցրի սենեակի դռանը նստած մօտ քսանուվեց տարեկան տրդամարդուց, որի ցանցառ, դեղնազոյն մօրուքը խառնւելով կեղտի, մրի հետ, մի անորոշ գոյն էր ստացել: Աչքերում ինչ որ մի թախիծ կար, որ դժւար էր յօգնածութեան թէ վշտի վերադրել:

Շորերը կեղտից փայլում էին:

Նա մի բան էր շինում:

— Ձեր ազգանունը—կրկնեցի ես:

— Մ... է՛վ—պատասխանեց նա առանց նայելու ինձ:

— Քանի՞ տղամարդ կայ:

— Մէկ:

— Կի՞ն:

— Մէկ:

— Երեխայ:

— Նա բարձրացրեց գլուխը, նայեց ինձ. մի կաթիլ արցունք զողալով գլորւեց նրա յոգնած աչքերից:

— Մէկը կայ... բայց այսօր էլ չի լինիլ...

— Ի՞նչպէս:

— Տեսնո՞ւմ էք... յաւիտենական բնակարան եմ պատրաստում նրա համար. նա ցոյց տւեց մի փոքրիկ, դեռ չ'վերջացրած դադադ:

— Դադան՞դ էք շինում:

— Որդուս համար է:

Նա լուռ շարունակեց մեխել վարդագոյն կտորը դադադի վրայ:

Ես շտապեցի հեռանալ:



## Ն Ո Ր Դ

Ծովը մրրկում է, ալիքները զրկում են միմեանց, մի դառնում, զարկում ավերին: Քամին սուլում է, կատաղած ալիքները մորնչում, զարկում են ժայռերին, քայքայւում, փոշի դառնում...

Ափին կապւած նաւակները տարուբերւում են, սօձւում. կայմերը քամուց հառաչում, ճռռում...

Ճեղհեաէ նա թուլացաւ. բարձր պահած գլուխը կախ ընկաւ: Անյոյս նա նայում էր ավին... Նա դադարեց լողալուց, ոչժերը դաւաճանեցին նրան, կոխը ընդհատւեց...

Ալիքի մի նոր հոսանք նրան շարտեց դէպի ավիր, մի աղօտ յոյս փայլեց նրա փոքրիկ, կլոր աչքերում, նա նորից սկսեց կռւել, նա մօտեցաւ... մօտ է, չանկռտում է ավիր... Վշշալով ալիքը նորից ետ գնաց և տարաւ նրան իւր հետ...


Ես լսում էի նրա փոքրիկ սրտի զարկը՝  
աչքերի մէջ մի սարսափ կար, վախ՝ շուտա-  
փոյթ մահւան առաջ: Ինձ թւաց, թէ նա ու-  
զում է ճշալ, օգնութիւն կանչել...

Ալիքները խաղում էին այդ փոքրիկ  
կեանքի հետ, մօտեցնում ափին և ծիծաղելով  
ես դառնում, տանում կուելու... Վերջին ոյ-  
ժերը շատուեցին: Ես տեսայ՝ ինչպէս նա մե-  
ռաւ: Ալիքը ծածկեց նրան, նա սուղեց. մի  
փոքր յետոյ երևաց, նորից սուղեց և էլ չե-  
րևաց...

Ծովը շարունակում է մռնչալ. ալիքները  
տարուբերում են, վայրենի երգեր հիւսում,  
կայմերը ճռնչում են, հառաչում... Նորդը յու-  
սահատ վշում...

Ես ծովափում երկար կանգնած նայում  
էի այն կէտին, որտեղ վերջին անգամ գոռ ա-  
լիքների մէջ սուղեց այն փոքրիկ շունը:

Նովորոսիյսկ 1901 թ.



## Գ Ա Ն Գ Է

Մի՞թէ սա ապրել է, սա, որ այժմ մո-  
խրաման է: Մի՞թէ խօսում, մտածում էր:  
Ի՞նչ սրբապղծութիւն...

Այնտեղ, որտեղ ուղեղն էր, այժմ ծխա-  
խոտի աւելցուկներ, մոխիր, կիսայրւած լուց-  
կիներ...

Այսպէս էր մտածում Ռուբէն Գէորգեանը՝  
նստած իւր ընկերոջ սենեակում, սեղանի վրայ  
դրած դանդի դիմացը:

— Դու ուզում ես տարօրինակ երևալ  
և ամեն չիմարութիւն քեզ թոյլ ես տալիս,  
դիմաւորեց նա ընկերոջը, որը զարմացած  
այդ անսպասելի յարձակումի վրայ՝ մնացել էր  
դռներում:

— Ի՞նչ է պատահել...

— Սա կատարեալ խելագարութիւն է:  
Կորցրու այդ դանդը:

— Յիմար: Ես էլ կարծեցի, թէ մի բան է պատահել:

— Հեռացրո՛ւ:

— Գժևե՛լ ես, ի՞նչ է. զա նւէր եմ ստացել:

— Խնդրում եմ վերցրու, դիր մի ուրիշ տեղ, այնպէս, որ ես չ'տեսնեմ:

— Կարծեմ նա քեզ չի՞ խանդարում:

— Ոչ, խանդարում է, որտեղ նայում եմ՝ աչքիս առաջն է, շարունակ ինձ է նայում:

— Ի՞նչ կատարեալ յիմար ես:

Գանգը դնելով անկիւնում՝ կլոր սեղանի վրայ, ծիծաղելով դարձաւ նա Ռուբէնին— հիմաչ հանգստացա՛ր:

— Ձէ՛ որ նա էլ ապրել է, մտածել, տանջւել: Իսկ դու մոխրաման ես դարձրել:

— Յիմարու թիւններ. իսկ այժմ ոչ ապրում է, ոչ մտածում և ոչ էլ տանջւում:

— Տղայ՛ց, նեարդերս սաստիկ լարւած են. այս շաբաթ դասախօսութիւնների էլ չեմ կարողացել գնալ. չեմ կարողանում, հիւանդ եմ:

— Եկ կլինիկան, կ'նայենք:

— Շատ բան ես հասկանում:

— Պրօֆեսսորը կ'նայի:

— Քեզ էլ, քո պրօֆեսսորին էլ... Այսօր ես պէտք է քեզ մօտ դիշերեմ, տանտիկնոջս եր-

կունքը սկսել է, ամուսինը խնդրեց, որ այս դիշեր ընկերներինցս մէկի մօտ գնամ... Ամաչում է: Ձեմ հասկանում՝ ի՞նչ ամաչելու բան կայ... Տանտիկինդ հօ դէմ չի՞ լինիլ:

— Ձէ, բան չի ասիլ. բայց ես աւելնորդ վերմակ չ'ունիմ:

— Գիտեմ. կ'փաթթւեմ վերաոկուիս մէջ, բարձերից մէկը կ'վերցնեմ և այս բազմոցի վրայ կ'պառկեմ:

— Այսքան ժամանակ է ինչո՞ւ չէիր երեւում:

— Որովհետեւ ջհանդամի ծաւրին ես սենեակ վարձել: Ի՞նչ էն ասա՝ ուտելու բան չ'ունի՞ս, այսօր ես չեմ ճաշել:

— Ինչո՞ւ:

— Պարզ է...

Գոռաց նա նեարդային կերպով՝ վերցատկելով տեղից և սկսեց անց ու դարձ անել սենեակում:

— Հիմաչ ինքնաեռը կ'բերի...

Ժամը 1-ից անց էր, երբ նրանք լոյսը հանդրին և պառկեցին:

— Իաս չէ՞ս գտել:

— Իեռ ոչ:

— Կարծում ես, թէ գտնելո՞ւ ես:

— Անպայման:  
— Գնի՛ր... քնի՛ր...

«Ես էլ ապրում էի, մտածում, զգում, բայց այժմ մոխրամանի է փոխել իմ գլուխս: Մխախտտի աւելցուկներ, լուցկիներ, կիսայրևած սև գլուխներով, մոխիր...»

Նա ասաց, որ ես ոչ մտածում և ոչ էլ զգում եմ: Տեսնում ես, աչքերս ի՞նչպէս խորն են ընկել: Ես շատ եմ տանջւել, թէ՛ այդտեղ, թէ՛ այս կեանքում, ուր մտածում էի հանգիստ գտնել: Հողի տակ, երբ ես նեխւել ու կամաց, կամաց ինքս էլ հող էի դառնում, երբ որդերը վերջին անգամ մնաք բարով ասացին ինձ, մենակ թողին, հեռացան, երբ ինձանից միմիայն ոսկորներ էին մնացել, երբ ես դադարել էի տանջւելուց—լսեցի, որ քանդում են գերեզմանս. քանի զնում աւելի էին մօտենում, մօտ, աւելի մօտ...

Ես ուզում էի նչայ, ասել, որ գերեզման է, ես ուզում էի գոռալ... ոսկորներս խփւում էին միմեանց, չխկչխկում... Իսկ վերեւից փորում էին, հա փորում... Մի հարւած էլ զըլխիս մօտ... Ես զգացի դրսի թարմ օդը:— «Գերեզման է եղի» լսեցի գերեզմանափորի

կոպիտ ծայնը և զգացի, որ մի կոպիտ բան կպաւ զլխիս...

Դրանից չետոյ ես ոչինչ չեմ չիշում: Երբ ուշքի եկայ՝ զգացի, որ արագ, շատ արագ սլանում եմ... Յետոյ ինձ բերին այստեղ:— Գիտե՞ս, քեզ համար ի՞նչ ընծայ եմ բերել կովկասից:— Ասաց ծիծաղելով մէկը իմ այժմեան տիրոջը՝— «գանդ»—

Նետաքրքիր է, նայեմ... Նորա սկսեցին դիտել, երկար նայում էին, ես անհամբեր սպասում էի, թէ ի՞նչ են անելու:— «Լաւ օրիժիւնալ մոխրաման կ'ըլինի, նայիր, վերի մասը բարձրանում է:» Ասաց իմ այժմեան տէրը և դրեց սեղանի վրայ:

Սրա մօտ շատերն են գալիս, իմ հասցէին մի քանի խօսք շարտում ու կատարեալ անուշադրութեան մատնում... Ես լուռ տանջւում էի, ես զգում էի, որ նրանք ինձ չեն հասկանում և չեն էլ կարող հասկանալ, ես հաւատում էի, որ կ'գաս դու... Չ'զնաս այստեղից, մնա՛, մնա՛ ինձ հետ... Դու չ'գիտես՝ ես ո՞վ եմ... ո՞չ... Ես նա եմ, որին դու փնտրում ես:»

Ես լուռ հետեւում էի, թէ ի՞նչպէս նրա ծնօտի ոսկորները խփւում էին միմեանց, խօսքեր կապում՝ անախորժ հնչող ծայներով:

«Մենք հեռու էինք միմեանցից, մենք  
չ'հանդիպեցանք. բայց ես միշտ սիրել էմ քեզ...  
Ես ասնչուում էի քեզ հանդիպելու տենչով:»

Նա լռեց: Ես աշխատում էի չ'նայել,  
բայց հայեացքս անթարթ բեեռւած էր նրա  
վրայ:

«Չ'զնաս, չ'զնաս,....»

Նորից լսեցի նրա ցնցող ձայնը:

«Մօտեցրու ձեռքդ, շոշափիր ճակատս.  
տեսնո՞ւմ ես այդ փոսը, շոշափի՛ր, աւելի խորը,  
մի վախենա. նա դադարել է ցաւելուց...  
Զգո՞ւմ ես, դա կապարէ զնդակ է... Ես շատ փնտ-  
րեցի, բայց չ'գտայ քեզ... Ես վերջ դրի իմ  
կեանքին... Չ'զնաս... չ'զնաս:»

Նրա Վրէքերի խորշոմների մէջ ես տեսայ  
արցունքներ, որոնք աղբիւրի պէս թափւում  
էին նրա խոր, փոս ու մութ աչքերից: Նա  
հառաչեց և բերանի լայն, մութ բացւածքից  
սկսեց ծուխ դուրս դալ... Գանգը չանկարծ  
լուսաւորւեց, ես աւհամայ փակեցի աչքերս:  
Զորս կողմը լուռ էր. ոչ մի շոշուկ: Ես բացի  
աչքերս, լոյսի մէջ մի ինչ-որ անորոշ բան  
թռթռում էր, կամաց, կամաց նա փոխւեց...

Այդ կախարդական լոյսի մէջ ես նկատե-  
ցի մի դէմք, մռայլ, ճնշւած... Շաղանակագոյն,  
ալիքածև մազերը թափւել էին թիկունքի

վրայ: Մռայլ, թախծով լիք աչքերը ուղղւած  
էին ուղիղ աչքերիս: Նա գունատ էր... Ար-  
ցունքի մի դոհար կաթիլ թռթռում էր նրա  
արտեանունքների վրայ:

— «Չ'զնաս, չ'զնաս»... շնչաց նա գու-  
նատ շրթունքների միջից՝ պարզելով փոքրիկ  
ծիւնի նման սպիտակ ձեռները ինձ:

Այդ ձայնը չիշեցրեց ինձ մի հին մո-  
ռացւած մելօդիա, որը շարունակ մութ, անո-  
րոշ ձայներով հնչում է հոգուս մէջ: Ես վա-  
ղեցի դէպի նա. բռնեցի ինձ պարզած ձեռ-  
ները...

— Ես գտայ քեզ... գտայ...

Զգացի, որ շրթունքներս հպւում են մի  
ինչ-որ սառը, անկենդան առարկայի: Սար-  
սափած՝ ես ետ քաշւեցի... ձեռքի կմախք էր,  
որը ես սեղմել էի շրթունքներիս: Նա անշարժ  
կանգնած էր. նայում էր ինձ և ժպտում: Ես  
հազիւ էի շնչում, լսում էի սրտիս զարկը, նա  
թուլանում էր, նւաղւում:

— Ո՞վ ես դու... հազիւ կարողացայ  
արտասանել ես:

— «Նա... Սնունս Գանգէ»:

— Գանգէ:

— «Գանգէ»:

Արձագանքի նման կրկնեց նա և լռեց:

— Դու մի ցնորք ես... խաբուսիկ մի պատկեր... դու չ'կաս, չես ապրում:

— «Եթերում»:

— Ինչո՞ւ թողիր եթերը:

— «Ես քեզ սիրում եմ»:

— Դու չես ապրում:

— «Քո հոգու մէջ»:

— Ի՞նչ ես ուզում ինձանից, ինչո՞ւ եկար ինձ տանջելու:

— «Երջանկացնելու... Եկ ինձ հետ, այդտեղ վատ է, դու կ'կորչես, կեանքը կ'ձրէ քեզ իւր պտոյտներէ՛ մէջ, դու կայլանդակես: Իզուր մի փնտրիլ այդտեղ, Եւայի աղջիկների մէջ, դու չես գտնելու նրան. նա կայ, նա ապրում է, բայց ոչ այդ ճահճում, այդտեղ նա կ'նեխւէր, ինչպէս բոլորը, նա ապրում է քո հոգում, քո երեւակայութեան մէջ:

Գանդէն մեռել է. նա գոյութիւն չ'ունի, նա ապրում է միմիայն քեզ համար, նա բոնն է, քո մտքի, քո հոգու ցնորքը, քո ստեղծած կոյսը, նա չ'կայ, չ'կայ... նա «ես եմ»... Ես քեզ սիրում եմ, մենք զրկած միմեանց կ'սլանանք անհուն, ջինջ եթերում, աստղերը կ'ժպտան, հրեշտակները մեղեդիներ կ'երգեն,

դու կ'մոռանաս այդ ջնջին, մանր, կոպիտ կեանքի հոգսերը...

Լոյսը բացւում է: Մարդիկ կ'զարթնեն, կ'վիտան, ինչպէս սողուններ, դու կ'կորչես նրանց մէջ, կայլանդակես: Թող այդ բոլորը, ե'կ, քո Գանդէն կանչում է քեզ... Սիրում է... Սպասում է... Սիրում է... Սի... ր... ու... ու... ու... է... մէ... է... է...»: Օդի մէջ երկար բեկբեկում էին նրա ձայնի ելեէջները, հետզհետէ նսեմանում, մեռնում, կորչում...

— Տար... տար ինձ:

— Վերջապէս մենք գտանք միմեանց:

— Ես քեզ սիրում եմ... սիրում... վաղուց... վաղուց... Մեր շրթունքները միացան... Ես նորից զգացի սառնութիւն, ցնցոց մեռելային սառնութիւն, բացի աչքերս... Գանդն էր՝ առանց ջերմութեան, առանց կեանքի:

Երբ ուշքի եկայ, նա այլևս չ'կար: Երկար սրտատրոփ ես նայում էի այն կէտին, որտեղ նա էր... չ'կար... սիրտս ճմլւում էր:

— Ո՞ւր է Գանդէն:

Յուսահատ ձչացի ես:

— Ես այստեղ եմ:

Ծնօտի ոսկորները խփւում էին միմեանց և խօսքեր կապում:

Ես դողում էի... Գանգր կախւած էր օդի  
մէջ, աչքերիս առաջ....

— Ո՛ւր է նա... Գանդէն:

Նա լուռ էր, ոչ մի ձայն: Ամեն տեղ մե-  
ռելային լուռթիւն էր տիրում:

— Գանդէ... Գանդէ....

— Ես այստեղ եմ...

Գանգր նորից լուծաւորեց, այդ լոյսի  
մէջ նորից երևաց նա, աւելի դունատ աւելի  
դժգոյն... ես վազեցի դէպի նա.....

— Է՛յ, վիր կաց, ժամը Զ-ն է:

1903 թ. Մոսկւա



## ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Ամեն տեղ նոր տարւայ առթիւ պատ-  
րաստութիւններ էին տեսնում, իսկ մեր տանը  
ամեն բան նոյնն էր: Նոր տարուն մենք զի-  
մաւորեցինք՝ ինչպէս սովորական օրերին: Ես  
պառկեցի և աշխատում էի շուտ քնել, որ այդ  
տաղտկալի գիշերը շուտ անցնի, բայց երկար  
ժամանակ ես չէի կարողանում քնել: Իմ ու-  
ղեղը գեղեցիկ հեռապատկեր էր ստեղծել:  
Մայրս առաջին, անգամ երկար խնդրելուց յե-  
տոյ, թոյլ էր տւել զնալ մեր մօտ հարուստ  
ազգականի մօտ՝ շնորհաւորելու նրանց նոր  
տարին: Ես ինձ շատ երջանիկ էի զգում...

Կամաց—կամաց ես սկսում էի թմրել,  
աչքերիս առաջ սկսեցին վխտալ լոյս կէտեր,  
նրանք մերթ մեծանում, մերթ փոքրանում  
էին. յանկարծ նրանցից մէկը կուլ էր տալիս

բոլորին, մեծանում զանազան ձևեր էր ստանում, ես աւելի ամուր էի փակում աչքերս, որ անհետանան, կորչեն այդ լոյս կէտերը, բայց նրանք աւելի էին խտանում, աւելի արագ պատում աչքերիս առաջ:

Ես երբ զարթնեցի՝ արգէն լոյս էր, մայրըս, քոյրերս ոտի վրայ էին:

— Ինչո՞ւ ինձ չ'զարթեցրիք, դժգոհութեամբ ասացի ես և արագ քսկսեցի հագնել նոր շորերս, որ դեռ երեկոյեանից զրել էի անկողնուս մօտ: Փայլեցրի կօշիկներս, չ'նայած, որ կօշկակարը կարկատելուց չետոյ սրբել էր, բայց ինձ թւաց, թէ լաւ չէին փայլում: Հագնեաժ պատրաստ էի, մայրս համբուրեց ինձ, քոյրերիս, ցանկացաւ երկար, երջանիկ օրեր: Այժմ էլ չիշում եմ՝ նրա շքեթունքները դողում էին, ծայնը բեկբեկում, կարծես ուժով էր սեղմում արցունքները:

— Մայրիկ, վաղն էլ նոր շորերս եմ հագնելու:

— Վաղն էլ, միւս օրն էլ, հանգստացրեց ինձ մայրս:

— Մայրիկ, ինչո՞ւ ինձ համար զլխարկ չես առնում՝ տես՝ ի՞նչպէս հին է, ի՞նչպէս գնամ, ամօթ չէ՞, Գարեղինը կ'ձիծաղի ինձ վերայ:

Նա ոչինչ չ'պատասխանեց, յանցաւորի նման կախ զցեց զլուխը և աշխատեց աննրկատելի կերպով սրբել աչքերի մէջ դողացող արցունքը:

— Ի՞նչ մեծ բան է. մի զլխարկ առ, է՛լի:

— Առնելու եմ... կ'առնեմ, դեռ լաւն է:

— Հա՛, լաւն է, մի տես... ամօթ չի՞, ես ո՞նց գնամ:

— Հօ զլխարկով չե՞ս սննեակ մտնելու: Ես հաշուելով հին զլխարկի հետ՝ դուրս եկայ տնից:

— Չո՛ւշանաս, չարութիւն չ'անես, կանչեց մայրս ետեւիցս:

— Ոչ, ոչ, մայրիկ...

Ես արգէն փողոցումն էի, ցուրտ էր: Ինձ թւում էր, որ բոլորը նայում են ինձ, ծիծաղում իմ զլխարկի վերայ: Նոր շորերիս հետ հին զլխարկս ինձ անտանելի էր թւում: Ես արագացրի քայլերս և աշխատում էի աննկատելի անցնել: Յանկարծ ես չիշեցի Սերգօյին, նա էլ միշտ պատառոտաժ, հին է հագնում, ոտաբոբիկ: Նա հայր ունի, բայց հայրը հարբում է, ծեծում նրա մօրը, Սերգօ

չին: Աչքերիս առաջ պատկերացաւ նրա մայրը, գունատ նիհար, աչքերի մէջ մի ինչ-որ թախիժ, թէ՛ ձանձրոյթ կար, որը իմ մէջ միշտ խղճահարուժիւն էր զարթեցնում: Նա միշտ հազում էր:

Յուրա էր: Ես սկսեցի աւելի արագ քայլել, զողում էի, լատամներս զարնւում էին միմեանց, բայց ես շարունակում էի զնալ:— Գիչ է մնում՝ կամուրջը կ'անցնեմ, մի քիչ տեղ էլ ու նրանց տունն է, նրանք... նրանց տունը... արդեօք՝ ի՞նչ են ընծայելու ինձ... նրանք հարուստ են, շատ հարուստ...

Կամուրջի վրայ ցուրտը աւելի զգալի դառաւ, ցուրտ քամին թափանցում էր միմեանց նսկորներս... Եթէ վերարկու տան,... վերարկու, ոչ, ոչ, նոր տարուն խաղալիքներ, քաղցրեղէն են տալիս... գլխարկ էլ չեն տալ...

Նորից չիշեցի գլխարկս, որից ես ոչ մի կերպ չէի կարողանում ազատել—եթէ քամին տանի, այո, այո, ի՞նչ լաւ կ'լինի... նորը կ'առնեն: Ես բարձրացրի այնպէս, որ հազիւ էր կանգնում գլխիս վրայ: Անհամբեր սպասում էի, որ՝ ահա քամին կ'խլի, գլխիցս կ'թռցնի, կ'ձգի ջուրը, ու ես կ'ազատւիմ այդ զզւելի գլխարկից, այն ժամանակ ստիպւած կ'լինեն նորը առնել: Կամուրջը վերջանալու վրայ էր,

բայց նա դեռ գլխիս էր, ես մինչև անգամ վորձեցի մատով խփել, ընկաւ դետին և մնաց անշարժ, մի վայրկեան սպասեցի, բայց նա չամառուժեամբ կպած էր դետնին... կարծրելով ես կռացայ և վերցրի: Ինձ թւաց, թէ բոլորը հասկացան իմ զիտաւորութիւնը...

— Ի՞նչ ես ոտի տակ ընկնումս...

Ես վախեցած բարձրացրի աչքերս: Մի բարձրահասակ պարոն էր որ խփեց ինձ և արագ հեռացաւ մի բարկացած հալեացք ծրդելով ինձ վրայ:

Ես շարունակեցի ճանապարհս: Արդեօք՝ ի՞նչ կ'ընծայեն, խաղալիքներ, քաղցրեղէն... բայց եթէ գլխարկ կամ վերարկու տան: Նրանք շատ, շատ, հարուստ են, Գարեգինը երբէք կարկատահ շորեր չի հագնում, վերարկու ունի, գլխարկներ...  


---

Նրանք դեռ նստած թէյ էին խմում, էրբ ևս մտայ սեղանատուն:

— Ի՞նչպէս կապտել է...

— Յո՛ւրտ է: ॥

— Ինչո՞ւ վերարկու չես հագել:

— Խեղճ տղայ, բոլորովին սառել է...

ձեռնոցներ ինչո՞ւ չես հաղել, արորի՞ր, արորի՞ր ձեռներդ:

Ես շփոթեալ չ'գիտէի՝ ինչ անել... մեքենաբար սկսեցի արորել ձեռներս, ժպտում էի և այս ու այն կողմը նայում: Այտերս վառւում էին... լուռ նստած էի:

— Այս ցրտով ի՞նչպէս կարելի է երեխայ դուրս թողնել, չեմ հասկանում, ասաց սղոթահանուհիս՝ մի բաժակ թէյ դնելով առաջս:

— Ծնորհակալ եմ... Ես արդէն խմել եմ, Կարմրելով ասացի ես:

— Ոչինչ, մէկն էլ մեղ ծօտ խմիր...

Նրանք շարունակեցին ընդհատուած խօսակցութիւնը: Ես լուռ էի, բայց ոչինչ չէի հասկանում... «Ի՞նչ են ընծայելու», — այդ միտքը մեխի նման ցցել էր գլխումս և էլ ուրիշ ոչինչով չէր ուղղւած դրադէլը:

Սեղանի վրայ դրած էին արկղներ, գանազան փաթեթներ... Ես մի վախկոտ հայեացք ձգեցի նրանց վրայ և նորից կախ զցեցի գլուխս: — Ի՞նչ կայ արդեօք նրանց մէջ... ձրն է իմս... Իսկ եթէ ոչինչ չ'տան... ոչ... ոչ, անկարելի է, համողում էի ինքս ինձ... — Ընկերներս ի՞նչպէս պիտի նախանձեն... Եթէ քաղցրեղէն էլ տան՝ Սերգօյին էլ կ'տամ, կ'ուրախանայ, նա ոչ մի հարուստ ազգական չ'ունի... Ե՞րբ

կ'տան... Երեւի գնալուց: չեաաբբբբբութիւնից և անհամբերութիւնից ես դուրս ելի:

Թէյից չետոյ ևս վեր կացայ, որ գնամ, բայց նրանք ինձ ասացին, որ մնամ ճաշի: Ես ասացի, որ մայրս ասել է չ'ուշանամ... Իսկապէս ես ուրախութեամբ կ'մնայի, բայց չ'գիտեմ ինչո՞ւ՝ ես վճռել էի, որ միմիայն գնալուց ընծան կ'տան, և դորա համար աւելի էի շտապում:

Ես մօտեցայ, սիրտս թռթռում էր... անհ կ'վերցնի սեղանի վրայից իմ ընծան... Ես մօտենում էի վերջինին, բոլորն էլ կարծես մոռացել էին, մեկնեցի ձեռքս... Մի՞թէ ոչինչ չեն տալու...

Փողը ակամայ ընկաւ ձեռքիցս, մեքենաբար ես կռացայ և վերցրի. նոր, փայլուն հինգ կոպէկանոց էր, որ ձեռք տալիս նա սեղմել էր ձեռքիս մէջ... Մի վայրկեան ես լուռ մեխուած էի տեղումս, հինգ կոպէկը սեղմած ձեռքիս մէջ, չ'գիտէի՝ ի՞նչ անել, բոլոր օդային ամրոցներս օդը ցնդեցին, նրա փոխարէն հինգ կոպէկ...

Ես ուզում էի լայ, դռալ, ասել, որ չեմ ուղղւած, ինձ հարկաւոր չէ ձեր փողը...

Ես հաղիւ կարողացայ զսպել հեկեկանքներս և համարեա վազելով դուրս եկալ սենեակից... արագ իջայ աստիճաններից, սիրտս

ճմլուժ էր, արցունքները խեղդուժ էին ինձ...  
 Ես չէի կարողանում հասկանալ՝ ինչո՞ւ ինձ  
 փող աւելն, չէ՞ որ ուրիշ երեխաների խաղա-  
 լիքներ են տալիս, քաղցրեղէն, ինչո՞ւ ինձ էլ  
 մի էժանագին խաղալիք չ'աւելն, այլ հինգ կո-  
 սէկ:

— Ճինգ կոսէկ... հինգ կոսէկ: Անգի-  
 տակցաբար կրկնուժ էի ես:

Մի քանի բոսէկ ես կանգնաժ էի մուտքի  
 դռան մօտ հինգ կոսէկը ամուր սեղմաժ ձեռ-  
 քիս մէջ և չ'զիտէի՝ ի՞նչ անել: Յանկարժ մի  
 միաք լուսաւորեց իժ ուղեղը, տարօրինակ,  
 չիժար մի միաք... Ես բաց թողի և արագ,  
 ինչպէս մի չանցաւոր՝ սկսեցի փախչել այդ  
 տեղից:

Տուն հասաց, պատմեցի մօրս իժ ընժացի  
 մասին: Նա արտասուեց, համբուրեց դուխս և  
 ոչինչ չ'ասաց: Ես նկատեցի, որ մի դառը ժը-  
 պիտ խաղաց նրա շրթունքների վրայ... Ես  
 չ'կարողացայ սեղմել արցունքներս, ընկայ մօ-  
 րբս գիւրկը և սկսեցի հեկեկալ:

— Ինչո՞ւ գնացիր... ինչո՞ւ չ'լսեցիր ինձ...  
 — Ներիր, մայրիկ... Մայրիկ, ես նրանց  
 դռան վրայ կ'պցրաժ նամակների արկղը ձգեցի:

— Փո՞ղը:

— Այո, ես վա՞ս բան եժ արել:

Նա ժպտաց, համբուրեց ինձ, մի կաթիլ  
 արցունք ընկաւ ձեռքիս վրայ:

— Ոչ, ոչ... ինչո՞ւ գնացիր...  
 Նա գրկեց ինձ և սկսեց լալ:

1903 Մոսկւա



# Գ Ն Ա Ն Ք



Իննը հոգի էինք: Ժամը 11-ից անց էր: Բաւականին խմել էինք: Ես ինձ վատ էի ըլ-  
 գում, գարեջուրն էլ չհարողացաւ ցրել այդ  
 թախիծը: Անեկդասները, որ մէկը միւսի բե-  
 րանից խլում էին, մէկը միւսից զղելի և ծի-  
 ծաղալի, այսօր ինձ չէին զարեացնում. ինձ  
 զղելի էլ թւում այդ ուրախ, անհոգ շրջանը:  
 Ինձ զայրացնում էին նրանց կարմրած դէմ-  
 քերը, ծիծաղը:

Գարեջուր ծախողի կինը անցաւ մեր մօ-  
 տից: Բոլորը լռեցին և լայն բացած աչքերով  
 ուղեկցեցին նրան, մինչև որ նա անցաւ միւս  
 սենեակը և դուռը փակեց:

— Ոչինչ...

— Հրաշալի է:

— Այո...

Մի վայրկեան ընդհատելուց չեաոյ նորից  
 շարունակեց ուրախ աղմուկը: Լսողու թնանս  
 հասնում էին նրանց ձայները, կցկաուր խօս-  
 քեր... Մաքերս շփոթւում էին:

Յանկարժ այդ բոլորը անհետացաւ, ես  
 պարզ տեսայ նրան այնպէս, ինչպէս առաջ,  
 շատ տարի առաջ, չիշեցի բոլորը, լսեցի նրա  
 ձիչը... Մի դու անցաւ մարմնովս, բարձրացրի  
 զլուխս... Նրանք շարունակում էին ուրախ  
 ծիծաղել... Ես ուղեցի կանգնել, «գնալ, բաց  
 աչքերս իրանք-իրանք փակեցին»:

«Գարնանային լուսնկայ, հանդարտ դի-  
 շեր էր, չորս կողմը լուռ էր, մեր կառքն էր,  
 որ աղմկում ու խանդարում էր լռութիւնը:  
 Չ'դիտեմ ինչ խօսեցինք, կցկաուր խօսքեր եմ  
 չիշում, որ մենք ասում էինք միմեանց: Նա  
 ետ էր քաշել երեսի քօղը, շագանակադոյն ա-  
 լիքաձև մագերը թափւել էին ճակատի վրայ...»

— Ի՞նչ լաւ զիշեր է, շնչաց նա՛ թե-  
 քելով զլուխը դէպի կուրծքս,

— Այո, ասացի ես սեղմելով նրա ձեռքը  
 շրթունքներինս:

Կառքը կանգ առաւ, մենք իջանք: Ես  
 առաջարկեցի թևս, և ներս մտանք այդին:  
 Լուսնի կախարդիչ լոյսը թափւել էր ծառերի  
 վրայ, տերևները սպիտակին էին տալիս, փայլ-

փլուծ: Լսուում էին երաժշտութեան մեղծ  
ձայները:

Նա շփոթւած՝ մի վայրկեան կանգ ա-  
ռաւ, նայեց ինձ...

— Ոչ, ոչ, չ'զնանք, ետ դառնանք

— Ինչո՞ւ...

— Ինչքան մարդիկ կան:

— Մենք առանձին սենեակ կ'վերցնենք:

— Ոչ... ոչ... Ի՞նչ էք ասում:

— Լի՛ղա...

— Գնանք տուն:

— Լի՛ղա....

— Դու նեղացար... լաւ, զնանք, այն  
պայմանով, որ մի քիչ կ'հանդստանանք և  
կ'վերադառնանք:

— Կ'ընթրենք և կ'երթանք...

Ծառան առաջնորդեց մինչև սենեակի  
դուռը: Մի փոքրիկ սենեակ էր, ամեն բան  
գեղեցիկ էր և ներդաշնակ, կապույտ լուսամ-  
փոփի տակից մի մեղծ լոյս սփռւած էր սե-  
նեակում: Նա մտնելուն պէս ի'սկոյն ընկաւ  
գահաւորակի վրայ...

— Լի՛ղա, ինչո՞ւ ետ տխուր:

— Ինչո՞ւ եկանք, գնանք:

Ծառան բերեց՝ ինչ պատւիրել էի:

Ես լցրի բաժակները, նա հրաժարուում

էր, ես շատ համոզեցի, նա համաձայնեց, լցրի  
երկրորդը... երրորդը, չորրորդը...

Նրա աչքերը վառւում էին, այտերը շա-  
ռազուենել, աւելի համարձակ էր, խօսում էր,  
ծիմարում...

Ես մօտեցայ նրան, նա չ'շարժեց, զր-  
կեցի և սկսեցի համբուրել: Նա բարձրացրեց  
գլուխը, նայեց ուղիղ աչքերիս...

— Լի՛ղա, ես քեզ սիրում եմ... սիրում  
եմ... սիրում եմ...

Ձայնս գողում էր, ես դողում էի:

— Թող ինձ, թող, շէնչաց նա:

Ես աւելի ամուր սեղմեցի նրան կրծքիս:  
Նա գունատ՝ դողում էր:

— Թող ինձ... թող... թող... թող, ջը-  
ղաձգաբար կրկնեց նա աւելի մօտ սեղմելով  
ինձ:

Վանեա... վատ... վատ...

— Ա՛յ մարդ, ի՞նչ է պատահել քեզ, ե-  
րանգ ետ տեսնում:

— Ես բացեցի աչքերս... գարեջրա-  
տանն էի:

— Հիւանդ ես, ի՞նչ է:

— Հա՛, ես ինձ լաւ չեմ զգում... ներե-

Վնեցի ես առաջ գնալով:

— Վանեա... հաղիւ լսելի շշնչաց նա իմ  
անունը: Վանեա... Վանեա... դու ինձ չե՞ս  
չիշում, ճշաց նա՛ ընկնելով զիրկս:

— Դու, այդ գձու ես, Լիդա:

Ձայնս խեղեց կոկորդումս, մի քանի  
վայրկեան ես լուս. էի... ուշքի եկայ, չ'կարո-  
ղաց ոչինչ ասել, իմ ոչժից վեր էր այդ, ես  
դողում էի... Նրեցի նրան մի կողմ, ես փախայ  
նրանից:

— Վանեա... Վանեա... мерзавець.....

— Պարոն... պարոն...

Կառքը կանդնած էր:

— Ո՛ւր կ'հրամայէք:

Ես նայեցի շուրջս, բնակարանս ետ էր  
մնացել:

— Շուռ տուր:

Հաղիւ կարողացայ սենեակս հասնել:

Երկար ժամանակ աչքիս առաջ նա էր  
«դնանք... դնանք», շարունակ լսում էի նրա  
ձայնը:

1900 թ. Ստամբուլ



## Վ Ր Է Ժ

Կ. Կայարանի պահեստի երեւերից մէկի  
վրայ միայնակ կանդնած էր. մեր վազոն:  
Դուրսը ցուրտ էր, երկաթապատ պատուհան-  
ների ապակիները ծածկւած էին սառուցով:  
Դա կալանաւորների վազոնն էր, որը սպասում  
էր դէպի Ս. գնացող զնայքին:

Ժամը երկուսից անց էր: Կալանաւորնե-  
րը քնած էին, բացի մէկից: Մօտ 25 տարե-  
կան երիտասարդ էր, նիհար, զրաւիչ դէմքով:  
Մռայլ, խոշոր աչքերը սառն էին, ճնշող, շրդ-  
թաները ամուր զրկել էին նրա ոտները: Ճա-  
կաւոր սեղմած սառը ապակուն նա նայում էր  
դուրսը՝ թէև սառած ապակիների միջից ոչինչ  
չէր երևում:

Ես մի քանի անգամ փորձելի խօսեցնել  
նրան, նա ոչինչ չ'սպասասխանեց:

Չինւորները խմբւած մի նստարանի վրայ՝  
խօսում էին, թէև խօսակցութիւնը չէր կրպ-  
չում: ոմանք նստած ակոր ննջում էին, իսկ  
պահապան զինւորը լուռ, ապուշ կանգնած էր  
ձուռքի առաջ:

— Ինչո՞ւ չէք պառկում, դիմեցի նրան,  
չ'զանելով ինչ ասել: Նա դժգոհ նայեց ինձ  
և ոչինչ չ'պատասխանեց:

— Դուք հիւանդ էք:

— Ոչ:

Ես ակամայ ուզում էի հեռանալ, նա ինձ  
կանգնեցրեց:

— Ժամը քանիսի՞ն է գնացքը շարժ-  
ւելու:

— 4-ից քսան րոպէ անց:

— Այժմ քանի՞սն է:

— Երկուսից քառորդ է անց:

— Ինձ թւում էր, թէ շուտով կ'լուսա-  
նայ....

Նա բնկաւ նստարանի վրայ և թաղեց  
գլուխը ձեռների մէջ:

— Աշխատեցէք քնել:

Նա բարձրացրեց գլուխը, նայեց ինձ և  
ոչինչ չ'պատասխանեց:

— Դուք ինչո՞ւ չէք քնում, մի վայր-  
կեան լռելուց չետո՞յ՝ հարցրեց նա:

— Ինձ չի կարելի:

— Չի կարելի՞:

— Ինչո՞ւ:

— Իրաւունք չ'ունիմ, ես պէտք է հրս-  
կեմ:

Մի քանի վայրկեան երկուսս էլ լուռ  
նայում էինք իրար:

— Դուք մարդասպանութեան համար էք  
բռնւած:

Նա նայեց ինձ, աչքերը վալլեցին, շըր-  
թունքների վրայ խաղաց մի դառը ժպիտ:

— Այո՞... մարդ... մարդասպանութեան,  
բայց ոչ, մի լակոս:

— Թող նա լինի լակոտ, մեղաւորը պա-  
տասխանատու է օրէնքի և Աստծոյ առաջ:

— Օրէնքի և Աստծոյ առաջ.... հա...  
հա... բայց ես ուրիշ կերպ չէի կարող վարել,  
նա խաբեց քրոջս, մեր տան պատիւը ցեխի  
հետ հաւասարացրեց, իմ պարտքս էր վրէժ  
առնել:

— Շարունակեցէք:

— Որ դուք էլ ծաղրէք:

— Ինչո՞ւ էք այդպէս կարծում, ես հաս-  
կանում եմ ձեր վիշտը:

— Հակառակ է Օրէնքին և Աստծուն:  
Ոչ, կան բաներ, որ մարդ միմիայն ինքը կա-

րող է զգալ: Դուք չէք կարող հասկանալ, ըզ-  
 դալ, որ բոլորը ծաղրում են, վախկոտ անւա-  
 նում, ընկերներդ վախճում են քեզանից, ա-  
 ծօթից վախճում ես անտառը, թափառում  
 սարերում, որ ոչ որ չ'տեսնի: Ածառում ես  
 ինքդ քեզանից, հաչհոչում, անիծում թուլու-  
 թիւնդ: Քոյրս մեռաւ, վրէժը կրծում էր սիր-  
 տս, ես չէի կարողանում վճռել, ինձ սարսա-  
 փեցնում էր այդ միտքը: Ես լուռ էի, բայց  
 մի ներքին ձայն շարունակ շնչում էր՝ «վրէժ,  
 վրէժ», այո, կրկնում էի ես, բայց դանդաղում:  
 Մի վայրկեան լռելուց չեաօջ նա աւելացրեց:

— Քրոջս նշանածն էր, որը ստոր կերպով  
 խտրեց և ձգեց նրան:

— Դուք կարող էիք օրէնքով ստիպել  
 ամուսնանալ:

— Քոյրս մեռաւ, սպանեց իրան... նրա  
 ուրբուկանը ամեն տեղ ինձ հետ էր: Առաւօ-  
 տեան ցօղը դեռ չէր բարձրացել խոտերի վրա-  
 չից, ես աննպատակ թափառում էի անտառում:  
 Յանկարծ ես տեսայ նրան, նա դալիս էր դէ-  
 պի ինձ, անդիտակցաբար ես թագնւեցի թը-  
 փերի յետեր:

Ջրացանը ուսին՝ մի ինչ որ եղանակ շըւ-  
 շւացնելով հանդարտ նա ձօտենում էր այն  
 թփին, որտեղ ես էի: Սիրտս արագ բարս-

խում էր, ես հաղիւ էի շնչում, հաւասարեց  
 ինձ, ես գողում էի, չանկարծ մի գաղանի ոչժ  
 ինձ դուրս մղեց:

Դաշոյնի մի չաշող հարւածով գլորեցի  
 դետին, նա մի ոռնոց արծակեց, ես բոլոր ոչ-  
 ժով սեղմեցի կոկորդը՝ չ'դադարելով հարւածել:

Տաք արիւնը խփում էր ինձ, ներկուժ  
 ձեռներս, դէմքս, շորերս: Նա դադարեց շնչե-  
 լուց, բայց ես դեռ կատաղաբար հարւածում  
 էի այդ անշունչ դիակը: Յանկարծ բնազդ-  
 մամբ դէն ձգեցի դաշոյնը և ուզեցի փախչել,  
 հեռանալ այդ ատելի դիակից, բայց մի քանի  
 քալ հաղիւ կարողացայ անել...

Երբ ուշքի եկայ, ինձ թւաց, թէ երազ  
 է, մի ծանր կաշմար: Յանկարծ կայծակի ա-  
 րազութեամբ պատկերացաւ բոլորը, ինձանից  
 մի քիչ հեռու ընկած էր նա, ճաճկւած վեր-  
 քերով: Մեքենաբար վաղեցի դէպի նա, կար-  
 ծես, համոզւելու, որ չի շնչում:

Առանց մի դիտաւորութեան, ես սկսեցի  
 փախչել, առանց դիտենալով՝ ո՛ւր: Սիրտս ան-  
 շորը էր, կարծես մի ծանր բեռ թօթափել  
 էի վրայիցս, ոչ մի ցանկութիւն չունէի:....  
 Յանկարծ ես չիշեցի՝ մօրս.....

Նա չ'կարողացաւ շարունակել:

Ստաւրօպօլ 1901 թ.

## ՄԵՌԵԼՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Օդը զով էր. ծովը հանդարտ: Տօթը այրել էր կանաչը: Ներքևում քաղաքն էր, մերկ, դուրկ բուսականութիւնից, փոշով պատած: Հեռում երևում էին սևացած վիշկաները. բարձր ծխնելոցներից ծուխը ոլոր-մոլոր դուրս էր գալիս և այդ հեռապատկերը պատում թանձր մշուշով: Երբեմն լսում էր շողենալի սուլոցը. նրանք էլ, կ'ասես, այրում են սօթից, ուղում են կտրակել կապանքները, նետւել բաց ծովը:

Գերեզման փորոցները վերջացրել էին գերեզմանը և աշխատում էին պատսպարւել գերեզմանաքարերի սոււերների տակ:

Նրանցից մի քիչ հեռու երեսի վրայ փուլած էր մի մարդ: Նա քնած էր: Նրա կողքին, մէջքը գերեզմանաքարին դէմ տւած, նրս-

տած էր մի ուրիշը, որը մեծ եռանդով մաքրում էր կեղտոտ, համարեա սևացած շապկի վրայից այն փոքրիկ միջատները, որոնք նրան հանդիստ չէին տալիս....

— Է՛յ, հերիք մրափես... վե՛ր կաց, մըռմուռաց նա քթի տակ՝ խէթ-խէթ նայելով պառկողի վրայ:

Ինչո՞ւ էր զարթեցնում,—ինքն էլ չըզիտէր. երևի նախանձում էր, որ այդպէս հանդիստ քնած էր:

Նա յաճախ թողնում էր զբաղմունքը, մի քանի վայրկեան լուռ, անթարթ նայում դէպի գերեզմանատան մուտքը:

— Թո՛ւհ... ինչ ուշացան: Տօ՛, շան լակոտ, վեր կաց, է՛... գոռում էր նա պառկողի վրայ և նորից շարունակում իւր գործը:

40 ը անցրած երկարահասակ մարդ էր: Ամբողջ դէմքը ծածկւած էր սև-խիտ մազերով. դէմքի փոխարէն աչքի էր ընկնում նրա երկայն, ծաղկատար բիթը: Մազերը կեղտոտ, զզգզած՝ դուրս էին թափւել զլխարկի տակից: Շապկի վրայից նա հագած ունէր պատռոտւած կարճ վերարկու. անդրափարախի ծայրերը բրբրւած. մերկ ոտներին ցեխոտ, մի քանի տեղերից ծակծկւած կօշիկներ: Նա քանի գնում այնքան աւելի անհամբեր էր դառ-

նուճ. այժմ էլ հայեացքը չէր հեռացնում  
մուտքից:

— Է՛հ... ձեր հէրն անիծած—հայհոյում  
էր նա, կարծես սիրտը հանգստացնելու հա-  
մար... Յանկարծ նա արագ ոտի կանգնեց.  
մի անդամ էլ նայեց հեռուճ փողոճ կորած  
կառքերին. սե, շլփիկ աչքերը փայլեցին...

— Բերո՛ւճ են... ուրախացած բացական-  
չեց նա:

— Է՛չ... է՛չ... վեր կաց:

— Մօ՞տ են—առանց տեղից շարժւելու՝  
հարցրեց միւսը.

— Վէ՛ր կաց—բարկացած պատասխանեց  
նա՝ ոտով խփելով պառկողի կողքին:

Միւսը գանգաղ բարձրացաւ, նստեց տե-  
ղը, յօրանջեց և սկսեց տրորել փոքրիկ, ուռած  
աչքերը:

— Чего ты, сволочь, копаешься, կոտրաւած  
ռուսերէնով ասաց նա՝ ձեռքի, թոկով խփելով  
մէջքին:

— Քաղցած եմ... քրթմնչաց նա՝ ոտի  
կանգնելով և սկսեց թափ տալ հաստ կտորից  
կարած շապիկը, որի գոյնը ճիշտ կերպով զրժ-  
ւար էր որոշել: Իա կարճահասակ էր. դէմքը  
ուռած, ձպոտտ, կապոյտ աչքերով: Դեղնագոյն  
մազերը, միրուքը, զզգուած, կեղտոտ:

— Ո՛ւր է կրկնակօշիկներս:

— Քօռացե՛լ ես—պատասխանեց միւսը՝  
մատով ցոյց տալով: Նա մի բանի քալլ արաւ  
դէպի կրկնակօշիկները և կանգնեց—Да, ну  
его... տաք է, չեմ հագնում:

— Նազիր, բոբիկ լաւ չէ. մի ռաներիդ  
նայի՛ր, կ'ասես՝ թոնիրի մէջ ընկած խմոր  
լինի:

Ուրախացած իւր սրախօսութեան վրայ՝  
նա լայն բացեց բերանը, փակեց աչքերը և  
սկսեց հռհուալ:

— Ի՞նչ ես էջի պէս զուգուճ, մի շնոր-  
հքիդ նայիր, է... Բարկացած ասաց միւսը՝  
հագնելով կրկնակօշիկները:

Բարձրահասակը հայ էր, իսկ կարճահա-  
սակը՝ ռուս: Ի՞նչպէս էր եղել, որ զրանք ըն-  
կերացել էին—ես այդ չ'զիտեմ. բայց ինչքան  
էլ հայհոյում էին միմեանց, էլի անբաժան  
զօյգ էին:

Երկուսն էլ հանեցին գլխարկները, երես-  
ները խաչակնքեցին և շտապեցին օդնել իջե-  
ցնելու դազազը դիակառքից:

Իազազը արդէն իջեցրել էին փոսը. քա-  
հանան մի ինչ որ բան էր կարողուճ: Մի փոքր

հեռու, գերեզմանաքարերից մէկի վրայ՝ սեղան էր պատրաստուում օղորմաթաս խմելու համար: Մտապուժ էր քահանան. ծայր մերթ բարձրանում, մերթ մեղմանում՝ համարեա անլսելի էր դառնում: Մտապուժ էին գերեզմանափորերը, մեծ եռանդով թափում հողը գերեզմանը: Քրտինքը կաթիլ-կաթիլ զլորւում էր նրանց դէմքի վրայով:

— Էլի՛ մարդ են սպանել:

— Օր չի անցնում, որ չ'սպանեն. զրանց քօքը կ'տրւի—աւելացրեց ուսուր՝ մի եռանկիւնի քար դնելով գերեզմանի վրայ, ոտների կողմը:

Այդ խօսքերը վերաբերւում էին մի քանի թուրք տղաների, որոնք երևացին գերեզմանատան ներքի մասում՝ ուրախ երգելով:

Մի քար զլխավերևը, մի քար ոտների մօտ, ամեն ինչ վերջացած է: Քահանան խաչակնքեց գերեզմանը:

— Համեցէք, Տէր-հայր, օրհնեցէք սեղանը:

Բոլորը մօտեցան սեղանին, օղորմի տւին և սկսեցին ցրւել: Գերեզմանատանը մնացին գերեզման փորողները, մէկը, որ պէտք էր հաւաքէր ամանները, վճարէր գերեզման փորողներին—և այն երկուսը:

Նրանք լուռ, անհամբեր սպասում էին:

— Ինչո՞ւ մօտ չէք գալիս, եկէք օղորմի տւէք: Նրանց դէմքը փայլեց...

— Գինի՞, թէ՞ արաղ:

— Մէկ է... արաղ տւէք:

— Աստուած հողին լուսաւորի... Ասացին նրանք՝ մի շնչով դատարկելով բաժակները: Թւքերով սրբեցին շրթունքները, մի կտոր հաց-միս վերցրին ու մի քայլ ետ քաշւեցին, ուտելով ու չ'հեռացնելով հայեացքները սեղանից:

— չ'ր... ինչո՞ւ ետ քաշւեցի՛ք. կերէք, խմեցէք. հօ ետ չե՞նք տանելու:

Նոքա համարեա առանց ծամելու կուլ տւին վերջին կտորը և մօտ եկան:

Մի քանի ըսպէ՛ լուռ, արաղ, մէկը միւսի մեղքից խլելով, համարեա առանց ծամելու, նոքա կուլ էին տալիս. մէկը միւսի յետեից դատարկում բաժակները: Առանց խրտուլթեան նոքա ծոցներն էին կոխում հաց, միս, կանաչի...

— Տղերք, ձեզ տեսնեմ, էտ զինին էլ վերջացրէք:

— Աղս՛, վաղիր կուժը բեր...

— Ինքնու գնա, է՛լի:

— ՏՕ, էրէկ ես չ'գնացի՞—ասաց ռուսը՝  
շարունակելով ուսել և խմել:

— Լա՛ւ, հալբաթ կուզես. չօռ կ'աամ, որ  
լիես, ասաց հայը, մի կտոր միս ձեռքին կրը-  
ծելով վագեց մի քանի քալլ հեռու, գերեզ-  
մանաբարի մէկի մօտից մի փոքրիկ կաւէ կուժ  
վերցրեց և նոյն արագութեամբ՝ կարծես վա-  
սննալով, որ բան չի մնայ, մօտ եկաւ:


— ՏՕ, անաքանդներ, սովի՞ց էք վեր  
սլրծել,—բարկացած, արհամարական ժպտով  
ասաց գերեզմանափորերից մէկը:

— Կուզես, հալբաթ կուզես, շուն-շան  
որդի—շարունակ կրկնում էր հայը՝ լքցնելով  
կուժը գինով:

— Ինչո՞ւ ես հայհոյում, չե՞ս ամաչում—  
նկատեց միւս գերեզմանափորը:

— Ախար չ'գիտես՝ ի՞նչ մարդ է... ես  
դրա...:

Միւսը չէր լսում. մի ձեռքում բռնած  
մի մեծ կտոր միս՝ միւս ձեռքի մատներով  
աշխատում էր լցնել բերանը... փոքրիկ, կա-  
պոյտ աչքերը կատուի աչքերի պէս փայլում  
էին. այդ բոպէին նա ոչինչ չէր լսում, ոչինչ  
չէր տեսնում:



Արևն արդէն մայր էր մտել: Օդը զով  
էր. ծովը կամաց ծփում էր:

Նրանք լուռ էին: Հայը ինքնազօհ պառ-  
կած էր մէջքի վրայ և անթարթ նայում էր  
երկնքին: Իսկ ռուսը նայում էր նրա վրայ,  
կարծես ուզում էր մի բան ասել, բայց վա-  
խեցած էլի չետ-չետ էր քաշւում, կախ դրում  
զլուխը և մատներով սկսում փորփրել գե-  
տինը:

— Կարապետ... վերջապէս մըմնացայ նա  
հաղիւ լսելի ձայնով:

Միւսը չ'պատասխանեց և անշարժ նա-  
յում էր երկնքին:

— Կարապետ... գլուխս ցաւում է... խրնդ-  
րում եմ... մի կում, դուցէ անցնի... չե՞ս լսում,  
Կարապետ...

Կարապետը լուռ էր:

— Կարապետ... Ողորմելի ձայնով մըմըն-  
չաց նա:

— Հ'ր... ի՞նչ է... զուաց Կարապետը:

— Գլուխս ցաւում է:

— Զհառուջհանդամը, թէ ցաւում է...

— Խնդրում եմ... հիմայ ինչ ասես՝ կ'ը-  
լսեմ...

— Էդպէ՛ս, կ'ազաչե՛ս... քո հէրն անի-

ժած... լաւ, էս անդամ ներուժ եմ... Դէհ, ծոցիդ միտը դուրս տուր:

Ռուսը ուրախ-ուրախ ծոցից հանեց մըսի կտորները, բոլորը՝ ինչ ունէր և թափեց զեղնած խոտերի վրայ:

— Ես քեզ ասուժ եմ՝ խելօք կաց՝ ինչ ասուժ եմ՝ լսիր. թէ չէ՝ քաղցած ու ծարաւ կ'սատկեցնեմ—ասաց Կարապետը և նստեց:

— Ա՛ռ, խմիր:

Ռուսը վերցրեց կուժը և աղահուլթեամբ սկսեց խմել:

— Հերի՛ք է:—Գոռաց Կարապետը խլելով կուժը:

— Միրտս այրուժ է:

— Ինձ համար էլ թող, է՛... Հոյթ, ПОШЕЛЪ... Յանկարծ գոռաց Կարապետը: Միտը վայր ընկաւ ձեռքիցը, վախեցած նա ետ նայեց...

Բրդբրդար, նիհար, մի ոտը կալ, ոգորմելի, թափառական մի շունէր, որը մսի հոտ առնելով՝ մօտեցել էր նրանց... Շունը վնգըստալով մի քանի քայլ ետ գնաց, նորից սիրտ առնելով մի քայլ առաջ եկաւ, նստեց ետին ոտների վրայ, աչքերը ուղղեց նրանց և դողալով սպասուժ էր:

— Ինչո՞ւ ես փախցնուժ...

Շունը սողալով մօտեցաւ՝ կարծես հասկանալով, որ իրան մեղք են զարխս:

— Վախեցրեց...

— Թող դա էլ օղորմի տայ—ասաց նա մի կտոր միս ձղելով նրա առաջ:

Շունը վերցրեց և կաղալով փախաւ գերեզմանաքարի ետեւը ու սկսեց չփչփացնելով ուտել:

— Երևի իսկի բան չի կերել խեղճը:

— Ձառու ջհանդամը թէ չի կերել, թող սատկի, ինչի՞ է ապրում: Ինչի՞ է պէտք:

— Տեսնես վաղը քանի՞սը կ'բերեն:

— Մի վախենալ. քաղաքը մեծ, գերեզմանատունը մէկ: Ասուած յաջողի շատ կ'լինի:

— Էս օր քանի՞ հատ էր:

— Երեք:

— Էն երկուսը հէջ. շատ էին աղքատ. էլի էդ վերջինը մի բանի նման էր:

— Այլի՛, էլի խէրը աղքատներին է, թէ չէ հարուստները իրանց տանն են զխկուժ...

— Էխ... էխ... էխ...—Մի փոքր լուր-թիւնից չետոյ հառաչեց Կարապետը:—Գարունը, ամառը լաւ է էստեղ ուտում, էստեղ քնում ենք, ձմեռն է գժւար:

## ՏԱՔ ԿԵՐԱԿՈՒՐ

Այն ժասուս, որտեղ ես էի, 11 հոգի էինք: Երկաթէ դժի հնացած գերաններից շինւած մի տնակ էր: Քնուս էինք գերանների վրայ, որոնք յարմարացրած էին ներսը: Առաջուտայ ժամը 5-ից մենք աշխատուս էինք համարեա անընդհատ. հաշի ժամանակ կարողանուս էինք մի քիչ հանգստանալ ու նորից սկսուս էր մեր աշխատանքը, որը տևուս էր մինչև ա-րևի մտնելը: Ամեն մի վազոս լըցնելու հա-մար մենք ստանուս էինք 60 կոպէկ:

Մի շաբաթ էր, որ նա եկել էր մեզ մօտ: 33 տարեկան, ժամանակից առաջ դալկայած մի մարդ էր. խոր ընկած աչտերը միշտ մի հիւանդ կարծրութեամբ էին պատած, նիհար,

ոսկրացած: Նա էր սկսուս էր հազալ՝ բոլորս լուս էինք ու աչքներս յառած նրա վրայ՝ Նուս նրա չոր, չանկուտոց հազը: Ոսկրացած կուրծքը, կարծես, ուզուս էր պատուել, աչքե-րը դուրս վիճել իրանց տեղերից: Երեք օր աշխատելուց յետոց նա էլ չ'կարողացաւ դուրս գալ. մի քանի անգամ փորձեց գնալ աշխա-տելու, բայց մինչև վազօնները հազիւ հաս-նուս ու թուլացած ընկնուս էր գետին:

Մենք նրան համոզեցինք, որ մնալ տանը, մի քիչ լաւանալ: Նա, կարծես, համոզեց, որ իրան հանգիստ է պէտք: Մի քանի օր նա մնուս էր տանը ու մեզ համար կերակուր պատրաստուս: Շատ համեղ կերակուր էր ե-փուս հա. հաշին բոլորս հաւաքուս էինք քրե-ղանի շուրջը, բրդուս և ուտուս մի ամանից:

Շատ լաւ է, էրբ յօգնած, քաղցած տուն-ես գալիս և զիտես, որ բացի ցածաք հացից տաք կերակուր էլ կայ. աւելի եռանդով ես աշխատուս... Հա... շատ համեղ կերակուր էր պատրաստուս նա:

Մի օր առաջտեան նա բոլորից վաղ վեր կացաւ, զարթեցրեց բոլորիս, նրա աչքերը փաչ-լուս էին, մի թեթեւ Ժպիտ խաղուս էր նրա գունատ դէմքի վրայ:

— Յովակ, դուն էլ ես ուզում զալ, հար-  
ջրի ես զարմացած:

— Հա՛, էս օր լաւ եմ:

— Ա՛յ ծարդ, մի քանի օր էլ մնայ, լաւ  
դրսաւիր:

— Ձէ, հերիք հանգստացայ, երեխերքս  
քաղցած կ'մնան, ձմեռ է զալիս, — պատասխա-  
նեց նա և առաջ ընկաւ:

Նա եռանդով աշխատում էր. քրտինքը  
հոսում էր նրա ճակատից, թափւում աչքե-  
րը. նա թւքերով սրբում էր և նորից շարու-  
նակում: «Ձէ՞ որ կինը, երեխայքը քաղցած  
կ'մնան»: Այդ մտքից վախեցած նա նորից ոյժ  
էր առնում, լարում բոլոր ոյժերը, կծկւում,  
բարձրանում... Յանկարծ նա թուլացած ըն-  
կաւ, չոր, կրճքալին հազը չանկոտում էր նրա  
թոքերը:

— Յովակ, ախար ասացի մի զալ...

— Էիս... խէ... խէ...

— Գնա, գնա տուն. գնա պառկիր:

Մի քանի ընկեր նա լուռ էր. չտոյ բըռ-  
նեց թւս իւր ոսկրացած ձեռներով, սեղմեց  
որբան ոյժ ունէր, նայեց ինձ, ժպտաց:

— Շնորհակալ եմ. Աստուծոյ օրհնութիւ-  
նը քեզ վրայ լինի...

Նա բարձրացաւ և բահի վրայ չենւելով  
զիմեց դէպի մեր բնակարանը:

— Այո՛, Սաքօ, ի՞նչ պատահեց Յովակին:  
Գոռաց մի քանի վաղօն հեռու կանգնած Գա-  
լուսար, որը փոքրիկ, մի ոտը կազ 21—22  
սարեկան տղայ էր: Դա էր որ մի փոքր կեն-  
դանութիւն էր տալիս մեզ իւր հանաքներով,  
երգերով:

— Հիւանդին էլ կասեն ի՞նչ պատահեց: —  
Պատասխանեց Սաքօն շարունակելով լիւր  
գործը:

— Ձէ... կ'մեռնի: — Գլուխը շարժելով ա-  
սաց Գալուսար:

— Այա, Անաստաժ, երեխէք, կին ու-  
նի, բա խեղճ չէ՞ն:

— Բա խեղճ չէ՞ն. բա որ իմ ձեռքիս  
չի՛ կ'մեռնի, բա ի՞նչ կ'լինի:

Ես հետևում էի նրան: Նա օրօրւելով  
գնում էր. մի քանի տեղ նստեց, մի քիչ հան-  
գատացաւ:

Մուտքի մօտ վաչր ձգեց բահը և ներս  
մտաւ: Ես շարունակեցի աշխատել. մեքենաբար  
քանդում էի, իսկ ընկերս լցնում էր հողը վաղօնը:

Բոլորի դէմքին երևում էր յոգնածու-  
թիւն. ամեն մէկը լուռ աշխատում էր: Բա-  
հերը արևի ճառագայթների տակ փայլփլում

էին, խփուում քարերին, ողորմելի ձայներ հա-  
նում:

— Է՛յ... տղերք, գնանք մի—մի կտոր  
հաց ուտենք, գոռաց կաղ Գալուստը և վա-  
զօնի տակից դուրս եկաւ միւս կողմը: Բոլորս  
հետեւեցինք նրան և զիմեցինք դէպի մեր բնա-  
կարանը:

— Տեսնես Յովակը բան-ման եփե՞լ է:

— Բան չ'ուենիս, հալը շատ վատ էր:

— Ախպէր, չ'ուզեցի նրա եփած կերա-  
կուրը, լաւ է ցամաք հաց ուտեմ: Նրա եփա-  
ծը ինչքան էլ լաւ, համով լինի՝ էլի բողաղի-  
ցրս ցած չի գնում: Ինչ ուզում էք ասէք, շատ  
փիս հիւանդութիւն է. թէ ինչ լսէք՝ մի-մի  
քանի կողէի կ'ընենք ու կ'ուզարկենք տուն.  
գնա, բալքի հայրենիքում, իրա տանը լաւ լինի:

— Լաւ է ասում, ախպէր,—համածայ-  
նեց մի ուրիշը:

— Տղերք... տղերք, հլա մտիկ՝ Յովակը  
կրակ է արել. խաչը զիտենայ, շատ փիս քաղ-  
ցած էմ:

Գոռաց կաղ Գալուստը՝ չ'լսելով նրանց  
խօսակցութիւնը:—Ճէյ... հօյ... Յովակ, դալիս  
ենք, դալիս, պատրաստ է...

— Ա՛. Յովակը խի՞ է պառկել...

Տասը քայլ հաղիւ էր մնում մինչև մեր

բնակարանը: Մուտքի առաջ ծուխ էր բարձ-  
րանում. մի քիչ հեռու կիսապառկած էր Յո-  
վակը: Խօսակցութիւնները բնագատեցին, մենք  
շտապեցինք նրա մօտ: Նա գունատ էր, աչ  
թեւը գետնին չենած՝ բերանը կիսաբաց պառ-  
կած էր: Սպիտակ, բայց այժմ կեղտից մոխ-  
րագոյն դարձած շապկի թևերը կարծիր ներ-  
կաւծ...

— Տղերք... մրմնջաց նա... և էլ չ'կարօ-  
ղացաւ շարունակել, հազը խլացրեց՝ նրա ծայ-  
նը. այտերը շառագունեցին, աչքերը դուրս  
պրծան իրանց տեղերից, արիւնը սկսեց հոսել  
նրա գունատ շրթունքների վրայով:

— Կինս, երեխայքս անտէր մնացին...  
բեժկտալով մրմնջաց նա:

Մի քանի բոպէ բոլորս լուռ էինք, ոչ ոք  
ոչինչ չէր գտնում ասելու:

Նրան տարան հիւանդանոց, ուր մի քա-  
նի օր չետոյ մեռաւ:

Աշունը վերջանում էր: Ես, Սաքօն ու Գա-  
լուստը մի-մի կապոց ուսներիս տուն էինք  
ընում:

Կաղ Գալուստը վերջին ժամանակներս  
շատ էր ընկել. էլ էն հանաքները չ'կային, քիչ

էր խօսում. ծիծաղը կ'ասես ակամայից էր, հանաքները սառը, սրունք մեղ էլ չէին դարձացնում: Նա ինքն էլ, կարծես, զգում էր, որ չի կարողանում, որ մի բան պակասում է: Քիթը սրւել էր, դէմքը զուճատւել. սև, մեծ աչքերի արտայայտութիւնը սառել, չոզնել, շրթթունքների վրայ միշտ մի տեսակ թախիծ կար: Մենք զարմանում էինք, որ նա այդպէս փոխւել է. հարցնում էինք, հազիւ էր պատասխանում:

Մենք լուռ գնում էինք ձորի միջով: Երկու կողմից բարձրանում էին անտառապատ սարերը. արևը մայր էր մտնում. վերջին ճառագայթները ընկել էին դադաթին բուսած ծառերի վրայ. տերեւները փայլիլում էին, գողում, քամին պոկում էր դեղնած տերեւները խփում ժաչուերին: Ձորի միջում փոքրիկ, չարածնի դետակը քարերի վրայից թռչկոտալով հոսում էր ուրախ, անհոգ ծիծաղով:

— Փառք քեզ, Աստուած, էլի մեր երկրի հոտը առայ—ընդհատեց լուռթիւնը կազ Գալուստը և մի մեղամաղձոտ ժպիտ երևաց նրա զունաս շրթունքների վրայ:

— Էն անտէր մնայած գերանաբնում լափ նլէրք ընկանք՝ թող կուլ տալով, արևի տակ էրևելով... Փառք Քեզ, փառքդ շատ լի-

նի... աւելացրեց Սաքոն, որը տարիքով բոլորիցս մեծն էր:

— Ձէ, պրծաւ, ես էլ էստեղից ոտս դուրս չեմ գնիլ, էլ էն տեղերը չեմ գնալ...

Ադա՛, Գալուստ, էդ ի՞նչ պատահեց քեզ. կ'ասես էլ էն տղան չես, էլ երեսիդ ծիծաղ չի երևում...

— Հն, Սաքօ ապեր. շատ եմ ընկել, էլ էն չեմ:

— Ախար ինչո՞ւ, է՛... Յովակիմ թաղեցինք չը թաղեցինք՝ դու էլ ծուռեցիր, լղարել՝ հէնց չով դառել. բա քու մօրը հիմայ ինչ պատասխան տանք, կ'ասի՝ երեսէս տարաք փրչացրիք:

— Էստեղ կրակ է ընկել, այրու՞մ է, Սաքօ ապեր—պատասխանեց նա՝ ձեռքը կրծքին դնելով:

Մենք դուրս եկանք ձորից: Հեռում երևում էր մեր գիւղը՝ կանաչի մէջ կորած. բոլորիս դէմքին էլ ժպիտ երևաց:

Հեռից եկեղեցու զանգերի ձայնը դողալով հասնում էր մեզ: Յոգնած էինք, բայց նոր ոյժ առնելով մենք առաջ էինք գնում: Անհամբերութիւնից մեր ոտները դողում էին. կազ Գալուստը իւր կազ ոտը հազիւ էր քարշ տալիս:

Յանկարծ նա կանգ առաւ.

— Հ'ր... խի՞ կանգնեցիր:

Կուրծքը արագ բարձրանում ցածրանում էր. նա սկսեց հազալ. հազը շարունակեց մի քանի վայրկեան:

— Գալուստ, ինչո՞ւ ես հաղում:

— Ի՞նչպէս, թէ ինչո՞ւ... հազս զալիս է:...

Տղէրք, մի քիչ հանդստանանք՝ ես լափ հալից ընկել եմ—մի քիչ հանդստացած ասաց նա:

— Քիչ է մնում, զեղումը կ'հանդստանանք:

— Դէհ... Դուք զնացէք. ես մի քիչ կ'ըմնամ:

— Ես էլ եմ յոգնել—ասացի ես և նրստեցի:—Մարդը յոգնել է, ուղում է հանդստանալ, դուք ասում էք քիչ է մնում:

Բոլորս նստեցինք: Գալուստը պառկեց մէջքի վրայ. Սաքօն տապրակից մի կտոր հաց հանեց և սկսեց ուտել: Ես թէև ոչինչ չէի կերել, բայց քաղց չէի զգում, սակայն էլի մի կտոր հաց հանեցի:

— Գալուստ, հաց չե՞ս ուղում:

— Չէ... հ...

Նա նստեց տեղը. ցաւացնող, քայքայող հազը խեղդում էր նրան: Նա կախ ձգեց զլու-

խը, մատը տարաւ շրթունքներին, ցնցեց, սրբեց շրթունքների վրայի արիւնը, ժպտաց... Դա մի դառը, չուսահատ ժպիտ էր: Բարձրացրեց զլուխը, նայեց մեզ, նորից ժպտաց:

— Տղէրք, ես էլ Յովակի օրը ընկայ. նրա տունը քանդւի:

Մի կաթիլ արցունք շտապեց դուրս զալ և զլորեց նրա դունաս ալտի վրայով:

Մենք նրան տուն հասցրինք: Երեք ամիս յետոյ նա էլ մեռաւ: ||

Այժմ հերթը իմս է:

Այս փոքրիկ պատմութիւնը ինձ պատմեց թոքախտից քայքայւած մէկը, որի օրերն էլ հաշւած էին:

1903 Ղարաբիլիսա



## ԲԱՐԵԿԱՄԻՍ ԿԻՆԸ

Երկու տարի առաջ բարեկամս ամուսնացաւ և իւր սիրուն երիտասարդ կնոջ հետ քաշեց զիւզը իւր մասնագիտութեամբ պարապելու։ Առաջին տարին նամակներու ճանապարհով նկարագրում էր զիւզական կեանքը իւր իդիլիական գեղեցկութեամբ։ Մի խօսքով՝ իրան շատ երջանիկ էր համարում։

Բարեկամս զիւզատնտես է, չոր մասնագէտ, որ բացի իւր մասնագիտութիւնից էլ ուրիշ ոչնչով չի հետաքրքրուում։ Իսկ կինը նրա միանգամայն հակապատկերը, աշխույժ, չար, պարուծ է, երգում, խելագարելու չափ սիրում էր երաժշտութիւնը։ Իե՞ս այն ժամանակ ինձ տարօրինակ էր թւում, թէ ինչպէս այդ աղջիկը համաձայնեց զիւզ գնալ և այն էլ այդպիսի մի մարդու հետ։ Բարեկամս ինքն-

բատինքեան շատ կարգին մարդ է։ Բայց ես համողած էի, որ լաւ բնորութիւն չ'արաւ, և զժբախտ կ'լինին։

Երկար ժամանակ էր նրանից նամակ չ'ունէի, ես էլ չէի գրել, որովհետև մինչև կոկորդրոս խրատ էի գործերի մէջ։ Յանկարծ նրանից նամակ եմ ստանում, որտեղ խնդրում է, որ գոնէ մի ամսով զնամ նրանց մօտ. զանգատուում է, որ տխուր է։

Արդէն սկսել էին ամառայ շոքերը, քաղաքում անտանելի էր, ես որոշել էի մի ամսով արձակուրդ խնդրել, յաջողեցրի և միւս օրն և եթ ճանապարհ ընկայ։

Առաւօտեան երբ դարձնեցի, շոգեկառքը սլանում էր, արևը նոր էր դուրս եկել։ «Այսօր ծառայութեան չեմ գնալու», յանկարծ անցաւ մտքովս— «այսօր և մի ամբողջ ամիս ես կ'պատկանեմ ինքս ինձ, կ'անեմ՝ ինչ կ'ուզեմ»։ Մի ծխախոտ վառեցի և ազահութեամբ սկսեցի ներս քաշել ծուխը։ Վաղօտի հարեաններս դեռ քնած էին։ Ես շատ ուրախ էի, որ ոչ որ չի տեսնում ինձ՝ թէ չէ խելագար կ'կարծէին։

Կախարանում յանձնելով իրերս մի բեռնակրի, ես էլ ստով ճանապարհ ընկայ դէպի բարեկամիս տունը։

— Ս. յ, ազա, նրանց տունը, մատնացոյց

արեց բեռնակիրը, մօտ հարիւր քաչլի վրայ երեւացող մի գողարիկ սիրուն տուն՝ կանաչի մէջ կորած:

Դեռ հեռւից ականջիս հասնում էին խառնեհնազանձ, տարօրինակ ձայներ, մինչև անդամ կանգնեցի, մի քանի վայրկեան ականջ դրի, բայց նորից ոչինչ չհասկացայ, թէ ինչ ձայներ են և որտեղից են գալիս: Քանի ես մօտենում էի բարեկամիս բնակարանին, այնքան աւելի որոշ էին հասնում լսողութեանս այդ ձայները, որ ոչ երգի և ոչ էլ մի բանի նման էր, առաջ ինձ թւաց, թէ կատուներ են կրոււում, չետօյ տօպրակի մէջ ածած խողի ձագեր են, յանկարծ ինձ թւաց, թէ կնոջ յուսահատ ճիչեր են, որ և լալիս է օգնութիւն կանչում, ճչում, ճչում որքան ոյժ ունի... Բայց մի ուրիշ աւելի մեղմ ձայն ցրեց այդ կասկածս էլ: Ես աւելի արագացրի քաչլերս: Պարզ է, որ ձայները գալիս են բարեկամիս բնակարանից... Գուցէ մի թշւառութիւն է պատահել: Ես սկսեցի համարեա վաղել, սիրտս արագ խփում էր, կարծես՝ մի դժբախտութիւն նախազգալով...

— Լալիս են... այո... այո...

Ես մի վայրկեան կանդ առայ... Աչքիս առաջ պարզ պատկերացաւ բարեկամս դադա-

դի մէջ, չորս կողմը ծաղիկներ... Բարեկամիս կինը յուսահատ փետում է մաղերը, նա դունատ է, աչքերը կարմրած: Մի քանի քաչլ հազիւ էր մնում յանկարծ ձայները ընդհատեցին: Ինձ թւաց, թէ մէկը ընկաւ գետին...— Դա նա է, խեղճ կին, ուշաթափւեց:

Ես ոյժ գործ դնելով բարձրացայ պատշգամբը, որը մի քանի աստիճանով միմիայն բարձր էր դետնից:

— Ինչո՞ւ ձայները լռեցին... դուցէ հարկաւոր է օգնել... Ես արագ դիմեցի դէպի դուռ... ուզում էի բանալ, հէնց այդ րոպէին ձայները որոշ ուժեղ կերպով նորից սկսեցին լսել...

Ես արագ բացեցի դուռը: Սեղանի վրայ գրեած էր գրամաֆօնը, բարեկամիս կինը, տրնային շորերով, երեսը արած դէպի պատուհանը, երզում էր և աշխատում էր ձայնը նրմանեցնել զրամաֆօնի ձայնին:

— Բրաւօ, հրաշալի դուէտ է:— Կանչեցի ես, երբ զրամաֆօնի ասեղը վերջին պտօյտներն էր անում, անախօրժ, նեարդեր զրգուոյ ձայներ հանելով:

Տիկինը վախեցած չեա նայեց, մի վայրկեան լուռ նայեց ինձ—Մի՞թէ սա նա է... ինչքան է փոխւել...

— Պ. Սարաֆեան, նչաց նա՛ վագելով  
զէպի ինձ:— Ո՛րքա՛ն ուրախ եմ... համեցէ՛ք...  
համեցէ՛ք... վերջապէս... եթէ իմանաք, ինչքա՛ն  
եմ ծանծրանում այստեղ, ինչպէս եմ կարօտել  
քաղաքը:

— Ինձ թւում է, որ դուք ոչ մի տեղ  
չէք ծանծրանայ, ամեն տեղ մի բան կ'գտնէք  
զբաղւելու:

— Ոչ, ոչ, ես փոխւել եմ, շատ եմ փոխ-  
ւել, էլ էն չեմ... նայեցէք ինձ, շատ եմ փոխ-  
ւել, չէ՞:

— Այո, նիհարել էք:

— Եւ ազեղացել... այո, այո: Իհարկէ,  
բոլորովին աննոռնացել եմ:

Ես նայեցի նրա վրայ, իսկապէս շատ էր  
փոխւել, բայց չ'զիտէի ինչ ասել...

— Ինչո՞ւ այսքան դրում էինք՝ չէիք դա-  
լիս, բոլորովին մոռացել էք մեզ, չէք մտա-  
ծում, որ այստեղ, այս զլււելի զիւղում, բա-  
րեկամներ ունիք, վախենում էիք դաք, ծան-  
ծրանաք... այո, մարդիկ շատ եսասեր են:

— Ոչ, ընդհակառակը, ես միշտ ցանկա-  
ցել եմ դալ, բայց դորժերս...

— Գիտեմ, գիտեմ, նա էլ շարունակ  
զբաղւած է իւր գործերով, իսկ մի վայրկեան

չէն մտածում, որ ուրիշները ծանծրանում են:  
Գուք ապրե՛լ էք զիւղում... Գիտե՞ք՝ ի՞նչ է  
զիւղը, ի՞նչ տանջանք է ապրել հեռու մարդ-  
կանցից, ոչ օպերա, ոչ թատրոն, ոչ պարա-  
հանդէսներ...:

— Ինչ թւում է, թէ զիւղում էլ կարե-  
լի է հետաքրքրական դարձնել կեանքը, որ  
կարելի է...

— Ոչ, չի կարելի, դուք չ'զիտէք՝ ի՞նչ է  
զիւղը... ||

Ա՛խ, ինչպէս կարօտել եմ օպերան, կեան-  
քիս կէսը կ'տայի մի ներկայացման համար...  
Քաղաքում պարահանդէսներ լինո՞ւմ են, օպե-  
րային խօսքը լա՛ւ է, դրամատիկական խօսմբ  
կա՞յ...

— Այո, բայց ես էլ այնքան քիչ եմ լի-  
նում, որ համարեա ոչինչ չ'զիտեմ,

— Քիչ էք լինում... դա յանցանք է:

— Ժամանակ չի լինում:

— Փո՛ւ... Ժամանակ... Եթէ սիրէք, հե-  
տաքրքրէք, ժամանակ միշտ կ'լինի... Գուք  
բոլորդ էլ այդպէս էք, նրա համար էլ նոյնն  
է, չի էլ մտածում զրանց մասին, նա շարու-  
նակ իւր կովերով է զբաղւած և շատ լաւ է  
զգում իրան, երջանիկ:

— Ինչո՞ւ դուք էլ մի գործով չէք զբաղ-

ւում, այն ժամանակ այգչափ տաղտկալի չեն անցնիլ օրերը:

— Ի՞նչ գործով:

— Թէկուզ ձեր ամուսնուն օգնեցէք:

— Կով կ'թեմ... հա՛, հա՛... հա՛... հա՛... պանի՞ր... ի՞նչ... այ՞, ասացէք այ՞, հա՛... հա՛... բայց ես չեմ կարող, դա կեանք է, ես չեմ կարող, ես ապրել եմ ուղում, առաջարկում են կով կ'թել, դա անտանելի է... ես չեմ կարող... չեմ կարող, ոչ, չեմ կարող... դուք այդ չէք հասկանում... չեմ կարող:

Նա նեարդային կերպով վեր ցատկեց տեղից և շղածդարար սկսեց հեկեկալ, ծիծաղել: Ես մնացել էի ապշած, չ'զիտէի՝ ի՞նչ անել, ինչպէս հանդստացնել:

— Հանդստացէք, հանդստացէք...

— Այո, դուք այդ էք ուղում, նա էլ դուք բոլորդ էլ այդ էք ուղում... դուք չէք հասկանում, որ դա ինձ համար կեանք չէ, որ ես չեմ կարող այդպէս ապրել:

Նա թաղեց գլուխը ձեռների մէջ, մի քանի րոպէ լուռ էր, երբեմն հեծկլտում էր, շրնչառութիւնը դողում: Ես լուռ ջրով լիքը բաժակը ձեռքիս կանգնած էի նրա մօտ, վախնում էի մի բան ասել, որ էլի չ'զրդռեմ...

— Հանդստացէք, ես չե՞ որ հէնց այնպէս ասացի:— Հօ այս րոպէիս ձեզ չստիպեցին կով կ'թել...

— Ներեցէք ինձ...

Գլուխը բարձրացնելով շշնջաց նա— ես մի փոքր հիւանդ եմ, նեարդերս թոյլ են,— ասաց նա թոյլ ձեռներով ուղղելով ճակատի վրայ թափւած մաղերը:

— Խնդրեմ... խնդրեմ...

Յիմարաբար ասացի ես, ինքս էլ չ'իմանալով ինչ եմ ասում:—

— Ի՞նչպէս էք զգում ձեզ:

Սխալս ուղղելու համար հարցրի ես, բաժակը դնելով սեղանի վրայ:

— Ոչինչ... լաւ եմ... անցաւ, ասաց նա՝ ուղղելով հայեացքը ուղիղ աչքերիս:

— Դուք ամուսնացած չե՞ք:

— Ոչ:

— Երբէք չ'ամուսնանար, տեսնում էք, ինչքան վատ են կանայք, միշտ դժգոհ իրանց վիճակից... Գարեզինը շատ լաւ մարդ է, նա ինձ փայփայում է, երես տալիս, իսկ ե՞ս... ամեն օր այսպիսի տեսարաններ եմ սարքում...

Երբէք չ'աժոռսնանաք... Դուք երկար կ'մնաք  
մեզ մօտ, այնպէս չէ՞:

Ձայնը փոխելով՝ աւելացրեց նա, մօտեցնելով  
բաժակը շրթունքներին:

— Ոչ, մի քանի օրով եմ եկել, ահամայ  
դուրս թռաւ բերանիցս:

— Ոչ, ոչ, մէնք ձեզ չենք թողնիլ...  
Ախ, ի՛նչ չիմար եմ, դուցէ դուք քաղցած էք...

— Միք անհանգստանալ, վերջին կայա-  
բաններից մէկուժ բաւականին ախորժակով  
կերել եմ:

— Մաժու՛ն կ'ուտէ՞ք... ասացէք անկեղծ,  
հրաշալի մաժու՛ն ունենք:

— Անկեղծ եմ ասում, որ ախորժակ չ'ու-  
նիմ, շնորհակալ եմ:

— Կուզէ՞ք Գարեգիներն տեսնել:  
— Իհարկէ:

— Նա կ'գալ նաշին, որքան ուրախ կ'ը-  
լինի... նա ամբողջ օրը գործերով է զբաղւած,  
դնանք նրա մօտ... դուցէ դուք յոգնած էք...  
նա շատ չի ուշանալ:

— Ոչ, ոչ, խնդրեմ, ես պատրաստ եմ:  
— Ինչպէս կ'ուրախանայ, մի վայրկեան

սպասեցէք, ես իսկոյն կ'հագնւեմ, իսկոյն:  
Նա արագ վազեց հարեան սենեակը և

դուռը փակեց:

— Պ. Արտաշէս, զրամաֆօնը լարեցէք...  
դուցէ դուք չէ՞ք սիրում:

— Ոչ, ոչ, ընդհակառակը:  
— Սսեղը փոխէք:

Ես լուռ մօտեցալ զրամաֆօնին, փոխեցի  
ասեղն ու լարեցի: Սկսեց պտտւել, անախորժ  
ձայներ հանել, մինչև սկսեց երգը:

— Գիտէք, դա ի՛նչ օպերայից է:  
— Ձե՛մ չիշում, ոչ:

— Տրաւիատա... հրաշալի օպերա է:  
Ու սկսեց ձայնակցել:

— Ի՛մ ամենասիրած օպերան է:  
— Այո, լաւ բան է:

— Ես իսկոյն պատրաստ կ'լինեմ:  
— Խնդրեմ:

— Դուք զրամաֆօն ունի՞ք, մի փոքր  
լուռթիւնից չետոյ հարցրեց նա:

— Ոչ:  
— Գիտէ՞ք, շատ լաւ բան է, եթէ ի-

մանաք՝ ինչքան նոր եղանակներ եմ սովորել:  
Այնքան էլ հեշտ բան չ'կարծէք, այնքան ան-  
զամ կրկնել եմ տալիս, ինքս էլ երգում, որ  
սովորում եմ:

Ես ծիծաղեցի, բայց իսկոյն զգալով, որ

կարող է վիրաւորել, իսկոյն աւելացրի—որ դա շատ լաւ է:

Նա լռեց, ես մօտեցայ պատուհանին և սկսեցի նայել դուրսը:—Ի՞նչ լաւ է. անտառապատ սարեր, հրաշալի օդ...:

— Ի՞նչ էք անում այդտեղ, կանչեց նա միւս սենեակից:

— Ոչինչ:

— Ի՞նչպէս թէ ոչինչ, կանգնած էք:

— Այո, յողնել եմ նստելուց:

— Դուք չէ՞ք հետաքրքրուում մեր զբաղարանով:

— Ո՞րտեղ է:

— Նայեցէք, կ'դտնէք... Գտաք:

— Այո, շնորհակալ եմ:

— Բանալին վրան է:

— Այո:

Ես աւամայ մօտեցայ զրբերի պահարանին և լուռ սկսեցի աչքի անցկացնել վերնադիրները,

— Հետաքրքիր համարեա ոչինչ չ'կայ, այնպէս չէ:

— Այո, զուտ մասնագիտական զրբեր են:

— Միջին մասում բեկտորիստիկան է:

Մի քանի բոպէ նա լուռ էր:

— Պ. Արտաշէս, զուք զուցէ կ'ուզէք

լւացել, լւացարան չ'ունենք, պատշգամբից ծառային ծայն տւէք, թող բերի...:

— Շնորհակալ եմ, վազօնում լւացել եմ:

Ի՞նչ եմ անելու սրանց մօտ մի ամբողջ ամիս, անցաւ մաքովս...:

— Դէ՛հ, դնանք... ես մի քիչ երկարացրի... մեր թւեր... ա՛խ... շուտով մէկը կ'լինի, թեւս բաց թողնելով՝ ասաց նա, չ'հեռացնելով հայեացքը ժամացույցի սլաքներից:

— Կէս ժամից նա կ'զայ, ափսոս, ուշ է... Էհ...:

Աւելի լաւ, չենք գնալ, վճռեց նա:

— Հեռօ՛ւ է այստեղից:

— Ինչի՞ց:

— Որտեղ Գարեգինն է:

— Իսկապէս չ'զիտեմ նա ռրտեղ է:

— Հապա ո՛ւր էինք դնում:

— Երևի փեթակների մօտ կլինէր... Ահա և նա:

Վախեցած ճչաց նա, ես ուղեցի ընդառաջ գնալ, նա ամուր բռնեց թեւս և կիսաձայն շշնջաց—միք գնալ: Ես զարմացած նայեցի նրա վրայ և չ'զիտէի ինչ անել—Տեղներից չ'շարժէք:

Նա արագութեամբ սկսեց քաշքշել իրերս

Թագոյնել Թագորեց զխարկոս, վերարկուս: Երբ վերչացրեց այդ դործը՝ մօտեցաւ ինձ ու քարշելով տարաւ դէպի պահարանը:

— Թագնեցէք, խնդրեմ, կիսալուրջ, կիսածագրական ձևով ասաց նա՝ սախալելով ինձ Թագնեցել: Ես բոլորովին շփոթւել էի, չ'զիտէի ի՞նչ անել ու ակամայ հնազանդւեցի ու կուչ եկայ պահարանի յետևում: Իսկ ինքը լարեց գրամաֆօնը և ըսկսեցին միասին երգել:

— Դու դարձեալ գրանով ես զբաղւած, դժգոհութեամբ ասաց բարեկամս, ներս մըտնելով սենեակը: Նա ոչինչ չ'պատասխանեց և շարունակեց երգել: Բարեկամս այս տարի ու կիսում համարեա չէր փոխւել, մի քիչ հաստացել էր, սևացել:

— Դադարեցրու, իսէր Աստծոյ... ձաշը պատրանս է:

— Չ'զիտեմ, անտարբեր կերպով պատասխանեց նա, տառնց նայելու նրա վրայ:

— Անտանելի է, քանի՞ անգամ խնդրել եմ, որ ժամանակին պատրաստ լինի:

— Ինձ մօտ հիւր կար:

— Չ'իւր, ո՞վ էր:

— Քաղաքից եկած մի պարոն, զու չեա ճանաչում:

— Բայց և այնպէս ո՞վ է:

— Մի պարոն, որին դու չեա նանաչում:

Մանկութեան ընկերը:

— Ինչո՞ւ էր եկել:

— Ինձ տեսնելու:

— Գարեղին, ես եմ, ե'ս, զոռացի ես, դուրս գալով Թագնւած տեղիցս:

— Արտաշէ՛ս:

— Փու, վատ... Ճչաց բարեկամիս կինը, նայեց մեզ վրայ և արտասուքը աչքերին, արագ վեր յատկեց և վազեց իւր սենեակը:

— Սաթենի՛կ, Սաթենի՛կ... ի՞նչ եղաւ:

Նա ամուր փակեց դուռը:

Ի՞նչ պատահեց:

— Շատ նեարդային է:

— Նա լաց է լինում...

Բալախանի 1904 թ.

*Բանկայ*  
Լիք բաժակները լիքն էին: Նրանք, կարծես, մոռացել էին գարեջրի գոյութիւնը:

— Ի՞նչ ուզում էիր հասունութեան վկայականի քննութիւն տալ, ընդհատեց նրանցից մէկը, ականոցները ուղղելով ու թաթախելով շրթունքները գարեջրի փրփուրի մէջ:

— Այո, ուզում էի, անտարբեր պատասխանեց միւս, չ'փոխելով դիրքը:

— Չ'յաջողեց:

— Ոչ, պատասխանեց միւսը աւելի բարձրը, ետ ընկաւ աթոռի վրայ և ձեռներով սկսեց խառնել մաղերը:

Ընկերներ էին: Ներսիսեան դպրանոցը միասին վերջացրին, լի յոյսերով, հաւատով, որ կ'երթան շարունակելու... Արդէն հինգ տարի է անցել, այժմ նրանք մի գործ են փնտրում:

— Ի՞նչ եղան մեր ընկերները:

— Յրւեցին, մէկը երեւի վարդապետ, միւսը քահանայ: Երկուսը արաասահման գրնացին: Գալստեանին չիղձւեց էս, Բալախանում պատահեցի, բանւոր է եղել, այժմ մի քիչ լաւ է: Լզարել, խեղճացել... չիղձւեց էս ուսումնա-

## Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր

(Նւէր. Մ. Խանդաղեանին)

Ծառի տակ մի քիչ առանձնացած միւս սեղաններից նստած էին երկուսը: Ամեն մէկի առաջ դրած էր մի-մի բաժակ գարեջուր: Երկուսն էլ լուռ թիկն էին տւել սեղանին ու առանց մի նպատակի նայում էին:— Տեսնում էին սեղանները սպիտակ ձիւնի նման սփռոցներով, մարդկանց նստոտած սեղանների շուրջը, նրանց ականջին հասնում էր բաժակների, ափսէների ձայները: Երաժշտական խումբը նւագում էր, բայց նրանք չէին լսում, տեսնում, լսում էին բոլորը, առանց ոչինչ հասկանալու: Օդը լիքն էր զանազան ախորժակի գրգռող կերակուրների հոտով:

բանում ի՞նչ տաք, ոգևորող տղայ էր, այ-  
ժրմ... հր... մ...

— Այո, սրան կեանք կ'ասեն, շարդում,  
տրորում է...

Նրանք մի անգամից մինչև բաժակի կէսը  
խմեցին:

— Քանի գնում աւելի ենք տափակում...  
կեանք չ'կայ...

Միմիայն ոյ ենք ապականում...)

— Ո՞վ է մեղաւոր:

— Եւ մենք և պայծանները:

— Միմիայն պայծանները:

— Թող այդպէս լինի, չ'վիճենք, պատա-  
սխանեց միւսը, լուռ դատարկելով բաժակը,  
ընկերն էլ հետևեց նրա օրինակին:

— Մի—մի բաժակ էլ...

— Խմենք...

Ծառային պատուիրելով, նրանք նայեցին  
միմեանց, երկուսի մտքովն էլ անցաւ իրանց  
պատանեկութիւնը ու երկուսն էլ ժպտացին:

— Ինչո՞ւ ես ծիծաղում:

— Մեզ վրայ:

Միւսը, կարծես, հասկանալով, թէ ինչո՞ւ  
է իրանց վրայ ծիծաղում՝ լուց:

— Մարդարեանին չիշո՞ւմ ես:

— Մարդարեանին... հա... բայց ինչո՞ւ  
ես ծիծաղում:

— Ոչինչ, մի զէպք չիշեցի:

— Ի՞նչ զէպք:

— Այդ տղան, չ'գիտեմ, անկեղծ է, թէ  
կեղծում է, միայն ինձ շատ է զարմացնում:  
Անցեալ տարի հայրենիք դնալիս, պատահ-  
մամբ անսայ նրան:

— Որտե՞ղ...

— Դէպի Երևան տանող երկաթուղու  
գիծը դեռ նոր էին շինում: Փոստային կայա-  
րաններից մէկում երկու ժամ պէտք է սպա-  
սէի, բարկութիւնից, որ ձի չ'կայ և ծանծրոյ-  
թից, ես գնացի մօտ <sup>1</sup>/<sub>2</sub> վերստի վրայ շինւող  
գիծը նայելու, թէ և զգում էի, որ հետաքրքր-  
բան չ'կայ, բայց կայարանում նստելուց ա-  
ւելի լաւ է գնալ:

Մտածմունքների մէջ խորասուզւած, ես  
էլ չ'գիտեմ, թէ ինչպէս՝ հասալ: Երբ զլուխ  
բարձրացրի, արդէն կանգնած էի զժի վրայ:  
Բանւորները քրտնքի մէջ կորած՝ եռանդով  
աշխատում էին Գծից մի քիչ հեռու. աչքիս  
լնկաւ մի կիսագեանայարկ, խարխուլ անակ,  
քրտեղ մտնում, դուրս էին գալիս:

— Այդ ի՞նչ տուն է:— Ջարգրի բանւոր-  
ներից մէկին:

— Դուքան է, աղա,— պատասխանեց նա  
և շարունակեց իւր գործը:

Ես հետաքրքրւեցի, թէ դա ի՞նչ դուքան  
է, և դիմեցի դէպի այդ խանութը:

Դրան մօտ խմբւած էին մարդիկ, մէջ  
տեղում նոր մորթած ոչխարի մօտ կանգնած  
էր մի բարձրահասակ պարոն, ահագին դանա-  
կը ձեռքին: Հողին չէշուչա շապիկ, հին կեղ-  
տոտ, իւղոտած պիպժակ և երկար ճակիրով  
կօշիկներ:

— Քեզ ի՞նչքան... հը, շուտ... քանի՞  
գրվանքայ... պահ... պահ... պահ, ինչ միս է,  
եղ է, ե՛ղ... հաստ ձայնով գովում էր նա իւր  
ապրանքը:

Այդ ձայնը, դէմքը, ինձ ինչ որ ծանօթ  
թւաց, բայց չ'կարողացայ գլխի ընկնել, թէ  
ո՞րտեղ եմ տեսել:

Մտայ խանութը, նայեցի խանութում  
դարսած իրերին: Լուցկի էժանազին ծխա-  
խոտներ, սեղանի վրայ հաց, միջին տախտակի  
վրայ չորս արկղ սարդիկակա, սիգար, թանկա-  
զին ծխախոտներ, թէյ, շաքար և մի քանի  
ուրիշ մանր-մունր բաներ: Սեղանի միւս կողմը  
կանգնած ինձ էր նայում մի կարճահասակ,  
կարմիր, չաղ դէմքով մօտ երեսուն տարեկան  
մի մարդ:

— Լուցկի տէք, դիմեցի ես նրան, ա-  
ռանց դիտենալու, թէ ինչի՞ս է պէտք լուց-  
կին: Նա դանդաղ կերպով մօտեցաւ լուցկի-  
ներին:

— Քանի՞ արկղիկ:

— Մէկը, մի հատ էլ ծխախոտ տէք:

— Ի՞նչ գնանոց:

— Մէկ է, 6 կոպէկանոց:

«Բայց ես ի՞նչ եմ անելու ծխախոտը»,  
անցաւ մտքովս.

— Ոչինչ, կառապանին կ'ընծայեմ, վրձ-  
ուեցի ես մտքումս վերցրի ծխախոտն ու լուց-  
կին, մի երեք բուբլիանոց զնելով սեղանի վրայ:

Կարճահասակ պարոնը նայեց արկղը,  
խառնեց փողերը ու դարձաւ ինձ,— մանր  
չունէ՞ք...

— Ոչ:

— Խէչօ, էլ տեղ երեք մանէթի խուրդա  
չի՞ լինիլ:

— Կայ, մի փոքր լուծթիւնից չետոյ  
ձայն տւեց նա:

— Նեղութիւն կրէք նրանից վերցնել:

Ես լուռ վերցրի երեք բուբլիանոցը և  
մօտեցայ միս ծախող պարոնին, ու չանձնեցի:

— Գասպար, ինչքան պէտք է վերցնեմ:

— Եօթը կոպէկ:

Նա լուռ, առանց գլուխը բարձրացնելու հաշւեց և սկսեց 20 կոպէկանոցները մէկ-մէկ դնել ձեռքիս:

— Էս մի մանէթ...

Նա բարձրացրեց գլուխը մեր հայեացքները հանդիպեցին, զարմացած նայեց ինձ...

— Վայ... էջ... աղա Սարգիս, էդ, դ՞ու էս, էս մի վայրկեան ապուշ կանգնած էի, աչքերիս չէի հաւատում:

— Մարդարեան:— կձկձացի էս:

— Մարդարեանն էր... հարցրեց միւսը ծիծաղելով:

— Ես եմ, էս, գոռաց նա:

— Աղա ի՞նչ էս շինում էստեղ,,,

— Տուն եմ դնում... դու ի՞նչ էս անում:

— Վա՛հ, չե՞ս տեսնում... հա՛... հա՛ հա՛... միս եմ ծախում... Աղա, Գասպար, արի սրանց միս աուր, էս սրա հետ մի քիչ խօսամ:

Կարճ պարոնը դանդաղ կերպով մօտեցաւ ու առաւ դանակը:

— Դէհ, արի տեսնեմ, էտ ճրտեղից որտեղ, հը, ի՞նչ էս նայում:

— Միս էս ծախում-

— Ի՞նչ է որ, արտասահման դնալու հա-

մար փող եմ պատրաստում... աշուները գընում եմ...

Ես զարմացած նայեցի նրա վրայ և ոչինչ չ'ասացի: Մօտեցնելով ինձ անկիւնում դրւած տախտին, նստացրեց:

— Դէհ, պատմիր տեսնե՛ք, ի՞նչ կայ, ի՞նչ չ'կայ:

— Ես նրան քաղաքից մի քանի նորութիւններ պատմեցի, նա ձեռքը ամուր ուսիս խփելով գոռաց:

— Աղա շատ փիս կարօտել եմ քաղաքը... Ի՞նչ էս էդպէս պինդ-պինդ նայում:

— Էտ սարդիկաները, սիդարները, ո՞ւմ համար են:

— Ինժիներները որ գալիս են, մէկ մէկ ուղում են:

— Աշխատանք կ'ա՛յ:

— Ո՞վ դիտի, հլա նոր ենք բաց արել, յոյս ունեմ, որ լաւ լինի:

— Ընկերո՞վ էս...

— Հա՛:

— Ո՞վ է:

— Վա՛հ, չե՞ս ճանաչում զրան: Գասպար Դողդոսեան, բանաստեղծ... շատ սարսաղ լալիտ է հա՛... հա՛... հա՛... էստեղ էլ է բանաս-

տեղծութիւններ գրում: Սպասիր, հիմայ խորոված անեմ, նստենք մի լաւ քէփ անենք:

— Ինչ ժամանակեայ խորոված է, ես հիմայ զնում եմ, մինչև տեղ հասնեմ՝ ձիանքը հանգստացած կ'լինին:

— Գի՞ժ ես, ի՞նչ ես, տօ... չեմ թողնի, չէ... վահ, մի երկու օր մնայ, մի լաւ ուրախութիւն անենք: Ես ծիծաղելով վեր կացայ:

— Ո՞ւր, դէհ, որ հըպէս է, կաց խորոված ուտենք...

Ես հաղիւ կարողացայ համոզել, որ չեմ կարող, որ եթէ ուշանամ՝ ձիանքը կարող են ուրիշի տալ: Շատ դռեց, որ մնամ՝ խորոված ուտեմ, բայց արդէն  $1/2$  ժամ էր մնում, ես շտապում էի:

— Աղա լաւ կ'անէիր, որ մնայիր:

— Չէ, չեմ կարող:

— Դէհ լաւ, զնա, քո հէրն էլ անիծած:

— Տղա, էս երկաթուղին երբ է պատրաստ լինելու: Էդ ստարոստաներից մարդու զահլէն զնում է...

— Շուտով... շուտով....

Այս տարի Բաղուում պատահեցի, եկել էր գործ փնտրելու: Հարցնում եմ, բա արտասահ-

ման գնալը... Ծիծաղում է: Սարսափելի հայհոյում էր իւր բանաստեղծին... խեղճի փողերը կերել էր:

Ծառան անցաւ նրանց մօտից և խէթ-խէթ նայեց լիք բաժակներին, նրանց... երկու ընկերներն էլ զատարկեցին բաժակները և վերկացան:

Մոսկւա 1904



# ՍԱԲՈՒՆՉՈՒՄ

(Տպարուծիւններ)

Մոսկւա

## ԴՌՆԱՊԱՆ ՅԱՐՈՒԹ

Այդ ճարգը սովորութիւն չունէր ոչ բազանիք զնայու և ոչ էլ սպիտակեղէնը փոխելու, հագնում էր և մէկ էլ այն ժամանակ էր փոխում, երբ սպիտակեղէնից միմիայն ցնցոտիներ էին մնում:— Անունը Յարութիւն էր:

Հինգ տարի է ինչնա այդ տանը դռնապանի պաշտօն է կատարում, այդ բոլոր ժամանակամիջոցում նա հինգ անգամ բաղանիք է զնացել, հինգ անգամ փոխել սպիտակեղէնը, հինգ անգամ էլ հաղորդել: Մի կարծադասակ ճարգ էր, դէմքի կաշին կուչ եկած, մրոտ մազերը զգզուած, կեղտոտ, հաստ՝ բաւականին մաւրից քթի վերայ կարծիր զնդիկներ սև կետերով: Աչքերը փոքրիկ, կարմրած, ներքին կոպերը, կարծես, ոչժով քաշած դէպի ցած. թաւ չոնքերը մի մատնաչափ ցցած դէպի ա-

ուսչ: Դէմքը ընդհանրապէս զարմացած արտայայտութիւն ունէր: Տարիքը զժւար էր որոշել, բայց արդէն հասակն սոսաժ մարդ էր: Մի քիչ հեռւից զժւար էր այդ բոլոր մանրամասնութիւնները նկատել. մի սև բան էր երևում և ուրիշ ոչինչ: Երբ մօտից սկսում էիր դիտել միայն այն ժամանակ կարելի էր դառնում որոշել քիթը, քթի վրայի զնդիկները՝ սև կէտերով, աչքերը, իսկ շրթունքները՝ ես հրաժարւում եմ նկարագրել, որովհետև խճճաժ բեղերը, միրուքը թազցրել էին:

Նա երբ նոր էր եկել զիւղից՝ աւելի էր մարդու նմանում, բայց Բալախանում քանի զնաց, օր օրի վերայ՝ նա այնքան աւելի դադարում էր մարդու նմանելուց:

Մի՛ իրա նման էլ քոսոտ, մխի մէջ կորած շուն ունէր, որի հետ նա կիսում էր իւր ունեցածը: Ես նոյնպէս հրաժարւում եմ բացատրել, թէ ի՞նչպէս, ե՞րբ և ո՞րտեղ էին զրանք այդքան սերտ կապւել: Բայց որտեղ որ լինէր Յարութը, մի աչքը կոյր շունը անբաժան էր նրանից:

Դրանք երկուսով էլ ապրում էին մի տախտակներից շինած սենեակում, որտեղ, կարծես, ոչժով սեղմել էին մրից սևացած մի

տախտ, որը իւր նախնական ծանրութիւնից կրկնապատկւել էր՝ այնքան տախտակի կտորներ էր մեխւած վերան, ամբացնելու համար. բայց նա չամառութեամբ շարունակում էր օրօրէլ և անտանելի ձայներ հանել... Տախտի մօտ, գլխավերևը, դրւած էր մի սեղան, որը ինքը՝ Յարութն էր շինել, դրա համար էլ աւելորդ եմ համարում նկարագրել: Տախտի վրայ թափթփւած էր նրա անկողինը՝ պատառոտաժ, մրից սևացած, իւղոտաժ կաշւի նման փայլուն՝ տեղ-տեղ էլ բուրդը դուրս թափւած: Այդ տախտի վրայ, այդ անկողնու մէջ էր քնում Յարութը: Իսկ շունը տախտի տակը:

Սոսական տասնեկերկու մանէթ էր ստանում, թէ և չ'կարողացայ հասկանալ, թէ նա ինչո՞ւ է ստանում այդ փողը և ինչո՞ւ է այդ տանը: Եթէ դռնապան էր, նա բոլորովին չ'ըզիտէր իւր պարտականութիւնները. բակը երբէք չէր աւլում—ասնք կարիք էլ չ'կար, որովհետև կենողները իրանք սրբում էին իրանց բնակարանների առաջը և աղբը լքցնում ներքնայարկը, որը կիսով չափ լիքն էր կեղտոտ, հոտաժ ջրով: Միակ բանը, որ նա անում էր, այդ՝ տանտիրոջ խօզերին նայելն էր, որոնց նա առաւօտները վաղ դուրս էր թողնում, երեկոյ-

եան արևը մանելուց յետոյ էլ հաւաքում ու փակում գոմում:

Շատ լռակեաց մարդ էր Յարութիւնը. մի բան մինչև մի քանի անգամ չ'հարցնէիր, չէր պատասխանիլ. իսկ իրա մասին բոլորովին չէր սիրում խօսել:

— Ինչո՞ւ թողիր գիւղը, պսակւած ես, թէ չէ՞, դո՞հ ես կեանքիցդ, երեխայք ունի՞ս... և այլն:

— Աստծոյ կամքն է, կ'ասէ ու յամառութեամբ կ'լռէ, աչնպէս որ սիրտ չես անիլ կրկնել հարցդ: Բայց թէ ինչո՞ւ է Աստծոյ կամքը, դո՞հ է իւր վիճակից, թէ չէ, — այդ բոլորին նա պատասխանում էր լռութեամբ կամ գլխի շարժումով, որ նորից դժւար էր մի բան գուշակել, կամ ձեռքով մի արհամարական շարժում կ'անէր ու լուռ կրհեռանար, կարծես, ասելով:

— Թող, չարժէ դրա վրայ խօսել, ի՞նչ քու դործն է, կամ ի՞նչ օգուտ, որ իմանաս:

Նրան շարունակ կարելի է տեսնել իւր սենեակի առաջ քարի վրայ նստած ննջելիս, իսկ մի քիչ հեռու նրա շունը, նոչնպէս ննջելիս: Շան հետ նա միշտ թուրքերէն էր խօսում և շունը նրան հասկանում էր: Ամառը,

ամէն օր, հացի հետ ձմերուկ կամ խաղող էին ուտում, իսկ ձմեռը՝ չգիտեմ:

Շաբաթ էր. արևը նոր էր դուրս եկել: Տան յետևում, աղբի կոյտերի մէջ, Յարութիւնը լրջութեամբ գլուխը կախ, դբադւած էր տաշեղներ, թղթի կտորներ, փալասներ հաւաքելով, բոլորը, ինչ հաւաքում էր, նա կիտում էր մի տեղ, դէզից մի քիչ հեռու դունչը դրած թաթերի վերայ, պառկած էր նրա հաւատարիմ շունը, նա լուռ հետևում էր իւր տիրոջը:

Յարութիւնը օրօրւելով մօտեցաւ, թափեց ձեռքում հաւաքածը դէզի վերայ ու ծունկ չօքեց: Շունը բարձրացրեց գլուխը տեսնելու, թէ ի՞նչ է անում իւր տէրը... էլի գլուխը դրեց թաթերի վրայ և մտածմունքի մէջ ընկաւ, երբեմն գայրացած, թաթով խփելով դէմքին նստած ձանձրացնող ճանհերին:

Յարութիւնը առանց շտապելու հանեց դրպանից լուցիկին, վառեց և մօտեցրեց դէզին: Խոնաւ, փտած, նաւթոտ տաշեղները, շորերը ահագին ծուխ բարձրացրին: Նա երկու ձեռքով չեւելով դեմքին՝ կռացաւ ու զգուշութեամբ սկսեց փչել: Մուխը լցւում էր նրա


աչքերը, բերանը... ծխից խնդդեցում է նա չետ քաշւեց, մի քանի անգամ փռշտաց, հաղաց և տեսնելով, որ սկսում է վառւել բարձրացաւ և մօտեցաւ շանը. շունը նոյնպէս բարձրացաւ, մտերմաբար շարժեց պոչը՝ ի նշան յարգանքի և սպասելով որ տէրը նստի—ինքն էլ նստեց:

Յարուժը նստեց. զրկեց ծնկները և լուռ անհամբեր նայում էր ծխի քուլաներին, որոնք ոլոր-մոլոր դուրս էին գալիս խարոյկից: Տեղ, տեղ սկսել էին բոցեր երևալ: Յարուժը անթարթ նայում էր ծխի մէջ երբեմն փայլիլոյ բոցերին և կարծես ուղղում էր ասել «էս ի՞նչ լաւ բան է կրակը:» Քանի գնում խարոյկը աւելի էր բռնկւում—համարեա ամբողջապէս բոց էր դառել, երբ նա հանեց վերնագրեւորը, հանեց շապիկը, մի քանի անգամ երկայն կեղտոտ եղունգներով քորեց մազոտ կուրծքը, մէջքը և ոտի կանգնեց: շապիկը ձեռքին կիսամերկ, նա մօտեցաւ խարոյկին: Կրակի մօտ ցնցեց ուսերը, շապիկի մի ծալրից բռնած մի քանի անգամ ուժով թափ տւեց կրակի վերայ. լսեց նրթնրթոց, մի անգամ էլ թափ տւեց, չետոյ տաք շապիկ երկու ծալրերից բռնած սկսեց հարել մէջքը, կուրծքը բաւականութեամբ ան... հա... աս... տեսելով... մէկ էլ թափ տւեց, մի անգամ էլ

հարեց... ցած դրեց շապիկը, վերցրեց վերնագրեւորը և նոյն գործողութիւնը կատարեց նրա վրայ... կամաց-կամաց նա բոլորովին մերկացաւ, հերթով բոլոր շորերը թափ տւեց... Դրան նա ինքը բաղանիք էր անւանում և ամեն շաբաթ, առանց բացառութեան, նա ընդունում էր այդ բաղանիքը:

Շունը կանգնած էր նրա մօտ և բաւականութեամբ շարժում էր պոչը: Փորձով գիտէր, չիշում էր, որ իւր տէրը բաղանիքից չետոյ աւելի մեղմ է, բարի:

Մոսկւա 1904 Հոկտեմ.



կին ևն տալիս չ'այրւող վիշկաները, որոնք այդ սե շրջապատի մէջ շոյում են մարդունեարդերը: Երբեմն զանազան ծայրերից լսուում են ուշ մնացած կանչերի ձայները, որոնք դողալով, վախովիսելով, լալկան ձայներ են հանում, լուում ու նորից տեղի տալիս ճնշող, խուլ դղրդոցին:

Երկուշաբթի է: Նաւթահանքերում կեանքը մի լարւած մեքենայի պէս պտտուում է. մարդիկ ոտից մինչև գլուխ շաղախւած մազուտի մէջ, տենդոտ եռանդով վխտում են մեքենաների, վիշկաների շուրջը:

## Ե Ր Կ Ո Ւ Ծ Ա Բ Թ Ի

Թանձր մշուշի մէջ կորած է ամբողջ Բալասանին: Տօթ է, մուխը, կարծես, նիգ է թափում վեր բարձրանալ, բայց յուսահատւած քանի զնում աւելի է թանձրանում: Մրի փոքրիկ հատիկները թռչկոտում են օդի մէջ: Վիշկաները տխուր սեռուած, կ'ատես կուչ են եկել, փոքրացել: Սմեն կողմից իրար են խառնել կանչերի ձայներ: Գոլորշին խողովակներից հեալով դուրս է վիժում: Փողոցներում անցկացրած խողովակներից մազուտը խվում է պատերին, յուսահատ ձայներ հանում, մի վայրկեան լուում և նորից նոյն եռանդով խրվում ու առաջ սահում:

Առաւօտ է: Արևը կամաց, կամաց բարձրանում է, մառախուղը հեազհեաէ նօսրանում: Տեղ-տեղ նորահարսների նման սպիտա-

Նաւթահանքերից առանձնացած ընկած է Սաբունչի դիւղը, նեղ, ծուռ ու մուռ կեդտոտ փողոցներով: Համարեա ամեն մի քալափոխում պատահում են ուռած դէմքերով մարդիկ: Նրանք օրօրելով դիմում են դէպի օղեստուն, որտեղից լսում են խմողների խրուպոտ ձայները: Օղեստից ոչ հեռու, պատերի տակ՝ փողոցի միջում թափթփւած են ալլանդակւած դէմքերով մարդիկ: Իէմքի մի մասը թաղւած դարչահոտ ցեխի մէջ, կիսաբաց ուռած շրթունքներից մի ինչ որ հեղուկ է ծոռում:

Երկուշաբթի է: Օղեւունքը շարունակ լի-  
քք: Դուրս են գալիս մտնում: Իւզոտ սեղան-  
ների առաջ նստած են նրանք: Սեղանների  
վրայ դրած է օղի, մի կտոր սև հաց, մի  
ափսեի մէջ թթու դրած վարունգ կամ աղի  
ձուկ: Բոլոր սեղանները բռնւած են. բոլորի  
առաջ նստոտած են մարդիկ՝ կաշւի նման սև,  
փայլուն շորերով, դէմքերը, մազերը, ձեռները  
կեղտոտ, մրոտ:

Օղեւունքն էլ իրա յաճախորդների նման  
կեղտոտ է: Յատակի վերայ մի մատնաչափ  
կեղտ, որը երևի տարիներով չի մաքրւած:

Սեղաններից մէկի մօտ, ձեռները կրծքի  
վրայ ծալած, կանգնած էր մի նիհար, հիւանդ  
դէմքով՝ մօտ 27 տարեկան մի կին: Նա ան-  
թարթ, լուռ նայում էր նստածներից մէկի  
վերայ, որը առանց ուշք դարձնելու՝ մէկը միւսի  
յետևից դատարկում էր օղու բաժակը ու  
խռպոտ ձայնով մի ինչ որ լկտի երգ երգում:

— Գնանք... երկչոտութեամբ ասաց կինը՝  
դառնալով նրան:

— Բաւականն է, գնանք, աղաչելով կրկնեց  
նա, քարշելով նրա թևից:

— Կորիւր գլխիցս, առանց նայելու նրա  
վերայ՝ դուռաց նա՝ օղու բաժակը ամուր  
խփելով սեղանին: — Փողերը իմս են, ես եմ

աշխատել, ինչ կ'ուզեմ՝ կանեմ... Արի դու էլ  
խմիր... խմիր:

Նա լքցրեց բաժակը և կանգնելով մօտե-  
ցաւ կնոջը:

— Ա՛ռ, խմիր:

— Ես չե՛մ ուզում, կո՛րցրու:

— Ես հրամայում եմ, ես քո մարդն եմ,  
դու իմ կի՞նն ես, թէ չէ՛, ամուսինդ հրամա-  
յում է՝ պէտք է խմես...

— Խմիր... խմիր... ձայնակցեցին սեղա-  
նակիցները հռհռալով:

— Անիճւէք դուք... անիճւէք... ար-  
ցունքները սեղմելով մղկտաց նա՝ հրելով իրա-  
նից բաժակը:

— Ձե՛ս ուզում... ես ինքս կ'խմեմ... իսկ  
դու ու՛ր... թէ չէ՛ կ'չարդեմ, բռունցքը սե-  
ղանին խփելով որոտաց նա նստելով տեղը:

— Հօ... հօ... հօ... հօ, դուռաց հարևան  
սեղանի մօտից մէկը՝ կանգնելով:

— Կորիւր աշխատելից, թէ չէ, կ'չարդեմ...

— Ամաչի՛ր, մարդ ես, երեխայք ունես,  
տանդ հաց չ'կայ...

— Զհանդամբ ձեր գլուխը... ոսդ, շան  
աղջիկ, թէ չէ՛ ատամներդ փորդ կ'թափեմ:

Կինը վախեցած մի քայլ յետ գնաց, նա-  
յեց նրան, շրթունքները դողացին, դէմքը ծա-

մածուէց, արցունքները սկսեցին հոսել նրա գունատ այտերի վրայով:

— Դու... դու... կմկմաց նա և էլ չ'կարողացաւ շարունակել: Արցունքները խեղդեցին նրա ձայնը և նա արագ դուրս գնաց:

— Է՛յ... կէս շիշ օղի...:

Երկուշաբթի է, ծանր օր, այս—օր շատերն են խմում, շատերը դործի չեն դնացել, հինգ օր անընդհատ աշխատել են, կիրակին խմել, իսկ այսօր թարմանում են:

Խմում են օղետներում, խմում են փողոցներում, խմում են բանց աներում: Երկուշաբթի Սաբունչում ամեն անգ խմում են: Յետոյ էլի կ'սկսւին աշխատանքի ծանր օրերը՝ սև փողեր աշխատելու, որ կիրակի նորից խմեն, մոռանան շաբաթւայ ծանրութիւնը:

Երկու շաբթին ծանր օր է: Իսկ մնացած օրերը աւելի ծանր:

— Դէ՛հ, թող օղի'ն մոռացնէ այդ ծանր օրերը:

Մոսկւա 1904 թ.

## ԵՐԿԱԹ ՀԱՒԱՔՈՂՆԵՐ

Համարեա ամեն օր ես պատահում եմ նրանց: Սև մրի մէջ կորած տասր-տասներկու տարեկան տղաներ են. հազուստները պատառոտած, ոտաբորիկ, գլխներին զանազան աշակերտական զլխարկներ: Մի մի կեղտոտ առպրակ ուսերին, ամեն առաւօտ նրանք հաւաքւում են Սաբունչի տանող դնացքի կայարանը և առաջին զանգից յետոյ ամեն մէկը աշխատում է դաղանի մտնել վագօնը և թաղնւել նստարաններից մէկի տակ:

Գնացքը շարժւեց: Երկուօր թաղնւել էին այն վագօնում, որտեղ ես էի: Նրանք կիսով չափ դուրս էին հանել զլուխները նստողների ոտների արանքից ու մէկների նման այս ու այն կողմն էին նայում:

— Գալիս է... շնչաց նրանցից մէկը.  
երկուսով էլ արագ քաշեցին գլուխները:

— Աղա՛... գնա՛ց:

— Գնաց, դուրս եկէք.

— Հը՛, էդտեղ վատ է, հա՛... հարցրեց՝  
կողքիս նստած մի հաստ, ալեխառը մագերով  
պարոն:

Նրանք վախվխելով հանեցին գլուխները  
ու համողելով, որ չենք խաբում, կիսով չափ  
դուրս սողացին նստարանների տակից:

— Էդ ո՛ւր էք ամեն առաւօտ էդպէս  
խմբով դնում, հարցրեց հաստ պարոնը կիսա-  
ժպտով:

— Բալախանի:

— Ի՞նչ էք անում այնտեղ:

— Երկաթ ենք հաւաքում:

— Ձէք հաւաքում, գողանում էք, մէջ  
մտաւ դիմացս նստողը:

— Խի՞ պտի գողանանք... բարկացած  
ձայնով ասաց նրանցից մէկը:

— Բա ո՞րտեղից էք հաւաքում, որ չէք  
գողանում:

— Ինչ փողոցներում, աղբի մէջ, լինում  
է՛ էն ենք հաւաքում:

— Լաւ, գիտեմ, կ'գողանաք էլ, ժպտա-

լով ասաց նա՝ վառելով հանդած ծխա-  
խոտը:

— Սրեկան ինչքան կ'հաւաքէք, շարու-  
նակեց հաստ պարոնը:

— Աղա, Աստուած վկայ, չենք գողանում:

— Գիտեմ, գիտեմ, որ չէք գողանալ. նա  
հանաք է անում, քանի՞ կոպէկի էք հաւա-  
քում:

— 20 եւ 25... կանդուկտորը... վախե-  
ցած կիսածայն շնչաց նա և վայրկենաբար  
երկուսն էլ անչայտացան:

— Անցկացաւ, դուրս եկէք:

— Գնա՛ց, կիսածայն շնչաց մէկը՝ վախ-  
վխելով հանելով գլուխը:

— Գնաց, գնաց:

— Խէչօ, դնացել է, — դուրս եկ:

Էստեղ էլ լաւ է, ձայն տուեց Խէչօն նրս-  
տարանի տակից, մի ինչ որ եղանակ մոմը-  
ռալով:

— Այ տղա՛, Խէչօ, էդ ի՞նչ էս երգում,  
հարցրեց հաստ պարոնը:

— Երգ է, էլի՛:

— Բարձր երգիր:

— Բան չունե՛ս, կանդուկտորը կ'լսի:

— Երգի՛ր, երգի՛ր, երբ գայ՝ իմաց կ'ը  
տանը:

— ՁԼ, չեմ կարայ, յամառում էր Խէ-  
ջօն:

— Երգի՛ր, թէ չէ կանդուկաօրին կ'ա-  
սեմ, որ վեր բերի:

— Ձեռք ի՞նչ կ'ընկնի:

— Աղա Խէջօ՛, երգի՛ր, ի՞նչ էս նազ ա-  
նում... աղա՛, ուզո՞ւմ ես՝ էս երգեմ:

— Լաւ, նա որ չի երգում, դու երգի՛ր:

— Ի՞նչ կ'տաս, աղա: Խօսքերը երկա-  
րացնելով՝ կձկմաց նա:

— Մի կոպէկ:

— Քիչ է, աղա:

— Լաւ, երկու:

— Ե՛րեք, ե՛րեք, աղա՛:

— Լաւ, լաւ, դէ՛հ երգի՛ր:

— Ի՞նչ երգեմ, մի քիչ մասածելուց յե-  
տոյ հարցրեց նա:

— Ինչ ուզում ես:

— Է՛հ, միտս չի գալիս:

— Երգի՛ր, երգի՛ր, շատ մի խօստ:

— Խէջօ... դու էլ դիտլ ածա:

Նա գլուխը կոխեց նստարանի տակը, մի  
քանի անգամ հաղաց...

— Սկսե՛մ:

— Հա՛... հա՛:

— Փողը կ'տա՛ս...

Չ'սպասելով պատասխանի՝ կանացի ծայ-  
նով, արագ, խօսքերը խառնելով մէկը միւսին,  
նա սկսեց:

Փալ բաց արեց դարաչին,

Սաբէթին առաւ դափաչին,

Ոտդ կոտրւի, Ստեփան,

Որ չ'գնայիր Երեան:

— Աղա՛, էլ չեմ իմանում:

— Այ տղա, էդ ի՞նչ երգ է: |||

— Երգ է, էլի՛:

— Ո՞րանդ էս սովորել:

— Եստիմ, սովորել եմ:

— Հլա մէկ էլ երգի՛ր:

— Մի շահի կ'տա՛ս:

— Կ'տամ, կ'տամ, երգի՛ր:

— Աղա, մի շահի տուր, էս էլ երգեմ,  
գլուխը նստարանի տակից հանելով՝ ասաց  
Խէջօն:

— Հը՛, փոշմանեցի՛ր, հիմայ էլ էս չեմ  
ուզում:

Ոտդ կոտրւի, Ստեփան,

Որ չ'գնայիր Երեան:

Լաւում էր նստարանի տակից տղայի  
երգի ծայնը:

Վագօնուժ եղածները հաւաքուել էին մեր նստարանների առաջ և ժպտալով լսում էին:

— Դէհ, աղա՛, մի շահին տուր, նստարանի տակից դուրս սողալով ասաց նա՛ մեկնելով ձեռքը:

— Ի՞նչ շահի:

— Վա... աղա՛, չ'ասացի՞ր, որ երգիր՝ կ'տամ:

— Բա էդ ե՞րգ է, «զարաչի, դափաչի, ոտդ կոտրւի»:

— Է է... Ասացիր՝ կ'տամ, հիմաչ էլ չես տալիս, էդ ի՞նչ աղա ես... աղա՛, տո՛ւր... աղա, հոգուդ մեռնեմ, տո՛ւր... աղա՛, շանիդ դուրբան...

— Կանդուկտորը...

Յանկարծ կանչեց հաստ պարոնը: Երկուսն էլ արագ մտան նստարանի տակը:

— Սուտ եմ ասում, դուրս եկէք, ծիծաղելով ասաց հաստ պարոնը, մի 5 կոպէկանոց դնելով նրա ձեռքին...

— Ի՞նչ ես խարում...

Բարկացած ասաց Խէչօն, լսէթ-լսէթ նայելով հաստ պարոնի վերայ:

— Ա՛յ, հիմաչ մէկ էլ որ անցնի՛ ասելու եմ, որ քեզ դուրս անի:

— Ձէ՛, չես ասիլ, դու լաւ աղա ես:

— Թող ասի, ասաց Խէչօն մի արհամարական հայեացք ձգելով հաստ պարոնի վերայ — էլ վեր բերելու տեղ չ'կայ:

— Բա, ինչո՞ւ չէք դուրս գալիս:

— Որ տեսնի ախար կ'ծեծի՞:

— Բա նրա ձեռքը ի՞նչ կ'ընկնի:

— Եսս-իմ...

Գնացքը կանգ առաւ: Նրանք դուրս թափուեցին այս ու այն վագօնից, միմեանց ձայն տալով, այս ու այն կողմ վազվղելով:

— Խէչօ՛... Գալուստ, էստեղ ենք... էստեղ:

Խէչօն և Գալուստը վազեցին ընկերների ձայն:

Գալուստը ուրախ—ուրախ սկսեց պատմել ընկերներին, որ ինքը 5 կոպէկ է աշխատել: Բոլորն էլ նախանձելով նայում էին նրան:

— Գալուստ, բան կ'առնե՞ս:

— Հը՛, կ'առնե՞ս, դիմեցին միւսները այս ու այն կողմից:

— Երկու կոպէկի կ'առնեմ:

Լուրջ դէմքով ասաց Գալուստը. ձեռքը

զրպանը տարաւ, կարծես, ստուգելու՝ այն-  
տեղ է, թէ չէ՝

— Բա որ հէրս իմանայ, որ փող եմ մըս-  
խել, ախար կ'ճեճի՞... մի քիչ լուռ թիւնից յե-  
տոյ աւելացրեց նա.

— Ո՞րտեղից պիտի իմանայ:

— Մենք չենք ասիլ:

— Աստուած վկայ, չենք ասիլ:

— Չենք ասի... չենք ասի...՝ ձայն ձայնի  
տւին նրանք:

— Գալուստ ի՞նչ ես առնելու, հարցրեց  
մէկ զուռնատ, մրից սևացած դէմքով, մօտ  
11 տարեկան մի տղայ, մեծ, փայլուն աչքե-  
րով:

— Չեմ իմանու՞մ ի՞նչ առնեմ:

— Կամֆէտ...

— Սեմիչկա:

— Տղէրք, եկէք շոր առնէնք... եւ թէ  
չէ խաղող:

— Քիչ կ'տան, աւելի լաւ է սեմիչկա:

— Հա՛... հա՛... Սեմիչկա...

Համաձայնեցին բոլորը:

— Է՛հ, տղէրք զնանք, ձայն տւեց մէկը,  
որ սարիքով բոլորից մեծ էր երևում:

Գնանք... Գնանք...

Մէկ մէկի խփելով, բարձրաձայն ծիծա-  
ղելով, նրանք զիմեցին դէպի Բալախանի—եր-  
կաթ հաւաքելու:

Մոսկւա 16 Հոկտ. 1904



## Հ Ա Մ Ե Ր Գ

Անծրևի կաթիլները խառնելով հողի մրի հետ, իրանք էլ սեանում էին, և քանի դուրսը անծրևը սաստկանում էր, այնքան էլ այդ սև կաթիլները չաճախ էին ընկնում:

Առաստաղի բոլոր կողմերից կաթում էր: Յատակի վրայ տեղ-տեղ լճացած էր սևացած անծրևաչուրը: Երկու կիսամերկ երեխաներ մտել էին տախտի տակ և պատսպարել անծրևի պաղ կաթիլներից: Առաստաղի մէջտեղից կախւած օրօրոցի մէջ անծրևի կաթիլներից երեխան զարթնել էր և ճչում էր, ձչում այնպէս, որ ամեն մի բոպէ սպասում ես, որ ահա կ'պայթի... կամ վախենում, որ շունչը կտրւեց: Տասնումէկ տարեկան մի նիհար աղջիկ, ոտաբորիկ կանգնած օրօրոցի մօտ, արագ, նեարդային կերպով օրօրում է, նանի ասում...

բայց երեխան քանի գնում, այնքան աւելի է ձայնը բարձրացնում:

— Չօռ... Չօռ... բեզ... յուսահատւած, լալկան ծայնով մղկտաց նա և սկսեց հանել երեխային օրօրոցից:

Մի քիչ անցած երեխան լռեց, տաքացաւ քրոշ գրկում ու քնեց:

Անծրևը քանի գնում սաստկանում էր: Կայծակը թեթև լուսաւորեց այդ սենեակը, երկինքը որոտաց: Սենեակում մի վայրկեան բոլորը լուռ էին: Տախտի տակ նստածները, զուռնատել և կարծես ոլժով էին զսպում արցունքները:

Ո՛ւր է մայրիկը... Ես վախենում եմ, գլուխը հանելով տախտի տակից՝ հարցրեց նրանցից մեծը:

— Մայրիկը... կրկնեց փոքրը և սկսեց լալ:

— Չայնդ կտրի՛ր, կ'զարթեցնես, հողիդ կ'հանեմ, տսաց մեծ քոյրը, երեխան գնելով օրօրոցի մէջ:

Բայց քրոջ սպառնալիքը, ինչպէս երևում է, չաճեց, նա ծայնն աւելի բարձրացրեց:

— Չայնդ... ծայնդ... ծայնդ կտրի՛ր...

Բայց նա առանց ուշադրութիւն դարձ-

նելու քրոջ վերայ, առանց մի վայրկեան դա-  
դար առնելու, այնքան ճշայն, որ օրօրոցի մի-  
ջինն էլ զարթնեց և սկսեց ձայնակցել եղբօրը:

— Զօռ... Զօռ ձեզ, ճշայն աղջիկը՝ վա-  
զելով օրօրոցի մօտ...

— Ու... ու... ու... նանի արա... ու...  
ու... աղջիկը նորից հանեց ու ցեխօտ դեմնի  
վրայ յետ ու առաջ դնալով նանի ասաց, բայց  
ոչինչ չ'օգնեց...

— Ա... ու... ու էհ... ա...

— Ես քեզ ցոյց կ'տամ լիրբ... էշ...  
գոռաց նա՝ ձգելով լացող երեխային օրօ-  
րոցի մէջ: Արագ մօտեցաւ տախտին, ականջից  
բռնած հանեց եղբօրը տախտի տակից ու ա-  
նիծելով, լալով սկսեց անխնայ կերպով ծե-  
ծել:

— Զայնդ... Զայնդ... լալով ճշում էր  
նա:

Փոքրը օրօրոցից էր ճշում, մեծ քոյրը  
բարկութիւնից և յուսահատութիւնից էր լա-  
լիս, միւսին ծեծում էին... տախտի տակ մնա-  
ցածը, որը մինչև այդ շրթունքները կախած,  
լուռ նստած էր, տեսնելով, որ բոլորը լալիս  
են՝ ինքն էլ կամաց, կամաց ձայնը բարձրա-  
ցրեց:

— Անիծէք... անիծէք... լալով կրկնեց

մեծ քոյրը, թողեց եղբօրը, ընկաւ տախտի  
վերայ և սկսեց հեկեկալով լալ:

Այդ ըռպէին ոտից մինչև զլուխ շուր  
կտրած՝ կիսով չափ նաւթով լիք դոյլերը ու-  
սին՝ բակը մտաւ մի նիհար կին: Մինչև ծնկ-  
ները մերկ ոտերը ցեխօտ էին, շրջազգեստը  
մինչև դօտիկը մազուտի մէջ, որի ծայրերից  
մազուտախառն շուրը կաթկթում էր սրունք-  
ների վերայ:

Նա կաղում էր, ամեն մի քայլ փոխելիս՝  
դէմքը տանջող արտայայտութիւն էր ստա-  
նում, նա հազիւ էր փոխում իւրաքանչիւր  
քայլը:

Դեռ հեռւից նրա ականջին հասաւ լացի  
ձայները: Նա դոյլերը թողեց դուրսն ու մը-  
տաւ սենեակը, առանց ուշք դարձնելու երե-  
խանրի վրայ, առանց մի խօսք ասելու, ըն-  
կաւ տախտի վրայ և բարձրաձայն սկսեց լալ:

Մեծ աղջիկը բարձրացրեց զլուխը, վա-  
խեցած հարցական կերով նայեց մօրն ու ոտի  
կանգնեց: Միւսները տեսնելով, որ մայրներն  
էլ է լալիս, իրանք էլ սկսեցին նոր ոչժով լալ,  
բացի փոքրից, որ յօգնել էր ու քնել:

Մայրիկ, ի՞նչ է պատահել, արագ մօտ  
դալով հարցրեց աղջիկը:

— Ո՞տս... ո՞տս... ո՞ւ՛՛՛ մեռայ... մեռայ:

— Մայրիկ, արիւն է դալիս, ի՞նչ է ե-  
ղել, վախեցած ճչաց աղջիկը, աւելի մօտ նայ-  
ելով ոտի վրայի վերքին, որը համարեա ծած-  
կւել էր կեղտի տակ:

— Մեխ է մտել... մեխ... սրտիս եղը  
քաշւեց մինչև հաննեցի... մի շոր տուր, ցաւից  
թուքը կուլ տալով՝ աւելացրեց նա:

Աղջիկը շփոթւած դէս ու դէն ընկաւ  
ու ոչինչ չ՝ դանելով, քարշեց օրօրոցից կախ  
ընկած շորը և արագ մօտեցաւ մօրը:

— Կապե՞մ.

— Հա.

Աղջիկը մօր օգնութեամբ կապեց վիրա-  
ւոր ոտը:

Մայրը մի քիչ տնքտնքաց ու մի խոր  
շունչ առնելով՝ ասաց.

— Էդ կտորւածները ի՞նչու են լայիս...  
ձայներդ կարէ՛ք...

— Մայրիկ, Գայանը ինձ ծեծեց:

— Մայրիկ, քաղցած եմ, տախտի տա-  
կից զլուխը հանելով՝ կանչեց դանդուր, կեղ-  
տոտ մազերով մի 5 տարեկան աղջիկ...

Անծրերը դադարում էր, ամպերը ցրւում.  
տեղ—տեղ, երևում էր ջինջ կապոյտ երկինքը.  
արևը երբեմն հանում էր զլուխը ամպերի տա-  
կից և իսկոյն թափնւում...

Առաստաղից դեռ շարունակւում էր եր-  
բեմնակի կաթկթել:

Մոսկւա 28 դեկտեմբ. 1904

|||



||

## ՆՐԱ ՍԵՆԵԱԿԸ



Մի ընդարձակ սենեակ էր, առաստաղը ցած, փտած զերանները տեղ-տեղ նաքճքած, կուացած: Սենեակի միջից առու էր փորած, որտեղից մազուտախառն սև դարչահոտ հեղուկը դուրս էր գալիս դէպի բակը:

Առանց ապակիների պատուհանը ծածկւած էր կեղտոտ, սևացած ցնցոտիներով: Պատուհանի ու դրան առաջ բարձրանում էր մի մեծ պատ, որը խանդարում էր լոյսի մի նշույլ անդամ թափանցելու այդ սենեակը: Սենեակում կիսախաւար էր, մռայլ պատերից ջուր էր կաթկթում, այս ու այն կողմ թափթփւած էին անպէտքացած իրեր, նաւթի տակառներ, տեղ-տեղ չատակի վրայ լճացած էր սև հեղուկը. օդը խոնավ էր, խեղդող: Պատի

տակ՝ ցեխոտ չատակի վրայ, ցնցոտիների մէջ, փաթաթւած պառկած էր մի կին:

— Այստեղ ապրում են, սարսափած հարցրեց սանիտարական բժիշկը, մի քալլ առաջ գնալով:

— Այստեղ ապրում է՞ն և դուք սրանից փոփ էք վերցնում:

— Ի՞նչ ունի, որ ինչ վերցնեմ: Ոչինչ չ'ունի, աղան նոր մեռաւ, երկու շաբաթ առաջ թաղեցին, աշխատող չ'ունի, ինքը ծեր է՝ հիւանդ, դրանից ի՞նչ առնեմ, մեղքս եկաւ, խեղճ կին է, վարձք է, թող մնայ, մէկ է, շատ չի ապրի:

— Այստեղ խողեր անգամ չի կարելի պահել, ուր մնաց մարդ...

Կինը, կարծես, ոչ ոք դորձ չ'ունելով, բարձրացաւ՝ նստեց տեղը, չորացած, կմախք դարձած մատները տարաւ դէպի դուխր, շոյնց նակատը, աչքերը, կարծես, ուղում էր քաշել աչքերի վարապոչը, որը նրան խանդարում էր պարզ տեսնել, թէ ի՞նչ է կատարւում շուրջը: Մարած՝ ոչինչ չ'արտայայտող խոր ընկած աչքերը բարձրացրեց, ուղեց մի բան ասել, բայց չ'կարողացաւ. կծկեց ցնցոտիների մէջ ու ծանր կերպով սկսեց հեւալ: Սև կեղտի մէջ կորած դէմքը ծամածուեց, կարծես, մի բան խանդա-

րում էր նրան շնչել, ցնցւեց ամբողջ մարմնով, որին հետեւեց խուլ երկարատե մի հազ. աչքերը լցւեցին արտասուքով, դէմքի երակները ուռան:

— Ինչո՞ւ հիւանդանոց չես դնում, այնտեղ կ'բժշկեն, կրկերակրեն:

Նա ոչինչ չ'պատասխանեց:

— Պէտք է հիւանդանոց տանել, մէջ մըտաւ սանիտարներից մէկը:

— Այո, բայց նախ քան հիւանդանոց, պէտք է հանել այս տեղից... Ի՞նչպէս ես թող տւել, որ այստեղ մարդ ապրի, դարձաւ բրժիշկը տանաիրոջը:

— Ի՞նչ ինչ, փող չի աւլիս, բան չի, ուղղում էք՝ հէնց էս սհաթին դուրս անեմ:

— Այստեղ խողեր անդամ չի կարելի պահել... այսօր և եթ պէտք է փակես դուռը, միւս անգամ տուգանքի կ'ենթարկեմ, եթէ...

— Լաւ, աչքիս վրայ... է՛յ, վեր կաց, զնա, քեզ համար ուրիշ տեղ փնտրիր:

— Ես ո՞ւր գնամ...

Ուր ուղղում ես... լսո՞ւմ ես, բժիշկը ի՞նչ է ասում, էստեղ չի կարելի ապրել, չի կարելի:

— Ես ո՞ւր գնամ, տեղիցս շարժւել չեմ կարողանում, խօսքերը երկարացնելով մրմնջաց նա:

— Գնա հիւանդանոց... ախար էստեղ ապրել չի լինիլ... մեղք ես—դարձաւ բժիշկը նրան:

Լուսանում էր: Երկինքը ժանգոտել էր՝ ամեն րոպէ սպառնալով ժայթքւել հեղեղի պէս: Օդը ծանր էր. մրի հատիկները վխտում էին օդի մէջ, հեռւից լսում էին կանչերը: Ամենքը շտապում էին դէպի հանքերը: |||

Սաբունչու ճեղ-կեղտոտ փողոցներից մէկում, պատի տակ, ընկած էր վախ, չորացած մի կին. անշարժ նա փուլած էր երեսի վրայ. ցնցոտիների տակից տեղ-տեղ երևում էր նրա մերկ մարմինը:

Բոլորը շտապում էին. կեանքը եռում էր, ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում այդ պատի տակ ընկած կնոջ վրայ:

— Լկել է շան քածը...

Ասում էին ու հեռանում: Բայց ոչ ոք չ'փորձեց սեսնել՝ լկե՞լ է, թէ՞ մեռել:

Մոսկւա հոկտեմբ. 12 1904 թ.



խփում միմեանց, հզովում ու էլի շարունակում դունչերը խրած ցեխի մէջ կերակուր որոնել:

Փողոցներից մէկում, ցեխի մէջ կանգնած էր պխաբաց, խիտ, կեղտոտ մազերով մօտ երեսուն տարեկան մի մարդ — մի ժամից աւելի է, որ նա կանգնած է այդտեղ, մի քայլ անում է դէպի փողոցի պատուհանը եւ, չ'վրտահանալով աւելի մօտ գնալ՝ էլի ետ է դալիս, կանգնում նոյն տեղում: Պատի սպիւղըրւած էր մտանաչափ ճաքերով մի սււայած տախտ, վրան մի քանի հին, կեղտոտ շորեր: Պատուհանից լսում էր մի խռպոտ կանացի ձայն, որը, անչայտ, թէ ո՞ւմ, բարձրածայն հալհոյում էր, անիժում:

— Դեռ էստե՞ղ ես, զլուխը պատուհանից հանելով դռաց մօտ 28 տարեկան տղեղ հաստ շրթունքների, ուռած աչքերով մի կին:

— Անցադիրս տուր... զխարկս տուր... մի քանի քայլ դէպի պատուհանը անելով՝ մրմնչաց նա:

— Ս. թէ ի՞նչ կ'տամ, շան լակոտ, բռունցք ցոյց տալով՝ ասաց նա, միւս ձեռքով քորելով նօսը, կեղտոտ մազերով ծածկւած զլուխը:

## Տ Ն Ի Ո Ր Ը

Երբորդ օրն է, որ անձրևը անընդհատ, փոքրիկ, մանր հաախկներով անդում է: Անձրևաշուրը խառնել է զանազան կեղտոտութիւնների հետ, թանձրացրել, լնացել փողոցներում, բակերում: Սաբունչու ամիսներով հաւաքւած կեղտը այսօր դուրս է թափւում: Սառկած կատու, շուն, հաւ, ոչխարի գանգ, ոսկորներ, հին շորեր, բոլորը խառնել են ցեխի հետ: Անձրևի ջինջ կաթիլները ընկնում են, մի վայրկեան դողում՝ կարծես, չ'ուզենալով խառնել այդ դարձ զանգւածին, բայց անկարող իւր յստակութիւնը պահպանելու, անհետ կորչում: Փողոցներում մարդ չ'կայ, բոլորը քաշել են իրանց բնակարանները, միմիայն մի քանի խոզիւր, ամբողջապէս շաղախւած ցեխի մէջ, դէս ու դէն են վազվզում, դնչերով

— Անձրև է դալիս, ցուրտ է, վերև մը-տիկ տուր, Ասուած կայ, ի՞նչ եմ արել քեզ, որ դուրս ես անուձ, մի մանէթ չի՞, կ'տամ, էս բոպէիս չ'ունեմ, հօ չե՞ս մորթելու, ողորմելի, լալկան ձայնով ասաց նա՝ ցնցելով ու սերր:

— Սատկես էլ՝ չեմ թողնիլ... չեմ թողնիլ, չե՛... դուաց նա՝ փակելով պատուհանը:

Փողոցում կանգնածը կուչ եկաւ և ողորմելի տեսք ընդունելով՝ լուռ մօտեցաւ տախտին և նստեց:

Մօտ 10 բոպէ նա լուռ նստած էր, ինքըն էլ, չ'զիտէր՝ ինչո՞ւ, լանկարծ ոտի կանգնեց մօտեցաւ պատուհանին, մի անգամ կամաց, մատով խփեց պատուհանի ապակուն ու մի քայլ ետ քաշւեց: Ներսից ոչ ոք չպատասխանեց: Նա համարձակութիւն առնելով՝ էլի մօտեցաւ, մի քանի անգամ, այժմ, աւելի ամուր խփեց, էլի՛ ոչ մի ծայն: Ոտների ծայրերի վրայ կանգնելով՝ նայեց ներսը:...

— Թո՛ւ, ... քու հերն անիծած... Մրափիկ է, բարկացած ասաց նա՝ հեռանալով պատուհանից:

— Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ... դուրս արեց ու դուռն էլ փակեց:

Երկար ժամանակ մտածեց, բայց մի եզրակացութեան չ'գալով՝ մօտեցաւ տախտին ու թեք ընկաւ՝ շորերը դնելով կռան տակը:

— Աղա, ճանապարհ տուր, ի՞նչ ես փողոցի մէջ տեղում մեկնւել:

Այդ ձայնից նա բարձրացրեց գլուխը: Գլխավերևը կանգնած էր մի բարձւած էշ, կողքին էլ մի համշարի: Էշը դունչը մօտեցրել էր նրա գլխին և հոտոտում էր:

— Դէ՛հ... դու ասա, աղբէր — սկսեց նա — ես ի՞նչ անեմ, էս անիծածը — մատով ցոյց տւեց պատուհանը — կէս շիշ օղու համար դուրս է արել, մի տարի է հետը ապրում եմ, ինչ աշխատել եմ՝ զրա բողազն է մտել...:

— Շուտ, ճանապարհ տուր — ոչինչ չ'հասկանալով՝ դուաց թուրքը՝ խփելով նրա ուսին:

— Ինչո՞ւ ես խփում... քօփաղօղի... հանգիստ ծայնով ասաց նա, տեղից բարձրացաւ և սկսեց տախտը այս ու այն կողմ քաշքշել:

— Շուտ, շուտ... — Անդադար կրկնում էր անհամբեր թուրքը — էն կողմը քաշիր...:

Նա հասկանալով, թէ ինչ է պէտ անել, քաշեց տախտը փողոցի մէջտեղը:

— Անց կաց:

Թուրքը էշի հետ անցա՛ առանց ուշք դարձնելու նրա վրայ: Նա նորից ուզեց կանգնեցնել Թուրքին, զանգառուել, ասել, որ ինչ աշխատել է՝ դրա բողազն է մտել... բայց նրկատելով, որ շատ հեռացել է, քորեց գլուխը, շրթունքները չփացրեց միմեանց, մի վայրկեան տատանւելուց չետոյ վճռաբար մօտեցաւ տախտին և նստեց: Երկար այդպէս անշարժ նա նստած էր, մտքերը ցրուում էին, չէր կարողանում կենդրոնանալ, ակամայից նա չիշեց այդ ամբողջ տարւայ կիանքը նրա հետ և մի խոր անքաշեց... Սկսեց հաշւել, թէ ի՞նչքան փող կ'ունենար, եթէ մենակ լինէր և հաւաքէր աշխատածը: Մասների վրայ հաշւում էր, սխալուում, նորից սկսում... բայց չուսահատուած, որ դժւար է ճիշտ թիւը որոշել, դադարեց հաշւելուց, վճռելով, որ շատ կ'լինէր: Կ'հաւաքէր, կ'երթար հայրենիք, մի լաւ, սիրուն, ջահիլ աղջիկ կ'առնէր և ուրախ, երջանիկ կ'ապրէին... Նա երեւակայեց իրա տունը, կնոջը, երեխաներին այնքան պարզ, որ մինչև անգամ հրձկանքից ժպտաց և անքաշեց:

Այո, այո, պէտք է զնալ նրա մօտից, ինչքան շուտ, էնքան լաւ... Մտքումը դարձացաւ, որ այսքան ուշ է խելքի գալիս...—հիմայ որ աղաչի էլ, էլ չեմ զնայ, վճռեց նա բարձրա-

ձայն մտածելով... բայց ո՛ւր զնամ—Մի քիչ մտածելուց չետոյ՝ մոմուսց նա—Անցադիրս նրա մօտ է, ուրիշ բաներ էլ կան... պէտք է վերցնել... Նա ուզեց ոտի կանգնել, զնալ, կանչել այդ լիրբ կնոջը, ասել, որ անցադիրը տայ, վերցնի ու զնայ, բայց աչքերը խփուում էին, գլուխը ծանրացել էր, կ'ասես պողպատից լինէր թափւած: Նա թափ տւեց իրան, նորից փորձեց բարձրանալ... բայց թուլացած ընկաւ տախտի վերայ: Գլուխը կախւեց տախտից, բորիկ ոտները թաղւեցին ցեխի մէջ: Անծրաւ փոքրիկ հատիկներով թափուում էր նրա վերայ:

— Է՛յ... է՛յ... Ծան որդի, մրափել է... էլ տեղ չ'գտա՞ր, որ փողոցումն ես պառկել:

Նա վեր թռաւ, տրորեց աչքերը, նայեց շուրջը, նորից տրորեց աչքերը...

— Հը՛... ի՞նչ ես նստել, ճանապարհ տուր, շո՛ւտ:

Մինչև ծնկները ցեխի մէջ կանգնած էր մի լղար, ոսկորները զուրս ցցւած ձի, լծած մի մեծ անիւներով սալի: Սալապանը մրտալկը ձեռքին կանգնած էր պատի տակ, պատուհանի դիմացը և բարկացած նայում էր նրայ վրայ:

Նա վեր կացաւ, յօրանջելով նայեց սայ-

լին, լղար, կ'ասես փայտից շինած ձիուն, մի փայրկեան մտածեց...

— Ի՞նչ ես էշի պէս կանգնել ու նայում, քաշիր բակը:

Նա ուրախացած, որ այդպէս հեշտ հնարը գտնեց, իսկոյն տախտի մի ծայրից բռնած քարշեց դէպի դարպասը:

— Ձեռ իմանում՝ ի՞նչ անդգամն է, մի տարի է հետը ապրում եմ, ինչ աշխատել եմ...

— Կր՛... րհ՛... նու... նու... քաշ տուր, մտրակելով ձիուն դռում էր սալապանը, ու շաղրութիւն չ'դարձնելով նրա պատմութեան վրայ:

— Նու... նու...

Ձին երկարացրեց վիզը, ամբողջ մարմնով ձգեց դէպի առաջ, այնպէս որ՝ մարդ վախենում էր, որ ահա, գլուխը, վիզը, ոտները, փորը կ'բաժանւեն միմեանցից ու կ'թափթփուեն: Սալը շարժեց, անիւները մինչև կէսը խրւած յետի մէջ, հազիւ-հազ առաջ ընթացաւ:

— Բոլորը սրան եմ տւել... շարունակեց նա նրա չետեից պատմութիւնը:

Արդէն սկսում էր մթնել, անձրեր ոչ դարում էր և ոչ էլ սաստկանում, այլ միապաղաղ հանդիստ թափւում էր ու թափւում, մի խուլ, մոնոտոն խշշոցով:

— Գիշերը հօ փողոցում չեմ մնալու: տածեց նա և մօտեցաւ պատուհանին, նայեց ներս, ոչ մի ձայն, սենեակը մութ էր, համարեա ոչինչ չէր երևում: Նա ուղեց ամուր խփել պատուհանին, այնքան ամուր, որ ապակիները փշուր փշուր լինեն, բայց չետոյ զղջաց ու կախ ձգեց գլուխը: Անդիտակցաբար նա ձեռքը տարաւ զրպանը, ուրախացած հանեց մի հատ 20 կոպէկանոց, որի դոյութիւնը նա համարեա մոռացել էր: Նայեց, ժպտաց, բայց չիշելով իւր վճիռը, էլ երբէք ոտ չ'դնել նրա շեմքին, ժպիտը փախաւ: 20 կոպէկանոցը դրեց զրպանը, դուրս քաշեց տախտը ու նստեց:

— Ձէ... չէ... չեմ դնալ, հիմալ որ աղաչի էլ՝ էլի չեմ դնալ, անցազիրս կ'առնեմ ու կ'երթամ:

Նա երկար լուռ. նստած էր: Յանկարծ ամբողջ մարմնով մի սարսուռ անցաւ, ցնցեց ուսերը, արագ ոտի կանգնեց, ցուրտ է, դողալով նա մօտեցաւ պատուհանին... Դեռ քրնած էր...

— Ի՞նչ անել...

Նա թափ տւեց գլուխը ու մտածմունքների մէջ ընկաւ: Ի՞նչ անել... ի՞նչ անել. ու գում էր ուրիշ բան մտածել բայց շարունակ կրկնում էր «ի՞նչ անել»: Յանկարծ նրա դէմ-

քը փայլեց, ձեռքը տարաւ զրպանը, ժրպտաց...

Շտապ, շտապ տախտը քարշեց բակը, շորերը դրեց տախտի տակը, իսկ ինքը ոտաբութիկ ու զլխաբաց վազեց...

Տասր բոպէ չէր քաշել, երբ նա վերադարձաւ, վստահ կերպով մօտեցաւ պատուհանին և մի քանի անգամ ամուր—մէկը միւսի չետեից սկսեց խփել պատուհանի վանդակին: Չախ ձեռքը զրպանումն էր—նա մի ինչ որ բան էր թաղցրել:

— Է՛յ... էդ ո՞վ է, քնաթաթախ կանչեց ներսից մէկը:

Նա արագ անցաւ փողոցի միւս կողմը, կանգնեց պատուհանի դիմաց, արագ հանեց մի զրպանից շիշխցանի կողմը սեղմեց պատին՝ կնիքը կոտրելու համար, ապա մի քանի անգամ աչքը ձեռքում խառնեց ու ամուր խփեց ծախ ձեռքի դաստակին: Խցանը դուրս թռաւ և թաղւեց ցետի մէջ:

Պատուհանը արագ բացւեց, ուռած աչքերով կիներ, զլուխը դուրս հանեց և կատաղած դռաց:

— Շուն շան-որդի ու... ա... ա...

Նա կմկմաց և դէմքին մեղմ արտայայտութիւն տալով՝ ասաց—դեռ էգտե՞ղ ես:

— չը, դամ—ժպտալով և ցրտից դողալով ասաց փողոցից նա՝ ցոյց տալով օդու շիշը:

— Ձէ, չի կարելի:

— Տես:

— Ձի կարելի—աւելի մեղմ ասաց նա ու ժպտաց:

— Գամ, թող դամ, մըմնջաց նա:

— Չ՛ր, լաւ թըշւեցիր, ցիստովեցիր, էդ քեզ պատիժ:

— Դուռը բաց, շան նման դողում էմ: ատամները միմեանց խփելով մըմնջաց նա:

— Ձէ, չի կարելի.—բայց տեսնելով օդու շիշը՝ նրա վերի շրթունքը դողաց, աչքերը փայլեցին, ուղեց վազել բանալ դուռը, ընկնել նրա վզովը: Բայց ուղեց մի քիչ էլ չարչարել:

— Ձես ուղում, չեմ գայ, քու հէրն էլ անիծած, էստեղ կ'նստեմ, կ'խմեմ:

— Դէհ, լաւ, արի, արի, ինչքան չ'լինի՛ էլի իմ սիրեկանն էս, մեղք ես, արի, արի:

Նա ժպտալով վերցրեց տախտը, շորերը դրեց կռան տակը և ուրախ ուրախ մտաւ բակը:

# Փ Ա Կ Դ Ո Ւ Ռ Ը

Բոլորովին առանձնացած միւս բնակարաններէից, մուտքի դռան մօտ, միայնակ ընկած էր միջարկանի, անտաշ քարերից անփոյթ շինած մի սենեակ: Դուռը փակ էր, դռան ճակատից կախւած էր մի մեծ փականք:

Նրանք կանգ առան այդ փակ դռան մօտ:

— Ո՞րն է,— հարցրեց բժիշկը՝ շուրջը հաւաքւած թուրքերից:

— Հէնց սա է:

— Բայց սա փակ է:

— Ոչինչ, տեսան, որ զալիս ենք՝ փակեցին:

— Ո՞ւմ էք ուղում:

— Ո՞վ է ապրում այստեղ:

— Մարդ չի ապրում, դատարկ է, անտարբեր կերպով պատասխանեց մի աչքը կեղ-

տոտ, դեղնած թաշկինակով կապած մի կին, հարեւան դռան շեմքում կանգնած:

— Սուտ է, թող բաց անի, հէնց դա է պահողը, ասաց մի բարձրահասակ թուրք՝ մի հայհոյանք ուղղելով դէպի մի աչքը կապած կինը:

— Ձեռքդ ի՞նչ կ'նկնի, որ բաց անեմ... ուղում ես բանս, ի՞նչ կայ, դատարկ սենեակ է...

— Հա՛... հա, բաց արա, ծայն-ծայնի տրւին թուրքերը:

— Սուտ են ասում, ոչ որ չկայ... Սատւած վկայ, սուտ են, միք հաւատալ, շինծու ծիծաղով դարձաւ բժշկին մի աչքը կապած կինը:

— Առաջ կային, հիմայ գնացել են քաղաք— շարունակեց նա— ոստիկանութիւնը եկաւ, արդիլեց, հիմայ էլ չ'կան, գնացին:

— Սուտ է, սուտ է... բալանիքը բեր... թող բաց անի... էստեղ արդիլեցին, էստեղ եկան:

— Հը... մ... դրա հէրն անիծած, դիփ շահիլներին փչացրեց, ատամները կրճատցնելով, մռմռաց մի տարիքով թուրք:

— Լաւ, բաց կ'անեմ, որ բան չ'գտնեք...

Նա բարկացած մտաւ սենեակը, մի վայրկեան յետոյ բանալիների մի կապոց ձեռքին

դուրս եկաւ, կիսաձայն հայհոյելով, ու արագ մօտեցաւ փակ դռանը: Խառնեց բանալիները, փորձեց մէկը, միւսը, ոտով մի քանի անգամ խփեց դռանը...

— Տը... բաց արա, ասաց անհամբեր թուրքերից մէկը՝ մի քայլ առաջ դալով:

— Սուտ է, դիտմամբ է ձգձգում—աւելաջրեց միւսը:

— Սուտ է... էջ:

— Տուր, ես բաց կ'անեմ, առաջ դալով ասաց թուրքերից մէկը և ուզեց առնել բանալիները նրա ձեռքից:

— Ռագ եղիր... Սխալել եմ՝ ժպտալով դարձաւ նա բժշկին, այս բանալիները չէ, սպասեցէք հիմա՛յ կ'բերեմ: Նա կրկին արագ վազեց սենեակը, բերելու իսկական բանալին:

— Հա... հա... հա...—ադա ինչ շէյթան կնիկ է, հոհուացին նրա ետեւից թուրքերը:

— Սուտ են ասում, թշնամութիւն է, վերադառնալով ասաց նա՝ դանդաղելով բանալ դուռը:

— Շատ մի խօսիլ:—Աւաց մի թուրք, խլելով բանալին նրա ձեռքից:

— Ինչո՞ւ ես խլում...

Ձէնդ լաչառ... ատամներդ փորդ կ'թափեմ:

— Ապա փորձիր...

Դուռը բացւեց... նրանց մտնելուց, սենեակի դուռը, որ տանում էր փողոց, արագ փակւեց, թողնելով նրանց կիսախաւարի մէջ: Անկիւնում, խոնաւ պատի տակ, դրւած էր մի հին, մրոտ տախտ. վրան մի կեղտոտ կապերտ դրած: Փոքրիկ պատուհանի փեղկերը ամուր փակւած էին: Առաստաղից կախւած էր սեւացած, սատկած, չորացած հանճերով ծածկւած մի լապտեր: Տախտի մօտ ընկած էր մի կեղտոտ, վարդագոյն շրջադրեստ: Սենեակում համարեա ուրիշ ոչինչ չ'կար, օդը ծանր էր, խեղդող:

— Տը, քիթներդ երկարեց... չաղթական կերպով դարձաւ նա թուրքերին:—Շան լակոտներ, չեն ամաչում, բան ու դործ չունին:

— Ո՞ւր էք փախչում... լսեցիք փողոց... ապա այդ ծաչնին հետեւեցին խոպոտ նշեր և պարզ լսեց:—Օգնեցէք... կարաուլ... սպանում են:

Թուրքերից մի քանիսը վազեցին փողոց՝ տեսնելու, թէ ի՞նչ բան է: Կինը դունատուեց և դուրս դնաց:

Յանկարծ փողոցի դուռը բացւեց և մէկը միւսի յետեւից սենեակ թափւեցին մի քանի ներկւած դէմքերով կանաչը:

— Օգնեցէք... օգնեցէք... հշուժ էին նրանք այս ու այն կողմ վազվզելով:

— Պահ... պահ... պահ... աղա էս ի՞նչ օջին է: Հոհուում էին թուրքերը՝ միմեանց ուսի խփելով:

— Ո՞ւր էիք ուզում փախչել... էս դուռը բացւեց, էն դռնից ուղեցին փախչել... իմ ձեռքից ո՞ւր պիտի փախչէք... հր... ձեր կերած կաթը նզովւի... թուհ... բռունցքը բարձրացնելով զոռաց նա՝ յարձակւելով նրանց վրայ:

Երեքն էլ նորից սկսեցին սարսափելի ճրջալ և այս ու այն կողմ վազվզել, սղմւել սրբան ու նրան, օգնութիւն հալցել:

— Հր... դրանց հէրն անիծած, թողէք շան-սատակ անեմ: Երկու եղբորս փչացրին, մեռանք դեղի փող տալով:

— Ի՞նչ էք ուզում մեզանից,— ձջում էր մօտ քառասուն տարեկան այլանդակ գէմքով մի կին՝ փուլած գետնի վրայ:

— Դուք ո՞վ էք... ի՞նչ գործ ունիք մեզ հետ,— ձեռները կողքին դարսած խրոխտալով դարձաւ մէկը բժշկին:

Բժիշկը ոչինչ չպատասխանեց և պատրաստուում էր դուրս գնալ:

— Կորէք այստեղից: Յետևներիցդ մարդ չենք ուղարկել:— Խրախուսւելով, որ ոչ որ չի

պատասխանում՝ նա ծայրը քանի գնաց աւելի բարձրացրեց:

— Ձէնդ կարիր, շան քած... թէ չէ... դարձաւ թուրքերից մէկը նրան:

— Թէ չէ, ի՞նչ... դու ո՞վ ես...

— Աչքդ հանողը:

— Դէհ, հանիր, հանիր տեսնեմ, ո՞նց ես հանում... դէհ, հանի՛ր... ասաց նա առաջ դալով, ձեռքի մէկը կողքին դրած, միւս ձեռքի մատով չռելով աչքը... |||

— Հանիր... հանիր... ձեզպէսներին շատ եմ տեսել...

Երրորդը, որ ամենից երիտասարդն էր, զուլսը կախ կանգնած էր տախտի մօտ և կրժոտում էր ներկած շրթունքները:

— Օյ... օյ... օյ... յ...— Տնքում էր գետնին ընկածը:

— Սատկիր, շան աղջիկ... քո հէրն անիծած:

— Ծուներ ինքդ ես... շան որդի...

Բժիշկը դուրս եկաւ, նրա ետևից ամբողջ խումբը:

— Էգպէս, ոսպ եղէք, յետևներիցդ մարդ չէինք ուղարկել... ուզում էք՝ եկէք, չէք ուզում՝ շառ ու ջհանդամը գնացէք:...

Թուրքերը հոհուալով հետևում էին սա

նիաարների խմբին: Մէկը պատմում էր, որ  
 օրը ցերեկով, երեկոյեան, նստում են դռան  
 առաջ և զնացող եկողի թևից քաշում... զէն,  
 ջահիլներ են, խելքից հանում են, ինչքանն է  
 հիւանդացել, քանի՛ սր: Մի տեղից ոստիկա-  
 նութիւնը քշում է, մի ուրիշ տեղ են զնում...  
 Չենք իմանում ի՞նչ անենք... էլ անզգամնե-  
 րի հետ:



### Յ Ա Ն Կ

	երես.
1. Երեք կույէկ. . . . .	1
2. Խրուհիակր. . . . .	9
3. Գարեջրատանը. . . . .	15
4. Սև քաղաքում . . . . .	26
5. Նորդ . . . . .	33
6. Գանդէ. . . . .	35
7. Մանկական լիշողութիւններից. . . . .	45
8. Գնանք . . . . .	54
9. Վրէժ. . . . .	61
10. Մեռելների կենդանի ընկերները . . . . .	66
11. Տաք կերակուր. . . . .	76
12. Բարեկամիս կինը. . . . .	86
13. Ընկերներ . . . . .	100

### Ս Ա Բ Ո Ւ Ն Չ Ո Ւ Ս

14. Գոնապան Յարութը . . . . .	111
15. Երկուշաբթի . . . . .	118
16. Երկաթ հաւաքողներ . . . . .	123
17. Համերգ . . . . .	132
18. Նրա սենեակը . . . . .	138
19. Տնւորը . . . . .	142
20. Փակ դուռը . . . . .	152

երես.

1. Երեք կուպէկ . . . . .	1
2. Խրաւիկակր . . . . .	9
3. Գարեջրատանր . . . . .	15
4. Սև քաղաքում . . . . .	26
5. Նորդ . . . . .	33
6. Գանգէ . . . . .	35
7. Մանկական յիշողութիւններից . . . . .	45
8. Գնանք . . . . .	54
9. Վրէժ . . . . .	61
10. Մեռելների կենդանի ընկերները . . . . .	66
11. Տաք կերակուր . . . . .	76
12. Բարեկամիս կինը . . . . .	86
13. Ընկերներ . . . . .	100

Ս Ա Բ Ո Ւ Ն Չ Ո Ւ Ս

14. Դոնապան Յարութր . . . . .	111
15. Երկուշաբթի . . . . .	118
16. Երկաթ հաւաքողներ . . . . .	123
17. Համերգ . . . . .	132
18. Նշա սենեակր . . . . .	138
19. Տուորը . . . . .	142
20. Փակ դուռը . . . . .	152



Դ Ի Մ Ե Լ հայ գրավաճառներին

Պ Ա Հ Ե Ս Տ Ը Москва, Армянскій пер., д.  
Армянской церкви, Архи-  
діакону Симеоняну.

«Ազգային գրադարան»



NL0350461

42007